Azg Ազգ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2008 ՇԱԲԱԹ 187 (4081)

«Բանակցությունները Անկարայի, Բաքվի եւ Երեւանի միջեւ կվերսկսվեն ընտրություններից հետո»

Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Խոլոսի Քըլըջն հայտարարել է, որ Ադրբեջանի նախագահական ընտրություններից հետո Անկարայի, Բաքվի եւ Երեւանի միջեւ կվերսկսվեն եռակողմ բանակցությունները: Ինչպես նշել է դիվանագետը, սեպտեմբերի սկզբին Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի Հայաստան այցից հետո, որի ընթացքում քննարկվել են ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղիները, բոլոր ազդեցիկ միջազգային կառույցներն սկսել են ակտիվացնել այդ հակամարտության լուծման իրենց ջանքերը: «Նախ եւ առաջ Թուրքիան է շահագրգռված ղարաբաղյան հակամարտության լուծմամբ, որովհետեւ, եթե տարածաշրջանում կայունություն ու խաղաղություն լինի, հարեւան երկրների միջեւ համագործակցությունն ավելի առաջ կգնա», ընդգծել է Թուրքիայի դեսպանը: «Ես հուսով եմ, որ երբեմն երկրների ջանքերով մենք կկարողանանք լուծել բոլոր խնդրահարույց հարցերը, որոնք մինչեւ այժմ չլուծված էին մնում», նշել է Քըլըջը, հավելելով, որ, այդուամենայնիվ, Թուրքիան «միշտ կդաշտպանի Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը», հաղորդում է «Արմենպրեսը»:

«Երեւանն ամբողջությամբ դուրս է եկել ժամանակակից զարգացման ուղի»

Երեւանի օրվա տոնակատարության բացմանը փաստեց Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը

Երեկ մեկնարկեցին Երեւանի հոբելյանական տարեդարձին՝ 2790-ամյակին նվիրված միջոցառումները: Տոնակատարության հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում՝ Ամենայն հայոց հայրապետի, Ազգային Ժողովի նախագահի, Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, նախարարների, Երեւանի քույր քաղաքներից ժամանած ներկայացուցիչների եւ հանդիսությանը մասնակից բազմաթիվ այլ հյուրերի ներկայությամբ: Բացման խոսքով հանդես եկավ Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը, ներկայացնելով վերջին տարիներին մայրաքաղաքում իրականացված մեծածավալ աշխատանքներն ու առկա խնդիրները, դրանց լուծման հեռանկարները:

«Կենսագործունեության հիմնական ոլորտներում հաղթահարելով անկախության առաջին տարիների դժվարությունները, Երեւանն այսօր ամբողջությամբ դուրս է եկել ժամանակակից զարգացման ուղի», իր ելույթում փաստեց Երվանդ Զախարյանը, մատնանշելով դրա առարկայական ապացույցները՝ 2005-ից ուժի մեջ մտած մայրաքաղաքի գլխավոր հատակագիծը, մայրաքաղաքի դեմքն ու կենցաղն ապահովող ենթակառուցվածքների հիմնական հատվածի վերականգնումն ու զարգացումը, գազաֆիկացումը, որի մակարդակով Երեւանը առաջին տեղերից մեկն է ԱՊՀ երկրների մայրաքաղաքների շարքում, ջրամատակարարման վիճակի էական բարելավումը, 1000-ից ավելի փողոցների, պուրակների, հուշարձանների լուսավորումը, ընդգրկելով քաղաքի 90 տոկոսից ավելին, մայրաքաղաքի շուրջ 500 կմ երկարությամբ ոռոգման ցանցի վերականգնումը:

Տես էջ 2

ԲԻՇՔԵԿ

Ղրղզստանում աշխատանքներն է սկսել ԱՊՀ-ի ղեկավարների խորհրդի նիստը

Նախագահ Սերժ Սարգսյանը Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում մասնակցել է ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների խորհրդի նիստին: Նիստում քննարկվել եւ ընդունվել է մինչեւ 2020 թվականն ԱՊՀ երկրների տնտեսական զարգացման ռազմավարությունը: Նիստում քննարկվել է մինչեւ 2020 թվականն ԱՊՀ անդամ երկրների համագործակցության ուղղությունները տրանսպորտի ոլորտում: 2008 թվականի փետրվարին ԱՊՀ երկրների ղեկավարների ոչ պաշտոնական հանդիպման ընթացքում որոշվել էր հաջորդ տարվա համար ԱՊՀ պետությունների համագործակցության գլխավոր ոլորտ համարել էներգետիկան, ուստի պետությունների ղեկավարներն ընդունել են 2009 թվականին էներգետիկայի ոլորտն ԱՊՀ երկրների համագործակցության առանցքային ոլորտ համարելու փաստաթուղթը: Ընդունվել է նաեւ ԱՊՀ երկրների միջսահմանային համագործակցության կոնվենցիան: Ղրղզստանի մայրաքաղաքում նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է նաեւ Եվրասիական տնտեսական ընկերակցության միջպետական խորհրդի նեղ կազմով նիստին: Քննարկումները հետագայում շարունակվելու են ընդլայնված կազմով: Այս կազմակերպությունում Հայաստանը դիտորդի կարգավիճակ ունի:

Բիշքեկում տեղի է ունեցել Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի արտգործնախարարների հանդիպումը

ԱՊՀ գագաթաժողովի շրջանակներում տեղի է ունեցել եռակողմ հանդիպում՝ Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի արտգործնախարարների մասնակցությամբ: Հանդիպումից հետո, պատասխանելով հարցին, նախարար Էդվարդ Նալբանդյանն ասել է, որ հանդիպմանը քննարկվել են ԼՂ-ի հիմնախնդրի կարգավորման բանակցային մանրամասները, որոնք ընթանում են Մինսկի խմբի համանախագահների, մադրիդյան առաջարկությունների հիման վրա: Նա հավելել է. «Ինչ վերաբերում է այն հայտարարություններին, թե ԼՂՀ հիմնախնդրի կարգավորման առանցքային հարցերը համաձայնեցված են, ես նորից կցանկանայի կրկնել, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առանցքային հարցը ԼՂ-ի կարգավիճակի հարցն է, որը պետք է լուծվի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողմից իր կամքն ազատ արտահայտելու միջոցով: Եվ եթե հնչում են կարծիքներ, որ առանցքային հարցերը լուծված են, ապա կարելի է եզրակացնել, որ հենց այդ հարցերում փոխըմբռնում կա»:

Դրսում՝ հանգանակություն, ներսում՝ լռություն

Երեկ մեր ձեռքն անցավ Ամերիկայի հայ ազգային հանձնախմբի (Հայ դաս, ՀՅԴ) ատենապետ Քեն Խաչիկյանի անգլերեն շրջաբերականը՝ «Բարեւ, ընկեր» դիմելաձեւով: Հաստատելով, որ պատշտոնական Երեւանը հանուն խաղաղության մեծ ռիսկի է դիմում, այն էլ՝ Ցեղասպանության երկարատեւ ազդեցության, դաժան շրջափակման եւ հակահայ ատելավառ քաղաքականության պայմաններում, Խաչիկյանը գրում է. «Նույնիսկ, երբ գրում եմ ձեզ, Անկարան Հայաստանի բարի կամքի արտահայտությունը շոտ է տալիս ընդդեմ Հայոց ցեղասպանության ճանաչման»:

«Գաղտնիք չէ, գրում է նա, որ Թուրքիայի արտգործնախարարը յոտահանչյոտին, ով ցանկություն ունի լսելու, ասում է. «Քո գործով զբաղվիր», քանի որ Հայաստանի հետ «բանակցությունները» **սպանելու են Հայոց ցեղասպանության բանաձեւը**»: Վերջին՝ ընդգծված խոսքերին, ինչպես միշտ, հաջորդում է նվիրատվություն կատարելու կոչը. «Սկսված թուրքական հարձակման դիմաց (...) մենք ավելի քան երբեւէ կարիք ունենք քո ֆինանսական աջակցությանը: Խնդրեմ, ուղարկիր քո ապահով on-line նվիրատվությունն այսօր՝ 50, 100, 250 դոլար կամ ինչքան որ կարող ես»:

Ադրբեջանը պետք է տուգանք վճարի հայ քաղաքացուն

Ըստ «Արմենպրեսի», Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) պարտադրել է Ադրբեջանի կառավարությանը՝ 12,5 հազար դոլար տուգանք վճարել եւ վերականգնել ազգությամբ հայ քաղաքացի Վալենտինա Ակիմովայի ունեցվածքի իրավունքը, որի Բաքվում գտնվող բնակարանը 1990-ականներին ապօրինաբար զբաղեցրել է ադրբեջանցի փախստականը: Ադրբեջանական «Բաքինսկի Ռաբոչի» հայտնել է, որ Ադրբեջանի քաղաքացի Վալենտինա Ակիմովան 90-ականներին բնակարան է ստացել Բաքվում, սակայն մինչ նրա բնակարանամուտը ղարաբաղյան իրադարձությունների ժամանակ այն ապօրինաբար զբաղեցրել է Աղդամից փախստական ընտանիքը: Ակիմովան դիմել է Ադրբեջանի բոլոր դատական ատյաններին եւ ստացել որոշում, որ փախստականները դուրս կբերվեն բնակարանից «Ադրբեջանի գրավյալ տարածքների ազատագրումից հետո»: Ակիմովան որոշել է դիմել ՄԻԵԴ: Նա խնդրել է փոխհատուցել իրեն հասցված բարոյական եւ նյութական վնասը: ՄԻԵԴ-ը պարտադրել է Ադրբեջանի կառավարությանը՝ տուգանք վճարել եւ վերականգնել Ակիմովայի իրավունքը իր բնակարանի նկատմամբ:

Ամերիկան ու Հայաստանը շա՞տ նման են

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Չնայած Շվեյցարիան 700 տարվա ժողովրդավարություն ունի (այդպես ասացին շվեյցարացի խորհրդարանականները) եւ օմբուդսմեն չունեն, քանի որ դրա կարիքը չկա, մարդու իրավունքների հետ կապված այդ երկրում ամեն ինչ կարգին է, այնուամենայնիվ Շվեյցարիան ու Հայաստանն իրար շատ նման երկրներ են՝ փոքր տարածքներ ունեն, ծով չունեն, գեղեցիկ բնություն ունեն երկուսն էլ եւ արժե, որ համագործակցեն: Այս տեսակետին էին Շվեյցարիայի Դաշնային ժողովի Շվեյցարիա-Հայաստան խորհրդարանական բարեկամության խմբի համանախագահներ Ուելի Լոյենբերգերն եւ Դոմինիկ դը Բյումանը, որոնք Հայաստան-Շվեյցարիա հայ խորհրդարանական խմբի նախագահ Արա Բաբլոյանի հետ երեկ Ազգային ժողովում հանդիպեցին լրագրողներին: Վերջինս ներկայացնելով բարեկամության խմբի անդամներին, հատկապես երկու համանախագահներին՝ ասաց, որ խումբը Հայաստան է ժամանել հոկտեմբերի 8-ին եւ կմնա մինչեւ հոկտեմբերի 13-ը, սա նրա առաջին այցելությունն է: Շվեյցարիայի Դաշնային ժողովը իր կառուցվածքում այդպիսի խումբ ստեղծելու հրամայական չունի, այս խումբը ստեղծվել է հատկապես Հայաստանի հետ բարեկամական կապերը զարգացնելու համար, իսկ Հայաստանում խմբին ընդունել են Հայաստանի նախագահը, ԱԺ նախագահը, արտաքին գործոց, էկոնոմիկայի նախարարները, այլ գերատեսչությունների ղեկավարների եւ ընդդիմության հետ են հանդիպումներ եղել, իսկ երեկ Հայաստանում ԼՂՀ ներկայացուցչությունում ԼՂՀ պատվիրակության հետ նույնպես խումբը հանդիպել է: Ցեղասպանության թանգարան եւ հուշարձան այցելելով՝ խումբը ծաղկեպսակ է դրել հուշահամալիրին, ապա եւ ծառ տնկել հուշահամալիրի ծառուղում: Ի դեմ, համանախագահները Շվեյցարիայի Դաշնային ժողովում Ցեղասպանության ճանաչման օրինագծի հեղինակներից են, այդ իմաստով՝ թանգարանի վավերագրերը նրանց համար փաստական նյութ եղան:

Շվեյցարիա-Հայաստան խորհրդարանական խմբի անդամները Երեւանում ԼՂՀ մշտական ներկայացուցչությունում

Տես էջ 3

Շվեդիայի խորհրդարանը կրկին կքննարկի Հայոց ցեղասպանության հարցը

Շվեդիայի խորհրդարանական ընդդիմությունը վերսին հանդես է եկել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու օրենսդրական առաջարկությամբ: Շվեդիայի խորհրդարան ներկայացված օրենսդրական առաջարկության մեջ ասվում է, որ 1915-ին տեղի ունեցած Հայոց ցեղասպանության ժամանակ Օսմանյան Թուրքիայում ցեղասպանություն է կատարվել նաեւ ասորիների եւ պոնտոսյան հույների նկատմամբ: Խորհրդարան ներկայացրած ընդդիմության առաջարկության մեջ պնդում կա, որ 1915-ին 1,5 մլն հայեր, 500 հազար ասորիներ, քաղդեացիներ եւ պոնտոսյան հույներ են սպանվել: Հայոց ցեղասպանությունը նորից օրակարգ մտցրած շվեդ խորհրդարանականները օրենսդրական առաջարկը ներկայացրել են Օսմանյան Թուրքիայում օտարերկրյա դեսպանների՝ հայկական իրադարձությունների հետ կապված նամակների հիման վրա:

Խաղաղության Նոբելյան մրցանակը կհանձնվի Մարտի Ահտիսաարիին

Խաղաղության այս տարվա Նոբելյան մրցանակակիր դարձավ Ֆինլանդիայի նախկին նախագահ Մարտի Ահտիսաարին՝ ՄԱԿ-ի դիվանագետ եւ միջնորդ, որը հայտնի է միջազգային խաղաղության ամրապնդման ջանքերով եւ Կոսովոյի հարցով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ բանագնացը էր: Անցած տարի խաղաղության Նոբելյան մրցանակի արժանացան Միացյալ Նահանգների նախկին փոխնախագահ Ալ Գորն ու ՄԱԿ-ի կլիմայի փոփոխություններով զբաղվող փորձագետների միջկառավարական խումբը՝ գլոբալ ջերմացման մասին գիտելիքներ տարածելու եւ դրա դեմ պայքարելու համար:

«Երեւանն ամբողջությամբ դուրս է եկել ժամանակակից զարգացման ուղի»

1-ին էջից

«Մենք շատ անելիքներ ունենք բնապահպանության հարցերում», ասաց Երեւանի քաղաքապետը, հավելելով, որ մեր քաղաքն աշխարհագրական այնպիսի գոտում է գտնվում, որտեղ կանաչ տարածքների պահպանումը բազմապատիկ ավելի ծախսատար է: Չնայած այդ հանգամանքին, 2003-2008 թթ. ընթացքում մայրաքաղաքում ստեղծվել է շուրջ 30 նոր զբոսայգի եւ պուրակ, մեկ շնչին հասնող հանրային նշանակության կանաչ տարածքը 90-ականների սկզբի 4,9 քառակուսի մետրից 2008-ին հասել է 7,2 քառակուսի մետրի: Այս տարի շահագործման հանձնվող Երեւանի քաղաքային տնկարանի շնորհիվ էլ այսուհետեւ քաղաքի կանաչապատումը կիրականացվի բացառապես այստեղ աճեցված բուսատեսակներով:

Մայրաքաղաքի տրանսպորտային խնդրին անդրադառնալով, Երվանդ Զախարյանը կարեւորեց ամբողջովին ոչնչացված ավտոբուսային պարկի վերականգնումը եւ վերջին տարիներին շուրջ 400 միավոր ավտոբուսների ներմուծումն ու գործունեությունը Երեւանի երթուղիներում:

«Քաղաքաշինության բնագավառում նշանակալի իրադարձություն էր Հյուսիսային պողոտայի կառուցումը, որին սպասել էինք բազում տասնամյակներ: Այն անմիջապես դարձավ մեր հասարակության սիրելի վայրերից մեկը նույնիսկ ընդդիմախոսների համար: Այսօր արագորեն կառուցապատվում է Կենտրոնի համալիրն ամբողջացնող Գլխավոր պողոտան», քաղաքաշինական այս՝ ամենանշանակալի կառույցների մասին խոսելով, քաղաքապետը շարունակեց թվարկել մյուսները՝ փողոցների թողունակության բարձրացմանն ու տրանսպորտային հաղորդակցության թեթեւացմանն ուղղված ծրագրերը Բաղրամյան, Օրբելի, Խանջյան, Մյասնիկյան պողոտաներում, «Այրարատ» կինոթատրոնին հարակից տրանսպորտային մեծ խաչմերուկում: Հայ մեծ բարերար Ջրֆ Ջրֆորյանի «Լինսի» հիմնադրամի կողմից «Երեւանին մեծ նվեր» Երվանդ Զախարյանը համարեց Սարալանջի արագընթաց մայրուղու շահագործման հանձնումը, որը ավարտին հասցվեց երկու տարում: Միաժամանակ, քաղաքապետը հիշատակեց նաեւ պետական բյուջեի միջոցներով Մյասնիկյան, Հերացու փողոցները եւ Աբովյան պուրակը միացնող խաչմերուկում տրանսպորտային թունելի շինարարությունը:

«Առաջիկայում կավարտվեն Գետառի նախկին հունով անցնող նոր ճանապարհի վերջին հանգույցների շինարարական աշխատանքները: Դրանով կամբողջանա մայրաքաղաքի փոքր կենտրոնը շրջանցող առաջին արագընթաց ուղին՝ «Այրարատ» կինոթատրոնից, Սարալանջի ճանապարհով մինչեւ Կոմիտասի պողոտա եւ Դավթաշենի կամուրջ: Այն էականորեն կփոխի տրանսպորտային հաղորդակցության վիճակը քաղաքի երթեւեկության ամենալարված հատվածներից մեկում, թեթեւացնելով նաեւ կենտրոնական մյուս փողոցների ծանրաբեռնվածությունը», հավաստիացրեց Երվանդ Զախարյանը, նշելով, որ մայրաքաղաքում ընթացող բոլոր շինարարական աշխատանքները իրականացվել են եռահերթ աշխատանքային գրաֆիկով:

Երեւանի համար կարեւորագույն խնդրի՝ մետենաների կայանատեղերի հարցի մասին խոսելով, քաղաքապետը նշեց, որ խորհրդային տարիներից ի վեր անուշադրության մատնված այս հարցի վրա Երեւանի քաղաքապետարան կատարած այցի ժամանակ ուշադրություն հրավիրեց եւ հանձնարարություն տվեց հանրապետության նախագահը: Երեւանի կենտրոնում արդեն սկսվել է ժամանակակից քաղաքաշինական սկզբունքներին համապատասխան ստորգետնյա ավտոհանգրվանների ծավալում շինարարությունը:

Պետական ներդրումներ են կատարվում սոցիալական շինարարության ոլորտում: Այս տարի 4-րդ աստիճանի վթարայնության, քանդման ենթակա շենքերի բնակիչներին նոր բնակարանով ապահովելու նպատակով շահագործման կհանձնվի եւ 2 բազմահարկ բնակելի շենք՝ նախատեսված 100 ընտանիքի համար: Շարունակվում են 3-րդ կարգի վթարային շենքերի վերակառուցման ծրագրի աշխատանքները, այս տարի ամրացվել է եւ 10 շենք: Երեւանի քաղաքապետի հիշատակած մեկ այլ սոցիալական նշանակության նախագիծ էլ, որն իրականացվում է 2007 թվականից հանրապետության նախագահի անմիջական նախաձեռնությամբ, մայրաքաղաքի վերելակների հիմնանորոգման 3 մլրդ դրամ արժողությամբ ծրագիրն է:

Շարունակելով ելույթը, Երվանդ Զախարյանը թվարկեց այն խոշոր նախագծերը, որոնք պետք է իրագործվեն «սահմանված ժամանակացույցով»: Մասնավորապես, քաղաքապետի հավաստմամբ, կառուցապատվելու են մայրաքաղաքի կենտրոնում գտնվող խարխուլ եւ այսօրվա կենցաղի ու քաղաքաշինության ոչ մի չափանիշի չհամապատասխանող Կոնդի, Կոզեռնի, Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն հարակից, 30-րդ թաղամասերը: Օդանավակայանից Աջափնյակ կձգվի ամբողջովին նոր մայրուղի, շարք կմտնեն նոր թաղամասեր՝ ժամանակակից կառուցապատմամբ: Կոնկրետ քննարկումներ են ընթանում Երեւանի մետրոպոլիտենի հետագա զարգացման ուղղությամբ, «ամենամոտ ապագայում» կվերսկսվի մետրոպոլիտենի Աջափնյակի կայարանի կառուցումը:

Քաղաքապետի ելույթին հաջորդեց տոնական համերգը Հայաստանի ճանաչված երգիչ-երգչուհիների, հայտնի կոմպոզիտորների, դերասանների եւ մշակույթի այլ գործիչների մասնակցությամբ:

Ա. Մ.

Գյումրու քաղաքապետի չորս, ավագանու անդամի 52 թեկնածու

Հոկտեմբերի 26-ին Շիրակի մարզում կայանալիք ՏԻՄ ընտրություններում Գյումրու համայնքապետի թեկնածու է գրանցվել չորս մարդ՝ գործող քաղաքապետ, ՀՀԿ անդամ Վարդան Ղուկասյանը, ԱԺ երիտասարդ պատգամավոր, անկուսակցական Մարտուն Գրիգորյանը, ԱԻՄ անդամ, քաղաքապետարանի աշխատակից Դանիել Դարբինյանը եւ նախկին դաշնակցական, այժմ անկուսակցական, դպրոցի տնօրեն Կարապետ Ներսիսյանը: Ծավալված նախընտրական քարոզչությունը, գոնե քարոզչապաստառների եւ լուսաբանվող հանդիպումների առումով, առայժմ անհամեմատ ակտիվ է առաջին երկու թեկնածուների պարագայում, ինչն ըստ ամենայնի պայմանավորված է ֆինանսական հնարավորությունների եւ ունեցած լծակների տարբերությամբ:

Համայնքային ավագանու անդամի 15 տեղերին հավակնում են 52 թեկնածուներ: Ըստ գրանցված տվյալների՝ նրանց թվում շատ փոքր տոկոս են կազմում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները եւ մտավորականությունը: Թեկնածուներից ընդամենը երկուսն են հասարակական կազմակերպության եւ մեկ-երկուսը՝ կուսակցական կառույցի ղեկավար: Որեւէ կուսակցության անդամ են 21-ը, այդ թվում 10՝ ՀՀԿ-ական, իսկ 31-ն անկուսակցական են: Թեկնածուներից 16-ը կամ ընդհանուր թվի 31 տոկոսը որեւէ հիմնարկի ղեկավար են, 3-ը՝ տեղական: 6-ը գազի, լույսի, հարկային տեսչության եւ այլ ծառայությունների ներկայացուցիչներ են, 5-ը՝ անհաս ձեռներեցներ, 10 չեն աշխատում: Կա նաեւ մեկական դպրոցի ֆիզկուլտդասատու եւ իոլեջի դասատու, գիտերիկի եւ եվրոպական իոլեջի մեկական տնօրեն, Գյումրու մանկավարժական ինստիտուտի երեք դասախոս:

Գ. Մ.

Ցմահ ազատազրկվածները 76-ն են

Վերջին 5 տարիներին Հայաստանում ցմահ ազատազրկման են դատապարտվել 33 անձինք, «Նոյյան տապանին» հայտնել է արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի մամուլի քարտուղար Արսեն Բաբայանը: Ըստ նրա, 2008-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պատիժ են կրում 76 ցմահ դատապարտվածներ, որոնց դատավճիռները օրինական ուժ են ստացել Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո: Հայաստանում ցմահ ազատազրկման դատապարտված բոլոր անձինք արական սեռի ներկայացուցիչներ են: Նրանցից ամենաերիտասարդները 23 տարեկան են՝ 4 անձ, իսկ ամենատարեցները 2-ն են՝ 61 տարեկան: Ա. Բաբայանի տեղեկացմամբ, ցմահ դատապարտվածների շրջանում մինչ այժմ գրանցվել են փախուստի 4 փորձ եւ 2 փախուստ. նրանք բոլորն էլ այժմ գտնվում են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում:

Մահափորձ Արսեն Էլբակյանի դեմ

Ըստ Մոսկվայի դատախազության, մոսկվաբնակ հայտնի հայազգի դերասան Արմեն Ջիգարխանյանի հիմնադրամի տնօրեն 47-ամյա Արսեն Էլբակյանի նկատմամբ անհայտ անձը մահափորձ է կատարել: Ըստ «Նոյյան տապանի», դեպքը տեղի է ունեցել հոկտեմբերի 9-ին, Մոսկվայի Վերնադսկու պողոտայում՝ Ջիգարխանյանի թատրոնի հարեւանությամբ: Էլբակյանի վրա չորս կրակոց է արձակվել, նա վնասվածքներով տեղափոխվել է Մոսկվայի Սկլիֆոսովսկու անվան հիվանդանոց եւ վիրահատվել է: Ներկայումս Էլբակյանի վիճակը բավարար է: Հանցագործի անձը եւ հանցագործության դրդապատճառները դեռեւս պարզված չեն: Ռուսաստանի քրեական օրենսգրքի 105 հոդվածի երրորդ մասով՝ «սպանության փորձ», հարուցված քրեական գործի քննությունը վերահսկում է Մոսկվայի դատախազության քննչական վարչության ղեկավար Անատոլի Բակմետը: Ավելի ուշ Արմեն Ջիգարխանյանը հերքել է իր անունով հիմնադրամի գոյության փաստը:

ԿՐԹՕՉԱԽ

Սերունդների հերթափոխ

Աստղագիտության բաց դաս՝ նվիրված Վիկտոր Համբարձումյանին

Տարին առանձնահատուկ է հոբելյանական մեծությունների առումով: Այս օրերին մեծ հանդիսություններ, գիտաժողովներ են կազմակերպվում, հաղորդումներ ու հրապարակումներ են արվում երեք մեծ հայորդիների՝ Վազգեն Ա Վեհափառի, Վիկտոր Համբարձումյանի, Վիլյամ Սարոյանի 100-ամյակներին նվիրված: Ուրախալին այն է, որ մեր մեծերը պատշաճորեն հիշվում են նաեւ կրթօջախներում եւ արժեքավոր է, երբ դա արվում է ոչ թե հարեւանցիորեն, այլ ըստ էության:

ARMENPRESS

Երեւանի Ս. Կաթուղիկյանի անվան թիվ 145 դպրոցը բաց դասերի օրինակելի փորձ ունի: Դրանցից վերջինը երեկվա ավարտական դասարանի աստղաֆիզիկայի բաց դասն էր՝ Վիկտոր Համբարձումյանի մեկդարյա հոբելյանին նվիրված: Ուսուցչուհին՝ դպրոցի տնօրեն Ժաննա Թադեւոսյանը դասը ներկայացրեց իբրեւ զրույց: Աշակերտների ակտիվ մասնակցությամբ նա մեկ դասաժամի ընթացքում հրաշալի ներկայացրեց հայ մեծանուն գիտնական Վիկտոր Համբարձումյանին՝ ամենատարբեր ասպեկտներով՝ իբրեւ մտավորական, ազգային-հասարակական գործիչ, իբրեւ հայ, մանկավարժ, իբրեւ մարդ:

Սեպտեմբերի կեսերին դասարանը այցելել էր Բյուրականի թանգարան, ծանոթացել մեծ գիտնականի կյանքի ու գործունեության մանրամասներին, եղել աստղադիտարանում, թանգարանում: Երեկվա դասը հաճախ էր ընդհատվում բյուրականյան տպավորություններով՝ աստղադիտակի, դեպի թանգարան տանող ծառուղու, որի ծառատեսակները ժամանակին բերել էին Ռուսաստանից՝ ստեղծելու ռուսական միկրոկլիմա (Վ. Համբարձումյանի կինն ազգությամբ ռուս էր), մարդու ուղեղ հիշեցնող մուտքի մոտ դրված գրանիտե խոշոր բնական քանդակի, Համբարձումյանների տոհմական գերեզմանի, որտեղ հանգչում է մեծ հայը:

Դասասենյակի դաշտային նուրբ ծաղիկները, տնօրենի՝ հյուրերին դասավարից հետո առաջարկվող մասուրի թեյը նույնպես մթնոլորտ, տրամադրություն էին ստեղծում. Վ. Համբարձումյանը սիրել է դաշտային ծաղիկներ եւ մասուրի թեյ:

Աշակերտները համառոտ, բայց ամփոփ ներկայացրին գիտնականի ծագումը, ընտանիքը, ուսումնառության շրջանը, գիտական կենսագրությունը, անդրադարձան ամենաուշագրավ տարեթվերին՝ 1943, երբ բացվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, որի փոխնախագահը, ավելի ուշ 2-րդ նախագահը Վ. Համբարձումյանն է (առաջինը՝ Հովսեփ Օրբելին էր), ապա 1946-ին, երբ բացվեց Բյուրականի աստղադիտարանը: Ուսուցչուհու եւ աշակերտների խոսքն ուղեկցվում էր համապատասխան լուսանկարներով, տեսանյութերով:

70-ականներին Մոսկվայում տեղի ունեցած մի գիտաժողովի ընթացքում նշանավոր մի շարք գիտնականների, այդ թվում նաեւ Գրիգոր Գուրզադյանի կարծիքները Վ. Համբարձումյանի մասին, ըստ Աշոտ Արզումանյանի «Բյուրականի միջօրեականներում» գրքի, աշակերտները ներկայացրին բեմականացմամբ, որը մտահղացել եւ վարում էր դասարանից ԵՊՀ աստղաֆիզիկայի բաժնի միակ դիմորդ Արփի Հարությունյանը:

Ուշագրավ էր եւ դրվատելի դասը վարող Ժաննա Թադեւոսյանի մատուցման եղանակը՝ բովանդակալից, ակտիվ, անմիջական, հրաշալի հայերենով, իսկ ամենակարեւորը՝ սիրով: Նա ֆիզիկայի, աստղաֆիզիկայի եւ փիլիսոփայության ու գրականության միջեւ ուշագրավ զուգահեռներ անցկացրեց: Հիշատակեց Վիկտոր Համբարձումյանի մեծ սերը դեպի պոեզիան, մասնավորապես Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունը: Դասը բանաստեղծական շունչ առավ: Լավ էր մտածված նաեւ դասավարտը. հնչեցին Վիկտոր Համբարձումյանի պատգամներից եւ նրա կյանքը: Իսկ կյանքը, իրոք, մեծ մարդուն հատուկ վերջին խոսք էր. «Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ, իսկ գաղափարների մեջ ամենաթանկը հայոց լեզուն է»:

ՄԵԼԻՆԱ ԲԱԴԱԼՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 71 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960
Լուսագրների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 52[illegible]35
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Մեկնաբանություն

Զուրաբյանը բացահայտումներ է խոստանում հոկտեմբերի 17-ի հանրահավաքին

Երեկ «Փաստարկ» մամուլի ակումբում հյուրընկալված Հայ ազգային կոնգրեսի կենտրոնական գրասենյակի համակարգող Լևոն Զուրաբյանը հանդես եկավ երկու հայտարարությամբ:

Առաջինը վերաբերում է հոկտեմբերի 17-ի հանրահավաքին, որի ժամանակ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը կներկայացնի Հայաստանում ստեղծված իրավիճակին վերաբերող «կարևորագույն» բացահայտումներ, ինչպես նաեւ գործողությունների ծրագիր: Մասենադարանի մոտ տեղի ունենալիք հանրահավաքից հետո տեղի կունենա նաեւ երթ:

Երթ անցկացնելը, ըստ ընդդիմադիր գործչի, նաեւ սկզբունքի հարց է իրենց համար, քանի որ մարտի 1-ից ի վեր իշխանությունները ոչ մի երթ չեն թույլատրել (բայց իրենք երթ կազմակերպել են) եւ իրենք խնդիր ունեն վերականգնելու հասարակության երթ անելու իրավունքը:

Այնուհետեւ անդրադառնալով երթի անվտանգությունն ապահովելու համար ոստիկանության հետ համագործակցությանը, Լ. Զուրաբյանն ասաց, թե օգոստոսի 25-ից ի վեր ոստիկանության գործողություններն ավելի ագրեսիվ են դարձել եւ համագործակցությունը առաջվա նման չի ստացվում, սակայն իրենք պատրաստ են նման հարցում համագործակցել ոստիկանների հետ:

Երկրորդ հայտարարությունը վերաբերում է քաղաքանտարկյալների ազատ արձակմանը եւ մարտի 1-ի դեպքերի հետաքննությանը:

«Մենք կարեւոր ենք համարում ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի հոկտեմբերի 2-ի հայտարարությունը՝ ուղղված մեր իշխանություններին, որը պահանջում է դադարեցնել քաղաքական կամք եւ ազատ արձակել քաղբանտարկյալներին»:

Հայտարարությունում նաեւ նշված է, որ իշխանություններն իրենց «հանցագործությունների շարքում մտածել են իրականացնել մի նոր հրեշավոր հանցավորություն»: Խոսքը վերաբերում է յոթ քաղբանտարկյալների գործի նախաքննությանը: Նախաքննական մարմինը մարտի 1-ի բոլոր տուժածներին, այդ թվում՝ բոլոր զոհերին, ընդգրկել է գործում որպես տուժողների:

Խոսելով այն մասին, որ ժողովուրդը հանրահավաքների գալով, ակնկալում է լսել վճռական գործողությունների մասին, Զուրաբյանը նշեց, որ իրենք ցանկանում են ժողովրդի մտածելակերպից հանել այն միտքը, որ մեկ օրում կարելի է լուծել բոլոր հարցերը: «Անգամ եթե մենք հասնենք մեր նպատակին, եւ լինեն արտահերթ նախագահական ընտրություններ ու ՀԱԿ-ը հաղթի, դա կլինի միայն սկիզբը, եւ դրանով դեռ Հայաստանում ժողովրդավարություն չի կառուցվի: Մենք իրավունք չունենք շենքեր գրավելու, դրանով մենք կվտանգենք ապագա ժողովրդավարությունը»: Լեւոն Զուրաբյանը տեղեկացրեց, որ իրենք հանդիպել են ամերիկացի փորձագետների հետ, ովքեր պարզ ասել են, որ լուրջ փորձառություն ունեն եւ ցանկանում են այդ փորձառությունը փոխանցել իրենց:

Լեւոն Զուրաբյանը հանդիպման ժամանակ նշել է, որ եթե ԱՄՆ-ում նման խնդիր ծագեր, ապա համապատասխան հանձնաժողովում ներկայացված կլինեին հավասար քանակով Հանրապետական եւ Դեմոկրատական ներկայացուցիչներ:

«Իսկ եթե մեզ մոտ ստեղծվող մարտի 1-ի փաստահավաք խմբում ներկայացված չլինեն հավասար քանակով իշխանության եւ ընդդիմության ներկայացուցիչներ, ինչպես նաեւ լիազորություններ չտրվեն՝ վկաներ կանչելու եւ հարցաքննելու կամ ձեռք բերելու փաստաթղթեր, ձայնագրություններ ու տեսագրություններ, ապա դա ընդամենը ֆարս է լինելու», ասում է Զուրաբյանը:

Լեւոն Զուրբյանի մատուցմամբ՝ իրենք պատրաստ են ընդգրկվել հանձնաժողովի մեջ, եթե իրենց առաջարկեն:

Խոսելով տեսագրությունների մասին՝ ակումբի հյուրը հիշեցրեց, որ Սերժ Սարգսյանը մարտին ասուլիս էր տվել եւ ասել, որ իրենք «տոնաներով տեսագրություններ ունեն»՝ բոլոր անկյուններից նկարահանած:

«Բայց այսօր պարզվում է՝ ԱԺ մարտի մեկի ողորմելի հանձնաժողովին որեւէ տեսագրություն չեն կարողանում տրամադրել: Այստեղից հետեւություն՝ կամ Սերժ Սարգսյանն էր սուտ, կամ հիմա սուտ են ոստիկանության ու ԱԱԾ մարմինները, որոնք ասում են, որ չունեն որեւէ տեսագրություն: Որտեղ՝ ո՞րն է ճիշտ», ավելացրեց Զուրաբյանը:

ՆԱՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ղեկեյցարիան ու Հայաստանը ա՞ր նման են

1-ին էջից

Ղեկեյցարացի համանախագահ Դոմինիկ դը Բյումանը ասաց, որ Ղեկեյցարիա-Հայաստան բարեկամության խումբը ստեղծվել է 2004-ին, Հայոց ցեղասպանության ընդունումից հետո: Այցը լավ նախապատրաստվել է արգասաբեր քփումների համար: Օրինակելի համագործակցությունը, մեր երկրի սովորույթներին ծանոթանալը հնարավոր է դարձել Ղեկեյցարիա-Հայաստան բարեկամական խմբի ընդհանուր քարտուղար, ղեկեյցարահայ համայնքի ներկայացուցիչ Սարգիս Շահինյանի շնորհիվ, որը բոլոր անհրաժեշտ կապերը հաստատել է, որ այս առաջին այցելությունը ապագա քփումների հիմք դառնա:

Լոյենբերգերը թե՛ պատշառնական, թե՛ ոչ պատշառնական հանդիպումները հարուստ եւ բովանդակալից անվանեց, որոնց արդյունքում նա իր համար ճշտել է, թե Հայաստանը քաղաքական, տնտեսական, աշխարհաքաղաքական հարցերում բավական լուրջ խնդիրների առաջ է կանգնած, ինչն էլ պատճառ է, որ մեր երկու երկրներն էլ ավելի սերտ համագործակցեն: Ըստ նրա՝ կարեւոր է Հայաստանում Ղեկեյցարիայի դեսպանատան հիմնումը, նաեւ՝ որ Հայաստանն իր դեսպանն ունենա Ղեկեյցարիայում, այդպիսով՝ երկու երկրների քփումներն ավելի ակտիվացնելով:

ԼՂՀ ներկայացուցիչների հետ հանդիպմանը ղեկեյցարացիները վստահություն էին տեսել առ խաղաղ կարգավորում, առ Մինսկի խմբի աշխատանքի շարունակում, ինչպես նաեւ այլ նախաձեռնություններում տարածաշրջանային կայունության համատեքստում՝ ԼՂՀ ժողովրդի իրավունքների եւ անվտանգության ապահովում:

Ընդդիմության հետ հանդիպումների արդյունքում ղեկեյցարացի համանախագահները հույս ունեին, որ Հայաստանը կընտրի այն ճիշտ ուղին, որ թույլ կտա քաղաքական բոլոր ուժերի ներգրավմամբ լուծել խնդիրները, հատկապես ԵԽԽՎ բանաձեւերի կատարման մասով:

Դը Բյումանը առանձնացրեց հանդիպումներում կարեւորված երկու ուղղություն՝ տնտեսական եւ արտից եկող՝ մշակութային ծրագրեր: Տնտեսական համագործակցությունը հատկապես կարելի է զարգացնել այն ոլորտներում, որտեղ Հայաստանն ավանդաբար ուժեղ է, ասենք՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կամ առողջապահական ոլորտում, երկուսն էլ նաեւ Ղեկեյցարիայում են զարգացած, իսկ Ա. Բաբլոյանի ստեղծած երկու մանկական հիվանդանոցներ՝«Արաբկիր» եւ «Արբես», այցելությունը հիացրել էր ղեկեյցարացի համանախագահին. «Նրա աշխատանքի շնորհիվ միջազգային օգնության ոլորտը վստահություն է ստանում», ասաց նա: Երրորդ հետաքրքրող ոլորտը զբոսաշրջությունն է՝ Հայաստանի բացառիկ գեղեցիկ բնաշխարհը, ղեկեյցարականի նման, դրա հնարավորությունը կտա, այս ուղղությամբ մտածել եւ ենթակառուցվածքներ ստեղծել է պետք. այս եւ շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտները ղեկեյցարացիներին հետաքրքրում են: Հանդիպումների ընթացքում ծնվել է նաեւ Ղեկեյցարիայի առեւտրային պալատ ստեղծելու գաղափարը (մեզ հիշեցրին միայն, որ 150 մլն ֆրանկի արտահանում կա Ղեկեյցարիայից Հայաստան եւ 15 մլն ֆրանկի ներմուծում Հայաստանից, որը պետք է զարգացնել):

Ամփոփելով՝ Լոյենբերգերը ծանրացավ ցեղասպանության ժխտողականության անընդունելիության վրա՝ հատկապես Ղեկեյցարիայում թուրք համայնքի գոյության պարագայում, եւ հույս հայտնեց, որ ինչպես իր տնկած ծառը կջրվի, այդպես կսնուցվի նաեւ երկու երկրների բարեկամությունն ու համագործակցությունը:

Ի դեպ, լրագրողների հարցերին պատասխանելիս Լոյենբերգերը հայտնեց, թե իրենք ֆինանսաբար են վերաբերվում նոր ատոմակայան կառուցելու Հայաստանի ծրագրին, քանի որ երկրաշարժ տեսած երկրում դարն արդած տեխնոլոգիաներով նոր ատոմակայան կառուցելը ճիշտ չէ, սակայն որոշումն ի վերջո պետք է կայացնի Հայաստանը, իր վերականգնվող էներգետիկայի համատեքստում:

Մենք զրուցեցինք խմբի՝ ղեկեյցարահայ համայնքը ներկայացնող, բայց եւ ի պաշտոնե խմբի կարեւոր պատվիրակներ Սարգիս Շահինյանի եւ Դավիթ Էֆյանի հետ: Սարգիս Շահինյանը՝ խորհրդարանական խմբի քարտուղարը «Ազգին» հայտնեց, որ այս այցելության ծրագրային մասի հիմնական կատարողներից մեկն ինքն է եղել: Նրա կարեւորմամբ՝ այս այցով Ղեկեյցարիան ուզեց փաստել իր աջակցությունը Հայաստանին, ինչպես նաեւ Հայաստանի եւ Արցախի անվտանգության գաղափարին, բայց առանց տնտեսական եւ հասարակական աճի ոչ մի հնարավորություն չկա աղքատությունից ժողովրդին բարեկեցության հասցնելու. պետք է հիմքեր ստեղծել, որ Հայաստանի ժողովուրդը չհեռանա:

Իսկ Դավիթ Էֆյանը՝ Ղեկեյցարիա-Հայաստան հասարակական (օժանդակ) խմբի քարտուղարն էլ պատրաստել էր այցը նախապատրաստող տեղեկատվական հիմքերը, ստեղծել ինտերնետային կայք, որտեղ ներկա են Հայաստանի հետ կապված ղեկեյցարական կազմակերպությունները՝ www. armenian.ch:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ

Հալեպի հայոց թեմը հրատարակել է հայագիտական «Տաթեւ» տարեգիրքը

Հալեպի (Բերիո) հայոց թեմի առաջնորդ Շահան եպիսկոպոս Սարգիսյանի նախաձեռնությամբ եւ սիրիահայ Գասպարյան ընտանիքի հովանավորությամբ Հալեպում լույս է տեսել «Տաթեւ» հայագիտական տարեգիրքը, որի շնորհանդեսը երեկ տեղի ունեցավ Մատենադարանում՝ հայագիտական միջազգային գիտաժողովի մասնակիցների ներկայությամբ: Շահան սրբազանի խոսքով՝ հայագիտական այս տարեգիրքը ստեղծելու իր փափագը ծնվել է մոտ հազար տարվա պատմություն ունեցող սիրիահայ համայնքի կյանքը պեղելու, ուսումնասիրելու եւ գիտական հանրությանը իրազեկելու անհրաժեշտությունից. «Հավատում եմ, որ հայագիտական բազմաթիվ տարեգրքեր տալը անպատեհություն չի ստեղծի, այլ, ընդհակառակը, շատ գիտնականների առիթ կտա զանազան միջոցներով ու ձեւերով արտահայտվելու: Այս տարեգիրքը հանձնում ենք գիտնականներին, որպեսզի նրանք կարողանան վայելել կամ, ինչպես ասվում է մեր սուրբ եւ անմահ պատարագի հասկացողությամբ՝ ճաշակել: Ուրախ եմ, որ այս տարեգիրքը տրվեց ըստ հայկական ավանդության եւ սովորության՝ մեկենասությամբ: Մեր փափագն էր այս տարեգիրքը հանձնել մեր ազգային հոգեւոր տաճարին՝ Մաշտոցի անվան Մատենադարանին, գիտաժողովի մասնակից հայագետներին: Բարի դիտավորությամբ տարեգրքի առաջին համարի հոդվածները միայն արեւմտահայերեն են, բայց հաջորդ հատորներում կլինեն նաեւ օտարալեզու հոդվածներ: Հավատում եմ, որ «Տաթեւը» ավելի կամրացնի Բերիո հայոց թեմի կապը Մատենադարանի եւ գիտական հանրության հետ», ասաց Շահան սրբազանը:



Տարեգրքի առաջին համարում տեղ են գտել հայագիտական 17 հոդվածներ՝ Տիմոթեոս վարդապետի «Արարածոց Մեկնությունը» (Շահան եպս. Սարգիսյան), «Հայ-արաբական պատմամշակութային կապերի պատմությունից (պրոֆ. Արշակ Փոլադյան), «Վարդան Անեցին եւ իր «Ներբողը» (Զուլալ Գազանճյան), «Սիրիահայերը Մոհամեդ Քուրդ Ալիի հուշերում» (դոկտոր Նորա Արիսյան), «Հայագիտությունը եվրոպական համալսարաններում» (Սալբի Գասպարյան) եւ այլն:

Լեւոն Խաչիկյանի գիտական ժառանգությանը նվիրված գիտաժողովի 2-րդ օրը Մատենադարանի ցուցասրահում բացվեց Ղրիմի մանրանկարչությանը նվիրված ցուցահանդես, որի ժամանակ ներկայացվեց նաեւ գիտաժողովի մասնակից, ավստրիացի արվեստաբան Հելմուտ Բուշհաուզենի «14-րդ դարի Ղրիմի մանրանկարչությունը Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ» ալբոմ - գրքի նախնական տարբերակը: Պրն Բուշհաուզենն ասաց, որ իր տիկնոջ հետ այս ալբոմի ստեղծմամբ սկսել են զբաղվել 30 տարի առաջ՝ Լեւոն Խաչիկյանի խորհրդով եւ ցուցումով: Իրենք մի ամբողջ կյանք են նվիրաբերել այս գործին եւ երջանիկ են, որ առաջիկա ամիսներին ալբոմը կհրատարակվի Հայաստանում:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Վերաբացվեց «Արդշինինվեստբանկի» մասնաճյուղը Գորիսում

Հոկտեմբերի 10-ին վերաբացվեց «Արդշինինվեստբանկի» «Գորիս» մասնաճյուղը: Մասնաճյուղի վերանորոգված մասնաշենքը հագեցած է ժամանակակից տեխնիկայով եւ հաճախորդներին կսպասարկի առավել հարմարավետ պայմաններում: Վերաբացման արարողության ժամանակ «Արդշինինվեստբանկի» վարչության նախագահ Արամ Անդրեասյանը նշեց, որ սա Սյունիքի մարզում մեկ ամսում երկրորդ վերանորոգված մասնաճյուղի բացումն է, իսկ մեկ ամիս առաջ վերաբացվել էր «Սիսիան» մասնաճյուղը:

Ա. Մ.

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆ 10.30-Պատարագ կմատուցվի Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում Թարգմանչաց տոնի առթիվ: Ավետարանը ժամը 10.30-16.00 կգտնվի Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում:

◆ 13.00-Երեւանի 2790-ամյակի կապակցությամբ «Ուրբաթ» ակումբը կհյուրընկալի Հ. Պարոնյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Երվանդ Ղազանչյանին եւ դոտդուկահար Ջիվան Գասպարյանին:

◆ 14.00-«Ուրբաթ» ակումբի հյուրն է ամերիկահայ բեմադրիչ, դերասանուհի Նորա Արմանին: Նա կամփոփի Սարոյանի «Հայրիկ, դու խենթ ես» ինքնակենսագրական ստեղծագործության հայաստանյան պրեմիերան:

◆ 16.45-Նախագահականում տեղի կունենա Արթուր Բաղդասարյանի մամուլի ասուլիսը:

◆ 17.30- Մոսկվայի տանը տեղի կունենա «Թարգմանություն. լեզու եւ մշակույթ» թարգմանիչների, գրողների ու հրատարակիչների երկրորդ ֆորումի բացման արարողությունը:

◆ 18.00-Կոմիտասի արձանի մոտ տեղի կունենա մամուլի ասուլիս, այնուհետեւ 18.30 Թեղուտի պատանության նախաձեռնությունը կկազմակերպի երթ:

Կիրակի

◆ 13.00-«Կոնգրես» հյուրանոցում «Ալյանս» քաղաքացիական նախաձեռնությունը կազմակերպում է հանդիպում պատգամավորության նախարար Սեյրան Օհանյանի հետ:

Երկուշաբթի

◆ 12.00-«Հայացք» մամուլի ակումբի հյուրն է ՀՅԴ խմբակցության քարտուղար, մարտի 1-ի դեպքերն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի անդամ Արշաուս Շահբազյանը:

◆ 14.00-«Ուրբաթ» ակումբի հյուրն է «Պետական կարիքների զոհեր» հասարակական կազմակերպության ղեկավար Սեդրակ Բաղդասարյանը: Թեման՝ «Պետության կարիքների համար սեփականության օտարման խնդիրները Երեւանում»:

◆ 17.00-Կամերային երաժշտության երեկո. ներկայանում են Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողները: Ծրագրում՝ հայ եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Աշխարհության պատգամներ պատմական անցյալից

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի այցը Հայաստան եւ առաջիկայում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի փոխադարձ այցելությունը Թուրքիա սահմանի երկու կողմերում առաջացրել են մեծ ոգեւորություն, որն առավել ցայտուն է Թուրքիայում, քան Հայաստանում: Կարծես ջրամբարի դարպասները լայնորեն բացվել են եւ թուրքական մամուլին հնարավորություն է տվել պատմական նշանակություն տալու իրադարձությունների այս շրջադարձին:

Անկարայի նպատակն էր շրջափակելու եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հրաժարվելու միջոցով ծնկի բերել Հայաստանին, թեեւ դա իրականություն չդարձավ, այդտեղծեռ Հայաստանի բնակչության ենթագիտակցության մեջ ամրապնդվեց այն միտքը, որ բոլոր դժվարությունների պատճառը դարաբաղյան հակամարտությունն է:

Հայաստանը հազարավոր տարիներ անց ձեռք էր բերել իր առաջին մեծաքավալ հաղթանակը եւ ազատագրել էր իր պատենական հայրենիքի մի փոքր հատվածը, սակայն նրան թույլ չէր տրված «մարսել» այդ հաղթանակը:

Վերջապես եկավ հատուցման ժամանակը: Հայաստանի վճռականությունը տվեց իր դրական արդյունքը:

Շրջափակման վերացումն ու դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Թուրքիան պայմանավորում էր որոշ զիջումներով, որ Հայաստանը պետք է կատարեր: Դրանց թվում էին. պատեսնական ճանաչում թուրք-հայկական սահմանի (1923 թվի Կարսի պայմանագրի դրույթներով), հրաժարում ցեղասպանության պահանջներից եւ գրավյալ տարածքների (ներառյալ Լեռնային Ղարաբաղի) վերադարձ Ադրբեջանին: Անկարան մազաչափ անգամ չբեղվեց իր այս դիրքից, քաջ գիտենալով, որ դա չէր կարող բանակցությունների սկիզբ լինել: Նա մնաց անդրդվելի եւ հանգիստ սպասեց, որ Հայաստանը կատարի առաջին քայլը:

Մինչ այդ ցեղասպանության հարցը ընդգրկվեց եւ մնաց Երեւանի արտաքին քաղաքականության օրակարգում, իսկ Ղարաբաղի «դե ֆակտո» անկախությունը համարվեց իրականացված փաստ:

Բայց Ռուսաստանի վերակենդանացած հաստատակամությունը եւ պատերազմը Վրաստանի դեմ տակնուվրա արեցին Կովկասի քաղաքական ամբողջ պատկերը:

Ինչպես Պոլ Գոբլի խորաթափանց վերլուծությունը ցույց էր տվել, Ռուսաստանը շատ ավելի մեծ ազդեցություն ուներ Թուրքիայի վրա, քան որոշ քաղաքագետներ ենթադրում էին: Մոսկվայի վարած «ակն ընդ ական» քաղաքականությունը, որով նա ճանաչեց Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախությունը ի պատասխան Արեւմուտքի կողմից Կոսովոյի անկախության ճանաչման, ստիպեց վերանայման ենթարկել կովկասյան տարածաշրջանի ամբողջ քարտեզը: Լինելով Ռուսաստանի ամենամոտիկ դաշնակիցը, Հայաստանը մեկ օրից մյուսը կարետություն ստացավ: Թուրքիան առաջ քաշեց Կովկասում խաղաղություն եւ կայունություն հաստատելու իր նախագիծը, որն առանց Հայաստանի մասնակցության չէր կարող իրագործվել: Նրա նպատակներից մեկն էր նաեւ սահմանափակել Իրանի ազդեցությունը տարածաշրջանում եւ դրանով իսկ հաճոյանալ Արեւմուտքին:

Հանկարծ Թուրքիան ավելի շատ զգաց Հայաստանի կարիքը, քան Հայաստանը՝ Թուրքիայի:

Չենք կարող ենթադրել, որ Թուրքիան նախապայմաններից հրաժարվել է: Դրանք պարզապես այժմ դարձել են բանակցելի: Վերջին հաշվով, Թուրքիան պետք է հաշվի նստեր Հայաստանի հետ, որպեսզի որոշ առաջընթաց արձանագրեր Եվրոմիությանն անդամակցելու իր հեռանկարներում:

Եթե ներկա զարգացումներից ոչ մի դրական բան դուրս չգա, թուրքական հասարակական կարծիքը մեծապես հուսախաբ է լինելու: Թուրքական զանգվածային լրատվությունը չափազանց աշխուժացել է իրադարձությունների նման շրջադարձով եւ ցեղասպանության հարցը դարձյալ առաջին պլան է մղվել, հակառակ որ ՔՕ 301 հոդվածը դեռեւս գործում է:

Անցյալում Քեմալ Յալչընն անունով մի անհատ գրող համարձակություն էր ունեցել ներողություն խնդրելու ցեղասպանության համար: Այսօր ակնառու գիտնական եւ քաղաքական մեկնաբան Բաշքին Օրանն է առաջարկում, որ Թուրքիան պետք է փոխհատուցի հայերին պատճառած ցավի դիմաց, եւ դադարի պաշտպանել «Իթթիհադ վե թերաքի» ոճրագործների դատը: Ափսոսանքի եւ ներողությունների այս շարքը հասել է նաեւ դիվանագետներին եւ պետական այրերին, որոնք իրենց խոսքն ունեն Թուրքիայի արտաքին քաղաքականության մշակման մեջ: Նրանց թվում կարելի է նշել Թանսու Չիլլերի քաղաքական խորհրդատու Վոլքան Վուրալի անունը:

Բարեբախտաբար, հայկական զանգվածային լրատվությունն ավելի զուսպ է եւ շրջահայաց: Մենք այնտեղ չենք տեսնում այն խանդավառությունը, որ տիրում է սահմանից այն կողմ՝ Թուրքիայում:

Ընդամենը մի քանի ամիս առաջ էր, որ Թուրքիայի վարչապետ Էրդողանը ազերի նախագահ Ալիեւի եւ Վրաստանի նախագահ Սաակաշվիլու հետ բացեց երկաթուղային մի գիծ, որի նպատակն էր մեկուսացնել Հայաստանը:

Թուրքիան երբեք բարեսրությունից դրդված քայլեր չի կատարում: Դրանք միշտ սառը քաղաքական հաշվարկների արդյունք են:

Հայաստանի երրորդ հանրապետության առաջին նախագահ եւ ընդդիմադիր առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանն արդեն զգուշացրել է, որ Թուրքիայի նպատակն է սփյուռքը հակադրել Հայաստանին: Սա իրոք հաճախակի արծարծվող թեմա է ներկայիս թուրքական մամուլի էջերում եւ քաղաքական շրջանակներում: Նրանց առաջ քաշած տեսակետն այն է, որ Հայաստանի թշվառ բնակչությունը հացի խնդիր ունի եւ շահագրգռված է բարելավելու հարաբերությունները Թուրքիայի հետ, մինչդեռ սփյուռքահայությունը՝ լիառատ արեւմտյան երկրներում հանգիստ տեղավորված, անընդհատ ցեղասպանության կրակն է թեժացնում:

Իհարկե դրանում որոշ ճշմարտություն կա, բայց ոչ ամբողջ ճշմարտությունը, քանի որ սփյուռքահայությունը ցեղասպանությունից մազաղուրծների կամ նրանց հետնորդների սերունդներից է բաղկացած: Բացի Վասպուրականի եւ Կարսի շրջանի հայերից, որոնք փախան դեպի Կովկաս, ներկա Հայաստանի բնակչությունը ցարական իշխանության տակ է աղրել եւ զերծ մնացել Օսմանյան Թուրքիայի ցեղասպանական քաղաքականությունից: Բացի այդ, անցած 70 տարիների ընթացքում խորհրդային իշխանությունները չէին թույլատրում ցեղասպանության թեմայի արծարծումը: Եվ ի վերջո, երբ ժամանակը գա հարցի կարգավորման, Հայաստանն է, որ որպես իրավական ամբողջականություն պետք է վարի բանակցությունները, հաշվի առնելով, անշուշտ, սփյուռքահայության մտահոգությունները ու շահերը:

Պատմական նախադեպերն ստիպում են մեզ զգույշ լինել թուրքական բարեհոգությանց հանդեպ: Անշուշտ մենք պետք է բարելավենք հարաբերությունները Թուրքիայի հետ եւ կարգավորենք անցյալի խնդիրները, բայց այդ բոլորը մենք պետք է կատարենք պատմության դասերի վրա հիմնված ռեալիստական մոտեցումով:

Մայրս Ադանայից (Կիլիկիա) էր ծնունդով եւ թուրքերի մասին շատ հատկանշական պատմություն էր պատմում: Հայկական եկեղեցու դռան մոտ կանգնած մի կույր թուրք մուրացկան իր աղոթքն է վաստակել հայ հավատացյալների նվիրատվություններով եւ ամեն անգամ օրհնել է նրանց այդ բարեգործությունը, բայց հենց 1909-ի Ադանայի ջարդերը սկսվել են, նա իր թուրք հայրենակիցներից խնդրել է մի հայ էլ իրեն բաժին հանեն, որպեսզի նրա կոկորդը կտրելով արժանի դառնա երկնային արքայության:

Մեր լեգենդար հերոս ու զինվորական տաղանդաշատ առաջնորդ Անդրանիկն, անշուշտ, ավելի փորձառու էր, քան իմ մայրը: Նա երբեք չէր վստահում թուրքերին եւ այդ պատճառով էլ հրաժարվեց Դաշնակցական կուսակցությունից, երբ վերջինս սկսեց մերձենալ թուրքերին: 1895-ին, երբ սուլթան Աբդուլ Համիդը լայնածավալ կոտորածներ կազմակերպեց եւ սպանեց մոտ 300 հազար հայերի, Արմենական կուսակցության անդամները Վանում զենքը ձեռին պաշտպանեցին իրենց քաղաքն ու կանգնեցրին օսմանյան բանակի առաջխաղացումը: Բրիտանացի հյուպատոսի միջամտությամբ զինադադար հայտարարվեց, եւ թուրքերը խոստացան, որ հայերին կթույլատրվի Իրան անցնել անվտանգ, բայց հայերին զինաթափելուց հետո թուրքերը նրանց դարանակալեցին, եւ 800 ազատամարտիկներ սպանվեցին ճանապարհին:

1908-ին իթթիհատականները եկան եւ նոր սահմանադրություն որդեգրեցին: Հայկական քաղաքական կուսակցությունները հրաժարվեցին զենքից եւ հայտարարեցին՝ «Բոլորս օսմանցիներ ենք»: Մեկ տարի անց 30 հազար հայեր կոտորվեցին Ադանայում: Այդ ամենը չսթափեցրեց հայերին, եւ նրանք շարունակեցին հավատալ, որ թուրքերը փոխված են, նույնը չեն: Օսմանյան խորհրդարանի անդամ Գրիգոր Զոհրաբը ցեղասպանությունը մտահոգողներից՝ Թալեաթի մոտ ընկերներից էր: Մի երեկո Թալեաթը նրան ճաշի հրավիրեց ու պատվեց, իսկ հաջորդ օրն առավոտյան ձերբակալել տվեց ու կարգադրեց վայրագորեն՝ գլուխը ջարդելով սպանել նրան ախտորի ճանապարհին:

Հայ կամավորներն Ա աշխարհամարտի օրերին միացան դաշնակից զորքերին եւ պատերազմի ավարտին հաղթական վերադարձան Կիլիկիա: Շատ թուրքեր եւս միացան հայերին եւ սկսեցին խաղաղ աղրել այնտեղ: Նրանցից ոմանք նույնիսկ դավանափոխ եղան եւ ընդունեցին քրիստոնեությունը, բայց երբ ֆեմալական հրոսակախմբերը ֆրանսիական բանակի ամոթալի դավաճանության հետեւանքում ներխուժեցին Կիլիկիա, նրանք իրենց զենքերն ուղղեցին հայերի դեմ:

Նման պատմական նախադեպերն այնքան շատ են, որ հնարավոր չէ բոլորը նշել մի հոդվածի սահմաններում:

Ճիշտ է, ներկա ժամանակներում ընձեռված այս բացառիկ հնարավորությունը չի կարելի բաց թողնել, բայց մենք չպետք է թերագնահատենք թուրքական դիվանագիտության նենգությունն ու չարամտությունը: Չմոռանանք, որ նրանք ավելի քան վեց հարյուր տարի մի ամբողջ կայսրություն ղեկավարեցին: Նրանք իրենց քաղաքական քայլերը կատարում են սառնասրտորեն մշակված հաշվարկներով: Մենք եւս նույնը պետք է կարողանանք անել՝ մի բան, որ մեզ չի հաջողվել անել ցարդ մեր ամբողջ պատմության ընթացքում:

The Armenian Mirror Spectator

Թարգմ. Հ. Ծ.

Հակահարված թուրք-ադրբեջանական կոշտ դիրքորոշմանը

«Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ «ֆուտբոլային դիվանագիտությամբ» ծայր առած մեծ ակնկալիքներ պարունակող երկխոսությունն արդեն իսկ լուրջ դժվարությունների է դեմ առնում», գրում է «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանը: Ստորեւ թարգմանաբար նրա հոդվածը չնչին կրճատումներով:

Մինչ ոչ ոք չէր ակնկալում, որ բուսափույթ լուծումներ կգտնվեն ցեղասպանությունից եւ Թուրքիայի ժխտողական կեցվածքից սկիզբ առած երկարամյա խնդիրներին, իշտերն էին, այդտեղծեռ, սպասում, որ մերձեցման նորափքիթ քայլերն այդքան արագ կարող են երերուն դառնալ:

Նախագահների եւ արտգործնախարարների բարեկամական եւ հուսադրող առաջին հանդիպումներից հետո արցախյան խնդիրը կարծես պատճառ է դառնում, որ հարաբերություններն սկսեն ճաք տալ:

Նախ, տարօրինակ էր, որ Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային մասնակցող Հայաստանի եւ Թուրքիայի նախագահները չբարեւնակեցին սեպտեմբերի 6-ին Երեւանում սկսած իրենց հանդիպումները: Թուրք լրագրողի հարցին պատասխանելով, նախագահ Գյուլը նախ ասաց, որ տեղյակ չէ, թե նախագահ Սարգսյանը գալու է Նյու Յորք, իսկ հետո հավաստիացրեց, որ հավանաբար կհանդիպեն դիվանագիտական ընդունելություններից մեկի ժամանակ: Բայց երկու նախագահներն այդպես էլ չհանդիպեցին: Նախագահ Սարգսյանից 2 օր հետո՝ սեպտեմբերի 28-ին Նյու Յորքից հեռանալիս նա լրագրողներին հաղորդեց, որ «կոնկրետ արդյունքներ դեռ չկան» արտգործնախարարների հանդիպումից եւ նա այնքան էլ «մեծ ակնկալիքներ չունի»:

Նույն օրը նախագահ Գյուլը հաստատեց այն լուրերը, որ շրջափակման վերացման համար բավարար հիմքեր չկան: «Սահմանի բացման վերաբերյալ խոսք լինել չի կարող մինչեւ Հայաստանը չազատագրի ադրբեջանական տարածքները», ասել է նա ըստ «Ազերի թաջ» լրատվական գործակալության: Դրանով իսկ նախագահ Գյուլը վերադառնում էր թուրքական կողմի նախնական դիրքորոշմանը, որը քանիցս մերժել են Հայաստանի իշխանությունները: Անկարան եւ Բաքուն հավանաբար ենթադրում էին, որ քանի դեռ Հայաստանը զրկված էր վրացական նավահանգիստներից կենսական ապրանքներ ներմուծելուց, ժամանակն էր ճնշում բանեցնեու Երեւանի վրա՝ Արցախի եւ ցեղասպանության հարցերով:

Զուգադիպություն էր, թե ոչ՝ նախագահ Սարգսյանի վերջերս կատարած մի քանի նախաձեռնողական հայտարարություններն այն տպավորությունը թողեցին, որ դրանք Անկարայի եւ Բաքվի կոշտ կեցվածքին ուղղված հակահարված էին եւ ցրում էին ենթադրյալ բոլոր կասկածները, թե իբր Հայաստանը հուսահատությունից դրդված ամեն գնով ցանկանում է, որ Թուրքիայի հետ սահմանը բացվի: Թբիլիսիում նախագահ Սարգսյանը հայտարարեց, որ նախագահ Սաակաշվիլու հետ համաձայնության է եկել համատեղ կառուցելու մի նոր մայրուղի, որը զգալիորեն կկարճացնի Բաքու-Երեւան տրանսպորտային ժամանակը:

Ազգային ժողովին եւ ժողովրդին ուղղված առաջին հեռաստված ուղերձի ժամանակ նախագահ Սարգսյանը հայտարարեց, որ Իրանը Հայաստանին միացնող նոր երկաթգիծ է կառուցվելու՝ դյուրացնելու եւ ընդլայնելու համար առեւտուրը երկու երկրների միջեւ: Նա նաեւ ավելացրեց, որ Հայաստանը պատրաստվում է նոր ատոմակայան կառուցել՝ նախորդի փակումից հետո էներգամատակարարման բնագավառում ինքնաբավ լինելու նպատակով: Եվ վերջապես նա ազդարարեց, որ համահայկական մի նոր բանկ է հիմնադրվելու Երեւանում՝ ֆինանսավորելու համար «այս խիզախ նախաձեռնությունները», որոնք լուծելու են Հայաստանի ռազմավարական եւ տնտեսական կարեւորագույն խնդիրները:

Այս ծրագրերին առընթեր Հայաստանն օրերս մի նոր՝ սփյուռքի նախարարություն է կազմավորել էլ ավելի ամրապնդելու հարաբերություններն արտասահմանում ապրող միլիոնավոր հայերի հետ: Սեպտեմբերի 24-ին Նյու Յորքում կայացած հանդիսավոր ճաշկերույթի ժամանակ նախագահ Սարգսյանը ոգեշնչող ելույթով 700 հրավիրյալներին կոչ արեց միացյալ ուժերով բարելավել կյանքը Հայաստանում: Նա նաեւ շնորհակալություն հայտնեց նրանց, ովքեր աջակցում էին Արցախի հակամարտության կարգավորմանը, «Հայոց ցեղասպանության դատապարտմանն ու պատմական արդարության վերականգնմանը»:

Այս բոլոր նոր նախաձեռնությունները նպատակ ունեն ձեռնտու գործարքներ կնքելով Հայաստանի հարստությունները ավելացնելու եւ նպաստելու, որ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ բանակցություններում կարողանա խոսել ուժի դիրքերից:

Վրաստանի եւ Իրանի տարածքներով այլընտրանքային մայրուղիների կառուցումը զգալիորեն նսեմացնելու է Թուրքիայի սահմանի բացման կարեւորությունը եւ նպաստելու է Անկարայի ու Բաքվի հարկադրած շրջափակմանն առավել արդյունավետ միջոցով դիմակայելուն:

Ճիշտ է, Հայաստանի պատեսնական այրերը ցանկանում են բարելավել հարաբերություններն իրենց բոլոր հարեւանների հետ, սակայն նրանք այնքան հուսահատ վիճակում չեն, որ անընդունելի զիջումների գնան Արցախի եւ ցեղասպանության հարցերում:

Թարգմ. Հ. Ծ.

11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2008 ԷՋ Ա

ՀԱՎԵԼՎԱԾ

Պարբերականությունը՝ երկշաբաթյա

Թիվ 19(62)

Դարի դեմքն ու դիմակը

Զրույց ՊԵՐՃ ՉԵՅԹՈՒՆՑՅԱՆԻ հետ՝ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ

- Բարեւ, Պերճ: Ինչպե՞ս ես:

- Լավ եմ: Այսինքն լավը իմ դեպքում հարաբերական է: Հոգով, մարմնով, կարող է լինվին լավ լինել մեկը, որը ինը ամիս բուժվել է Հայաստանի, Գերմանիայի հատուկ հիվանդանոցներում, լրջորեն վիրահատվել է ու մարմնում օտար մարմին՝ մեսաղ է կրում:

- Այդման երկարատեւ բուժման ընթացքում, եթե հնարավորություն ունենայիր, հենց թեկուզ ինքդ քեզ հոգեպնդելու համար ո՞ր գիրքդ կկարդայիր:

- Ինչո՞ւ կեղծ համեստություն անեմ՝ ես իմ բոլոր գրքերն էլ սիրում եմ, բայց հավանում եմ հատկապես «Արշակ 2-րդը», որը մեծ ընչառության, արդիական հիմնախնդիրներով, լավ գրված վեպ եմ համարում: Դրա վկայությունը թերեւս այն է, որ երկու անգամ հրատարակվել է Երեւանում, թարգմանվել, երկու անգամ տպագրվել է Մոսկվայում, ապա՝ Պրահայում: Անմիջապես, կրկին առանց կեղծ կեցվածքի ավելացնեմ, որ ինքս, որպես գրող, երբեք գրի չեմ եղել ինձնից ու չեմ: Ինձ միշտ տանջել է ներքին անվստահության կասկածը ու դրան, որքան էլ արտառոց թվա, մեծապես նպաստել է մեր գրական միջավայրը, հատկապես՝ ընդունելությունը: Բանը հասել էր այնտեղ, որ ինձ՝ այն ժամանակ երիտասարդ գրողիս, հրապարակայնորեն, խորհրդային Հայաստանի պաշտոնաթերթում՝ «արեւմտաեւրոպական գրականության դեսանտ» էին կոչում: Մինչդեռ «դեսանտությունն» այն էր, ինչը հետագայում Պարույր Սեւակը այսպես բանաձեւեց՝ «նայել նույն ուղղությամբ, որով ընթանում է համաշխարհային արվեստը», այսինքն հասնել այն բանին, որ ազգայինը ընկալվի համաշխարհային արվեստի համատեքստում: Հակառակ դեպքում առաջանում է լուսանցքում հայտնվելու վտանգը՝ ինչպես մենք հայտնվել ու հայտնվում ենք հաճախ: Բարեբախտաբար նման պիտակներին միշտ էլ հակակշռել է ընթերցողների սերը: Ես միշտ էլ իմ թիկունքին զգացել եմ որոշակի թվով, ընդ որում նվիրված ընթերցողների հաջորդականը, համակրանքը:

- Դու թերեւս միակն էիր, որ պատանի հասակում գրականություն մտար, բայց երբեք երիտասարդ գրող չեղար: Անգամ «Պիոներ» ամսագրում 1952-ին տպագրված քո անդրանիկ պատմվածքում սկսնակի անփորձություն, անվստահություն չի զգացվում: Կարո՞ղ ես բացատրել պատճառը: Ովքե՞ր են եղել, ո՞ւմ ես համարում քո գրական ուսուցիչները:

- Դպրոցական տարիներին ես մեր թաղային գրադարանի բոլոր գրքերն անխտիր, ուզում եմ ասել առանց ընտրության կարդացել եմ, մինչեւ հայտնաբերել եմ Չեխովին ու Մոպասանին, որոնցից այլեւս երբեք չեմ բաժանվել: Ավելի անկեղծանամ՝ Չեխովի հանճարեղ թատերագիր լինելը ես համեմատաբար ուշ՝ հասուն տարիքում ողջ խորությամբ ընկալեցի: Նա ինձ Շեքսպիրից հետո ամենամեծ թատերագիրն է թվում՝ եթե անգլիացի թատերգրի բախումները բացահայտ են՝ գործողությամբ են արտահայտվում, Չեխովինը՝ ներքին, հոգեբանական են, որ անհամեմատ դժվար է ընթերցողին կամ հանդիսատեսին հասցնելը: Անմիջապես ավելացնեմ, որ ինձ համար իհարկե, բոլորովին այլ մեծություն է Տոլստոյը: Նա այնքիսի հանճար է, որ իր ներգործությամբ մինչեւ անգամ «ահաբեկում» է ընթերցողին՝ նկատի ունեմ գրող ընթերցողին:

- Տարօրինակ չէ՞ թաղային գրադարանի խորհրդային հրատարակության գրքերով մեծանալը, Չեխով, Մոպասան սիրելն ու, օգտագործենք ճնշադատության բառեզրը, «մոդեռն» գրող դառնալը: Հիշում եմ, երբ դու առաջին անգամ իմ ձեռագիր պատմվածքներին ծանոթացար, ու մենք հանդիպեցինք, հարցրիր՝ «Մոպասան կարդացե՞լ ես»: Ես այն ժամանակ Բյուռավի անվան օտար լեզուների ինստիտուտում նոր-նոր ֆրանսերեն էի սովորում, Կամյուի «Օտարը» բարձիս տակ էի ճնում, ու քանի որ Մոպասանն ինձ համար դարն ապրած դասական էր, հիմա ամաչում էլ եմ ասելը, թե ինչպիսի վերամբարձությամբ «ո՞չ» ասացի: Դու քեզ հատուկ զսպվածությամբ ու համբերատարությամբ ինձ լսեցիր, ապա խորհուրդ տվեցիր՝ «Կգնաս տուն, «Ճարպագունդը» կընթերցես, հետո կխնես»: Գնացի, կարդացի, չխնեցի:

- Երբ ես գրականություն մտա, ճնշադատության «մոդեռն» բառեզրը բացասական իմաստ ուներ, գոնե իմ գրքերի մասին հրատարակված գրախոսականներում դատապարտելու համար էին գործածում: Մինչդեռ ինքս ինձ, ընդհուպ «Կլոդ Ռոբերտ Իզերլին», «մոդեռն» գրող՝ այս բառի թե դրական, թե բացասական իմաստով չեմ համարել: Ուղղակի ես ուրիշ էի, ուրիշ էի իմ ճակատագրով, հետեւաբար՝ մտածողությամբ, ճաշակով: 1948-ին, երբ մենք Հայաստան ներգաղթեցինք, արդեն տասը տարեկան էի, Եգիպտոսի մեր հարմարավետ կենցաղից, ազատ իրականությունից ձերբազատվել չէի կարողանում, նոր միջավայրին ոչ մի կերպ չէի մերվում, մանավանդ որ զգում էի՝ իմ հասակակիցներն ինձ օտար ու խորթ տարր են համարում: Պատահել է, մորս խնդրել եմ, որ իմ անդրավարտիքի վրա մի-երկու կարկատան կարի, որպեսզի թաղի մյուս տղաներից շատ չտարբերվեմ: Տարօրինակն այն էր, որ մեր ծնողները փոխանակ մեզ նոր իրականությանը վարժեցնելու, իրենք էին ընդվզում ու չնայած զանգվածային ախտորներին, գիշերները հավաքվում, գաղտնի «Ամերիկայի ձայնն» էին լսում: Իմ ծնողների սերնդին հայրենասիրությունը Հայաստան բերեց, բայց այն նրանց համար «դժվար» հայրենիք եղավ:

«Կլոդ Ռոբերտ Իզերլի» վեպի հեղինակը կտրուկ անցում կատարեց ազգային թեմաներին ու նույնիսկ պատմական վեպ գրեց:

- Ես «Արշակ 2-րդը» արդիական վեպ եմ համարում, գաղափարը հղացել եմ Գերմանիայում: Նյուռնբերգում մեզ ցույց տվեցին ուշ միջնադարում անձեռնմխելի համարվող «ազատ տարածքներ», որտեղ աղատանալու արտոնություն էին ստանում մեծ ու փոքր հանցագործները: Անմիջապես անդրադարձա, որ նույնը պատահել է հայ իրականությունում, դեռեւս վաղ միջնադարում՝ Արշակ 2-րդի թագավորության օրք: Եթե «Արշակ 2-րդը» արդիական հնչեղությամբ վեպ չլիներ, ժամանակակից ռուս ու չեխ ընթերցողին չէր հետաքրքրի, հրատարակելու, առավել եւս վերահրատարակելու պահանջ չէր զգացվի:

- Նկատի ունեմ ոչ միայն «Արշակ 2-րդը», այլ նաեւ ու հատկապես՝ «Վերջին արեւագալը» վեպն ու «Ոտքի՛, դատարանն է գալիս» թատերախաղը, որը ամեն անգամ դիտելիս ցուցանորի խռովքն ու հիացումն եմ արթնում: Չե՞ս կարծում, որ յուրաքանչյուր հայ գրող պարտք, պարտականություն ունի 1915 թվականի՝ մեր ժողովրդի պատմական ամենամեծ ողբերգության հանդեպ, ու դու, եթե անգամ քո առջեւ նման նպատակ չես էլ դրել, ներքին մղումով հատուցել ես այդ պարտքը, կատարել պարտականությունը:

- Հայ գրողներս այդ առումով, անշուշտ, մեր ժողովրդի հանդեպ չհատուցված պարտք ունենք: Գոնե իմ կարծիքով մինչեւ այժմ Մեծ Եղեռնի ողբերգությունն արտացոլող լավագույն վեպերը այլազգիներն են գրել: Նկատի ունեմ հատկապես Ֆրանց Վերֆելի դասական՝ «Մուսա լեռան 40 օրը», համեմատաբար վերջերս լույս տեսած Էդգար Հիլզենրաթի «Վերջին մտքի հեքիաթը»: Մենք չենք կարողանում 1915 թիվը գրականության՝ վեպի թեմա դարձնել, որովհետեւ մեր վերքը չափազանց խորն է, մոտ մի դար անց էլ չի սպիանում: Ողբերգությունը, ողբերգությունն է աննախադեպ: Չեխովը իրավացի է՝ գրել կարելի է միայն այն ժամանակ, երբ ոտքդ լիովին սառն է: Մինչդեռ ես սառնարտորեն չեմ կարողանում պատկերացնել, թե ինչպե՞ս կարելի է մի ամբողջ ժողովուրդ բնաջնջելու գաղափարը հղանալ՝ հղանալ ու իրագործել փորձել:

- Լիովին համամիտ եմ, բայց վերապահություն ունեմ: Դու հավատո՞ւմ ես, որ հայ գրականությունն իր «Պատերազմ ու խաղաղությունը» կամ ֆրանսիական «վեպ-գետերի» նման համապարփակ վիպաբարեր կուներա: Գոնե մինչեւ հիմա չի ունեցել: Սա ես ոչ այնքան մեր գրականության թերությունը, որքան ազգային ճակատագրի առանձնահատկության հետեւանքն եմ համարում:

- Իհարկե, անհնար է համեմատել մեր արձակն ու չափածոն: Նարեկացին ինձ համար տիեզերական բանաստեղծ է, Չարենցն ու Վարուժանը միջազգային չափանիշի հանճարներ են, որոնց մեծությանը, ցավոք, մենք այդպես էլ չենք կարողանում համաշխարհային ընթերցողին հասու դարձնել: Ընդունելով հանդերձ, որ վիպական արձակը տվյալ ժողովրդի պետականության հետ ուղղակի առնչություն ունի, ինձ չի թվում, որ հայերեն լեզվով լավ վեպ չի գրվել: Նույնիսկ մեր պետականության վերականգնման վերջին՝ ոչ այնքան գրական համարվող տարիներին առնվազն երկու լավ վեպ է ստեղծվել: Նկատի ունեմ Ռուբեն Հովսեփյանի «Ծիրանի ծառերի տակն» ու Ալեքսանդր Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո»:

- Կուզե՞ս բացատրել, թե անվանի արձակագիր, թատերագիր Պերճ Չեյթունցյանը ինչպես անսպասելի հրապարակագիր դարձավ:

- Հավատա, մինչեւ 1988 թվականը ես հրապարակախոսությամբ չեմ զբաղվել, մամուլում հոդվածներով հանդես չեմ եկել:

1988-ի շարժումն ինձ այլափոխեց՝ ես ամբողջ էությամբ տարվեցի մեր ժողովրդի միասնականությամբ, վճռականությամբ, հավատացի, որ պատմական իրադարձությունների էի մասնակցում: Դրանք, առանց չափազանցության, իմ կյանքի ամենաերջանիկ օրերն էին: Ես շարժման մասնակից ամենաանաղմուկ, բայց հավատարիմ գրողն էի, օրերայի հրապարակում իմ մշտական, մեկուսի տեղի ունեի, ամեն երեկո, առանց բացառության, բոլոր հռետորներին ծայրեծայր լսում էի: Եթե հանրահավաքը շատ ուշ էր վերջանում, ոտքով էի տուն վերադառնում: Որքան մեծ էր իմ ոգեւորությունը, այնքան էլ դառն ու խորը եղավ հաջորդած հիասթափությունը, մանավանդ որ նյութականը իսկույն փոխարինեց հոգեկանին, գրական ընթերցանությունը մոռացվեց, մշակույթն ընդհանրապես անտեսվեց: Իմ հրապարակագրությունը ներքին այդ բախումից է ծնվել, քանի որ ինձ համար օրենքը հասարակության, երկրի բարոյականության հիմքն է:

- Ասում ես, որ անկախության վերականգնումից հետո հայ մարդը հեռացել է գրականությունից ու մշակույթից: Ուզում եմ հարցնել՝ մեծ հավով ե՞րբ է մոտ եղել: Սա ոչ միայն հայերին, աշխարհի յուրաքանչյուր՝ նույնիսկ ամենաքաղաքակիրթ ժողովուրդներին է վերաբերում: Հարավամերիկյան՝ կենցաղային կոչենք, անվերջանալի ֆիլմաշարերը հո միայն Հայաստանի համար չե՞ն արտադրվում, բոլոր երկրների հեռուստաէկրաններն էլ ողողում, միլիոնավոր դիտողների գրականությունից, մշակույթից հեռացնում են: Ուրեմն մարդն ի ծնե է հետաքրքիր կյանքի, թեթեւ զվարճանքների ձգտում:

- Համաձայն եմ՝ ընթերցելը դժվարին աշխատանք է, ընթերցածն իմաստավորելը՝ տքնանք: Խոսքն, իհարկե, իսկական գրականության մասին է: Հակված եմ կարծելու, որ անհատն ավելի հեշտ է ընկալում ներկայացումն ու շարժանկարը, որովհետեւ առաջին դեպքում նա գործողությունների ուղղակի մասնակիցն է դառնում, երկրորդ դեպքում՝ հետեւողը: Ներկայացումը դո՛ւ ես դիտում, շարժանկարը քեզ ցույց են տալիս: Զգո՞ւմ ես տարբերությունը:

- Դրա համա՞ր է Պերճ Չեյթունցյան արձակագիրն զբաղվում նաեւ թատերագրությամբ:

- Պերճ Չեյթունցյանը արձակագիր է, որն իր՝ թատերագրական հոբին ունի: Անվանումն էլ է նույնը վկայում՝ թատերախաղ՝ այսինքն խաղ, որն ինձ զբաղեցնում է գործողությունների լարվածությամբ, ներքին անակնկալներով, խարդավանքներով, հենց թեկուզ կառուցվածքային յուրահատկությամբ: Ընթերցանության առումով էլ թատերգությունն ինձ համար սիրելի գրական ժանր է: Չեխովին, ում մշտական ընթերցողն եմ, արդեն հիշատակեցի:

- Քեզ հավանաբար հայտնի է՝ Ֆրանսուա Սագանը մոտավորապես քո տարիքում չէր ծուլացել, վերընթերցել էր իր բոլոր վեպերն ու «Կարդալով Սագանին» հետաքրքրական գիրք էր գրել, որտեղ անկեղծորեն, ավելին՝ անաչառորեն վերլուծել, բառի դրական ու բացասական իմաստով արժեւորել էր գրական ժառանգությունը: Դու նման ցանկություն երբեւէ չե՞ս ունեցել: Գոնե 70-ամյակիդ նախաշեմին:

- Իմ, դժվար էլ է հավատալը, ավելի քան 50 տարիների գրական գործունեության ընթացքում միշտ համոզված եմ եղել, որ արձակագիրը ներշնչանքի պիտի չսպասի, ամեն օր գրասեղանի առջեւ նստի ու տքնի, սակայն այդպես էլ բեղուն գրող չեմ դարձել: Դրա փոխարեն՝ չեմ կարծում, որ այնքիսի գործ եմ գրել, որի համար ամաչեմ: Հրատարակել եմ քսան գիրք, թարգմանվել եմ աշխարհի տասնմեկ լեզուներով: Տասներկու թատերգության հեղինակ եմ, որոնցից միայն մեկը՝ «Ադրելն ու մեռնելը» չի բեմադրվել: Վերջերս Ֆրանսիայում արժանացա «Արարատ» գրական մրցանակին, որը Հայաստանում Ֆրանսիայի դեսպանը պաշտոնապես հանձնեց, ԱՄՆ-ում, «Ֆաունթեն» թատրոնում իմ երեք թատերախաղերի հիման վրա, անգլերեն, ընթերցողական բեմադրություն ներկայացվեց, Կալիֆորնիայի պետական համալսարանի հայագիտության ամբիոնն ինձ Գրիգոր Նարեկացու անվան շքանշան շնորհեց: Ահա եւ իմ ապրած կյանքի համառոտ հանրագումարը:

- Հոգնեցրի չէ՞: Վերջացնենք: Շնորհավոր 70-ամյակդ, Պերճ: Թող Աստված քեզ օրհնի:

- Աստված օրհնի Հայաստանն ու հայ ժողովրդին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ԳՐԻԳՈՐ ՁԱՆԻԿՅԱՆ

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Գրամենությունը միանշել այսօր

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉՅԱՆ

ԻՆՉՈՂԻ Է ԱՐԳԵԼՎԵԼ ԺՅՈՒԼ ՎԵՌՆԸ

Այո, Ժյուլ Վեռնը, այստեղ, այսինքն՝ նախկին Խորհրդային Միությունում: Ես տեսնում եմ ընթերցողի թերահավաս զարմանքը, այնուհանդերձ, այդպես է. մոտ քառորդ դար ֆրանսիացի մեծ գրողը արգելված է եղել ցարական Ռուսաստանում՝ 1876-1900թթ., այնուհետեւ Խորհրդային Միությունում եւ առ այսօր արգելքի տակ է: Խոսքը Ժյուլ Վեռնի «Միշել Ստրոգոֆ կամ ցարի լրաբեր» վեպի մասին է: Նրա «ռուսական», կարելի է ասել՝ ամենառուսական վեպը:

Արգելքի փաստն առավել անհեթեթ է դառնում, երբ հաշվի ենք առնում, թե նշված վեպը քաղաքական ինչպիսի կարեւորություն ուներ Ռուսաստանի համար, եւ այն փաստը, որ արտաքուս անվնաս, արկածային այս երկը խնամքով ու հետեւողական հեռու է պահվել խորհրդային երկրի ընթերցողներից, շատ խոհերի առիթ է տալիս: Իսկապես, ինչո՞ւ էին աշխատում հատկապես «Միշել Ստրոգոֆը» թաքցնել բանվորագյուղացիական զանգվածներից, երբ Ժյուլ Վեռնը սեղանի գիրք էր դարձել Խորհրդային Միության գրեթե յուրաքանչյուր ընթերցողի համար, երբ նրա վեպերը լույս էին տեսնում միլիոնավոր, տասնյակ միլիոնավոր տպաքանակներով: Ինչի՞ց էր զգուշանում խորհրդային իշխանությունը, սա ինչ մեղսալի գաղտնապահություն էր:

Վեպի դիպաշարի համառոտ վերապատումն իսկ միանգամից պատասխան կտա այս հարցականներին: «Միշել Ստրոգոֆի» իրադարձությունները տեղի են ունենում Ռուսական կայսրության տարածքում՝ Ս. Պետերբուրգից մինչեւ Իրկուտսկ, ամենայն հավանականությամբ XIX դարի 60-ական թվականներին, Ալեքսանդր Երկրորդ ցարի օրք: Վեպն սկսվում է տագնապալից լուրով. ներքին գործոց նախարարը ներկայանում է ցարին եւ հայտնում, որ մայրաքաղաքը Իրկուտսկին կարող հեռագրի լարը կտրված է, այլեւս կապ չկա կայսրության մի հսկա հատվածի՝ Արեւելյան Սիբիրի հետ: Սակայն տագնապի պատճառը միայն կապի կորուստը չէ, որն, ի վերջո, կարելի է կարճ ժամանակում վերականգնել: Թելը կտրել են ապստամբները: Միջին Ասիայի խանությունները միավորվել են թյուրքալեզու մի ցարի ցեղերի հետ եւ նպատակ դրել Սիբիրը կտրել Ռուսական կայսրությունից ու դարձնել թուրք-թաթարական մի պետություն: Ապստամբ խաներին չի միացել միայն ղազզերի ցեղը:

Այս ապստամբությունը, ռազմական առումով, չի կարող որեւէ լուրջ վտանգ ներկայացնել Ռուսական կայսրության հզոր բանակի համար, եւ թվում է՝ ընդբոստացած խաների ախորժակը «փակելն» ընդամենը ժամանակի հարց է: Սակայն երկու հանգամանք չափազանց լրջացնում են կացությունը եւ համայն Ռուսիո կայսրից պահանջում գործել արագ ու վճռական. ապստամբներին է միացել ռուսական բանակի գնդապետ Իվան Օգարյովը, որի մայրը մոնղոլ է (Ժ. Վեռնը այս հանգամանքը մի քանի անգամ շեշտում է վեպում): Փաստորեն նա է, որ միտք ու ոգի է հաղորդում քոչվորների անկազմակերպ, բաշիբոզուկային բանակին: Երկրորդ, ամենավտանգավոր հանգամանքը. Իրկուտսկում է գտնվում ցարի եղբայրը՝ Մեծ Իշխանը, բանակի գերագույն հրամանատարը: Նա գիտի, որ թրքալեզու խաներն ապստամբել են ցարի դեմ, ուստի իր փոքրաթիվ կայազորով փակվել է Իրկուտսկի բերդում: Սակայն Մեծ Իշխանը տեղյակ չէ, որ Իվան Օգարյովը հայրենիքի դավաճան է դարձել: Կացությունը ծայր աստիճան վտանգավոր է, քանզի, ստացված լուրերի համաձայն, Իվան Օգարյովն շտապում է հասնել Իրկուտսկ, փրկարարի դիմակի տակ Մեծ Իշխանին դուրս բերել բերդից եւ հանձնել խաների ձեռքը: Սա նշանակում է, որ իրադարձությունների նման զարգացման դեպքում ապստամբները կկարողանան զորավոր ճնշում գործադրել ցարի վրա, գուցեեւ հասնել իրենց նպատակների իրագործման, այլ խոսքով, Ռուսական կայսրության մասնատմամբ ստեղծել մի նոր Ոսկե Հորդա, այս անգամ թուրքական թեռամով:

Դրությունը փրկելու մեկ միջոց կա միայն. շտապել եւ Իրկուտսկ հասնել Իվան Օգարյովից առաջ, տեղեկացնել Մեծ Իշխանին պատրաստվող դավադրության մասին: Ներքին գործոց նախարարը ցարին ներկայացնում է մի քանի խիզախների, որոնք պատրաստ են կյանքի գնով կատարել հանձնարարությունը: Ցարն ընտրում է Միխայիլ Ստրոգոֆին՝ հաղթանդամ եւ քաջարի մի տղա՝ ծնունդով սիբիրցի, որն ստանում է ցարի ձեռքով գրված նամակը Մեծ Իշխանին, նրա օրհնությունը եւ ճամփա ընկնում:

Իմաստ չունի մանրամասնորեն վերապատմել Միշել Ստրոգոֆի արկածների, իգախության եւ բացառիկ նվիրվածության ոդիսականը, վիպական հարուստ անցուդարձը, որի վարպետն է Ժյուլ Վեռնը: Այս ամենն ընթերցվում է լարված հետաքրքրությամբ: Մեծ գրողի ժառանգությանը ծանոթ ընթերցողը կարող է պատկերացնել, թե երեւակայության ինչպիսի թռիչքով, տիրերի, հերոսների, իրադարձությունների ինչպիսի բազմազանությամբ պիտի ներկայացվի Միշել Ստրոգոֆի հերոսական ուղետությունը Ս.Պետերբուրգից մինչեւ Իրկուտսկ: Լավագույն վերապատումն իսկ չի կարողանա հաղորդել այս գրավիչ վեպի ամբողջ հմայքը: Ասենք միայն, որ խիզախ պատգամաբերը կարողանում է կատարել ցարի հանձնարարությունը եւ Ռուսաստանը փրկել վերահաս աղետից:

Մասնագետների վկայությամբ, Ժյուլ Վեռնի ծավալուն վեպում զարմանալի ճշգրտությամբ է ներկայացված Սիբիրի աշխարհագրությունը, բնությունը, կենցաղը... Բայց միայն այս մանրամասներն էին ճշգրիտ:

Ժյուլ Վեռնն, իհարկե, չէր կարող տեսած լինել Մեծ Թյուրիո կանաչ քարտեզը, որի մասին միայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հնարավոր դարձավ մամուլում գրելը: Այդ քարտեզի առյուծի բաժինն ընկնում է Կովկասի, Միջին Ասիայի եւ Մոսկվայից արեւելք ընկած ռուսական բոլոր հողերի վրա, հասնում մինչեւ Մանջուրիա, Կորեա, Դեղին Ծով: Ի դեպ, 1993 թ. Թուրգութ Օզալն, առանց քավելու, հայտարարեց, որ «թուրքական հանությունը» տարածվում է Ադրիատիկից մինչեւ Դեղին ծով:

Մեծ գրողն այդ քարտեզը չի տեսել, բայց կանխատեսել է այդ ծրագրերի իրագործման արյունալի փորձերը: Մեր զարմանքն այսօր մեծ չէր լինի, եթե վեպին նախորդած պատմական իրողություններն առիթ տային նման կանխատեսումների համար: Թուրք հրոսակն, այո, հաստատել էր իր ասպատակությունները սփռել մինչեւ Վիեննայի դռները: Ճիշտ է՝ հետ էր շրջվել, այնուհանդերձ չէր դադարում անհագ ախորժակով նայել այդ տարածքներին եւ ամեն առիթ օգտագործել դեսից-դենից կտոր պոկելու համար:

Բայց բոլորովին այլ էր պատկերը ռուս-թուրքական-թաթարական հարաբերություններում: Կուլիկովյան ճակատամարտից սկսած ռուսները հետեւողականորեն վերադարձնում էին իրենց կորցրած տարածքները՝ հասնելով մինչեւ Ղրիմ, Դանուբ եւ Կովկաս: Իսկ XIX դարի առաջին կեսում, մինչեւ 60-70-ական թվականները, ռուսական կայսրությունը բավական հաջող, առանց որեւէ լուրջ դիմադրության, թափանցում էր Միջին Ասիա: Ուժերի հարաբերությունը, տարածաշրջանի քաղաքական զարգացման իրատեսը տամաբանությունը խոսում էր այն մասին, որ թուրք-թաթարական խուժանը վերջնականապես ճզմվելու է ռուսական արջի թաթերի տակ, եւ հազիվ թե գտնվեր մի քաղաքագետ, որ նման մռայլ կանխատեսում աներ՝ ռուսական հզոր կայսրության մասնատումը թուրանական ցեղերի կողմից:

Ինչ վերաբերում է վեպում ներկայացված փաստերին, ապա դրանք, առաջին հայացքից, կարող էին ոչ միայն անհավատալի, այլեւ անհեթեթ թվալ: Չէ որ վեպի ստեղծման նախօրեին, 1873 թ., ռուսական զորքերը հետեւությամբ նվաճեցին Խիվայի խանությունը: Ռուսաստանի ներկան, այդ օրերին, դրսզն-ինչ առիթ չէր տալիս ամենահեռավոր ապագայում իսկ թուրք-թաթարական էմպանսիայի մասին խոսելու: Սակայն Ժյուլ Վեռնի մարգարեացած երեւակայությունը տեսնում էր այն, ինչի մասին մտածել անգամ չէին համարձակվի մասնագետները:

«Միշել Ստրոգոֆն» ապշեցնող է հենց այս առումով: Հայտնի է, որ Ժյուլ Վեռնի գիտական եւ հանրակրթական բոլոր կանխատեսումներն իրականացան, մինչդեռ այս վեպը մյուսներից առանձնանում է իր տեսակով. այստեղ գերիշխողը ոչ թե խիզախ ճանապարհորդների եւ հանդուգն գիտնականների արկածների նկարագրությունն է, որքան քաղաքական, իսկ ավելի ճիշտ՝ աշխարհաքաղաքական կանխատեսումները, որոնք, ըստ էության, պիտի սկսվեին իրագործվել Ալեքսանդր երկրորդ ցարի սպանությամբ, Համաշխարհային առաջին պատերազմի սանձազերծումով եւ 1917թ. հոկտեմբերյան հեղափոխություն կոչված բոլշեւիկյան դավադրությամբ: Վեպի ստեղծումից քառասուն տարի անց պիտի ծնվեր մի պետություն, որն իր էությամբ թուրք-թաթարական էր: Խոսքը միայն բոլշեւիկների եւ թուրքերի ափաշկարա սիրաբանության մասին չէ, որի հետեւանքով ցինիկաբար ոտնահավեցին թե՛ հայկական, թե՛ ռուսական շահերը, այլեւ բոլշեւիկների ստեղծած պետության մասին, որը շատ բաներ որդեգրեց Ոսկե Հորդայից. ասիական վայրենի ավտորիտարիզմ, խանական հիերարխիա, կոտորած, մսխում, ավազակային սկզբունքներ ներքին եւ արտաքին քաղաքականության ասպարեզում եւ այլն:

«Միշել Ստրոգոֆի» աշխատանքներն սկսվել են 1875 թ.: Այդ է վկայում արձակագրի նամակագրությունն իր հրատարակչի՝ Էցելի հետ. «Ես ոտիս ոչ մի բանի մասին չեմ կարող մտածել. սա ինձ ծայրաստիճան հրապուրում է: Այուժեն հրաշալի է եւ հոյակապ իրավիճակների առիթ է տալիս», գրում էր Ժյուլ Վեռնը 1875 թ. մարտի 29-ի նամակում:

Իսկապես, «Միշել Ստրոգոֆն» այնպես էր հրապուրել գրողին, որ նա ընդհատեց «Հեկտոր Սերվադակ» վեպի աշխատանքները, որպեսզի կարողանա լիովին տվել նոր մտահղացմանը: Սակայն հրատարակիչը բնավ չէր կիսում նրա ոգեւորությունը: Նա պատճառներ ուներ այդպես կարծելու: Նախորդ տարիների ընթացքում բավական պաղած ռուս-ֆրանսիական հարաբերությունները վերջապես բարելավվում էին: Փարիզի քաղաքական մթնոլորտը, հետեւաբար եւ գրաքննությունը չափազանց զգույշ էին՝ Ռուսաստանին առնչվող յուրաքանչյուր փաստի հանդեպ, ուստի բնական էր, որ օրվա հոգսերով ապրող հրատարակիչը նախեւառաջ պիտի նայեր, թե քամին որ կողմն է փչում:

Սակայն Ժյուլ Վեռնին այլեւս անհնար էր ետ պահել: Գրողի հանճարեղ կանխատեսումը շատ ավելին էր ասում, քան օրվա հոգսերով ապրող հրատարակիչների եւ կարճատես քաղաքագետների վախկոտ զգուշավորությունը: «Ես ճամփա եմ ընկել Սիբիր, եւ այնպիսի թափով, որ կանգ առնել չեմ կարող: Իմ վեպն ավելի շատ թաթարական է ու սիբիրյան, քան ռուսական», գրում էր Ժյուլ Վեռնը նույն տարվա ապրիլի նամակներից մեկում:

1875 թ. ապրիլին վեպի առաջին մասը պատրաստ էր: Ուղարկելով հրատարակչին՝ Ժյուլ Վեռնը շարունակում է աշխատանքը երկրորդ մասի վրա: Նույն տարվա հոկտեմբերին գրողը մասնավորաբար գնում է Լե-Տրեպոր, որպեսզի մի քանի շաբաթվա ընթացքում ավարտի վեպի երկրորդ մասը: «Սիրելի Էցել, - գրում է նա հրատարակչին, - ստացա ձեր նամակը եւ «Ցարի լրաբերի» սրբագրական էջերը: Ձեր նշումների մեջ շատ օգտակար բաներ կան: Ես ամեն ինչ հաշվի կառնեմ, բայց միայն Տուրգենեւի դիտողությունները ստանալուց հետո»:

Էցելն, անտալով գրողի պահանջին, ձեռագիրը Տուրգենեւին է ուղարկում: Վերջինս մի շարք օգտակար խորհուրդներ է տալիս եւ անում ընդամենը մեկ դիտողություն. թաթարական արշավանքը չափազանց անհավանական է Ռուսաստանում: «Ժյուլ Վեռնի վեպը ճշմարտացի չէ, սակայն դա չէ կարեւորը, - գրում է Ի. Ս. Տուրգենեւը Էցելին՝ 1875թ. սեպտեմբերի 23-ին: - Վեպը չափազանց հետաքրքրաշարժ է: Մեր օրերում անհավանական է Բուխարայի խանի արշավանքը դեպի Սիբիր: Դա նույնն է, թե ես ցանկանայի նկարագրել՝ ինչպես է Հոլանդիան նվաճում Ֆրանսիան»:

Այս փաստը շատ հետաքրքրական մտորումների առիթ է տալիս: Ծիծաղելի կլիներ ասել, թե ֆրանսիացի գրողը Տուրգենեւից ավելի լավ գիտեր Ռուսաստանը: Սակայն մի բան է նյութի, երկրի առօրյա իմացությունը, այլ՝ հավանական կանխատեսումները: Բացի այդ, տվյալ դեպքում գործ ունենք ոչ միայն ստեղծագործական տարբեր նկարագիրների հետ, որքան ազգային տարբեր աշխարհընկալումների: Ռուսական մտավորականության մեծագույն մասն այդպես էլ չբարեհաճեց ինչպես հարկն է ուսումնասիրել իր հպատակներին, իր նվաճած հողերի վրա ապրող տարբեր ազգերին: Ցնչին բացառությունները չհաշված, այդ մտավորականության համար հայը, տաջիկը, վրացին, ադրբեջանցին ու չեչենը եղել եւ մնում են «կովկասյան ազգության դեմքեր»: Թե՛ Տուրգենեւը, թե՛ ռուսական ազնվականությունն, ըստ էության, չտեսան ու չհասկացան, թե ինչ ուժեր են ասպարեզ գալիս, թե ինչ սեւ հորդա է գլուխ բարձրացնելու:

Այսինքն՝ ինչ իրավունք ունենք Տուրգենեւին մեղադրելու, երբ այսօր, քսաներորդ դարի ավարտին, որպես մտավորականության մի հոծ զանգված (ժողովրդի մասին էլ չենք ասում) ինչպես հարկն է չկարողացավ իր բարեկամին զանազանել իր թշնամուց, ինչպես հարկն է չի գիտակցել իր քաղաքական կուտության աղետալի հետեւանքները Ռուսաստանի համար:

Հրատարակիչը, վեպը տպագրելուց առաջ, Տուրգենեւի միջոցով կապվում է Փարիզի ռուսական դեսպան՝ կոմս Օռլովի հետ եւ խնդրում նրան կարդալ սրբագրական էջերը: Դեսպանը վեպում «ոչ մի պախարակելի բան» չի գտնում, սակայն խորհուրդ է տալիս փոխել վերնագիրը, այսինքն՝ «Ցարի լրաբերը» դարձնել «Միշել Ստրոգոֆ»: Ռուսական գրաքննությունը չափազանց հիվանդագին էր նայում վեհապետ կայսեր եւ նրա ընտանեկան պարագաներին առնչվող յուրաքանչյուր մանրամասնի հրապարակմանը:

Ժյուլ Վեռնը մեծ դժկամությամբ համաձայնեց վերնագրի փոփոխությանը: «Ցարի լրաբերը» վերնագիրն արդեն իր մեջ կրում էր որոշակի վերաբերմունք քաղաքական հնարավոր դեպքերի հանդեպ, ինչ-որ առումով դա նշանակում էր ռուսական կայսրության հեղինակության տարածումը եւ, թեկուզ խորհրդանշական, ամոտ պատնեշ էր դնում ասիական հնարավոր բարբարոսության դեմ:

Վեպը լույս տեսավ 1875 թ. «Դաստիարակության եւ զվարճության ամսագիր» պարբերականում եւ առաջ բերեց մի շարք ճնշադատների տարակուսանքն իր «անհավանականությամբ»: Կարճատեսությունը, ավելի ճիշտ, անհեռատեսությունը միշտ անվերապահ է լինում: Ժյուլ Վեռնը վրդովված էր. «Այո, թաթարական արշավանք, իսկ ինչո՞ւ ոչ, - գրում էր նա: - Չէ՞ որ ես գրողական երեւակայության իրավունք ունեմ»:

Հրատարակիչը վախենալով գրաքննությունից, որոշեց դիմել ընթերցողներին մի նախազգուշությամբ, թե վեպում նկարագրված իրադարձությունները եւ անձինք հորինված են: Հետինակն էլ, գլխավորը փրկելու նպատակով, համաձայնեց որոշ երկրորդական կրճատումների եւ տեքստից հանեց այն ամենը, ինչ կարող էր վերագրվել ներկա ցարին եւ նրա հորը: Ահա ինչու «Միշել Ստրոգոֆի» գործողությունները մի տեսակ ժամանակից դուրս են թվում: Սակայն ցավալին այն էր, որ գրաքննությունը մանրամասների հետեւից ընկած չէր տեսնում էականը: «Ափսոս, - գրում էր Ժյուլ Վեռնը, - որ գրաքննությունն այդպես մակերեսային է կարդում գրքերը: Տուրգենեւը, որն այդ պարոններից շատ ավելի լավ գիտի Ռուսաստանը, ոչ մի պախարակելի բան չգտավ»:

«Միշել Ստրոգոֆը» առանձին գրքով լույս տեսավ 1876 թ. եւ չլսված հաջողության արժանացավ: Փարիզի «Օդեոն» թատրոնում այդ վեպի հիման վրա ներկայացում դրվեց, որը նույնպես մեծ հաջողություն ունեցավ: Փարիզում, այդ տարիներին, տարածված էր «հրաշալի է, ինչպես «Ստրոգոֆը» արտահայտությունը: Գրական այս հերոսի կենսագրությունը պիտի շարունակվեր հետագա տարիների՝ ֆրանսիացի մի շարք գրողների ստեղծագործություններում: Այս կերպարը շարունակ հիշատակվել է որպես հայրենիքին անմնացորդ նվիրվելու օրինակ:

Սակայն Ֆրանսիայում ունեցած հաջողությունները բավարար չեղան, որպեսզի վեպը միանգամից թարգմանվի եւ հրատարակվի ռուսերեն: Չգիտես՝ դիվանագետների զգուշավորությամբ, քաղաքական գործիչների կարճատեսությամբ, թե՛ ցարական գրաքննության բթամտությամբ բացատրես այն փաստը, որ վեպը մինչեւ 1900 թ. պիտի արգելված մնար Ռուսաստանում: Արգելքը հանելուց հետո էլ, ռուսաց կայսրության, ցարի պատժամանությամբ եւ ռուսական ազգային շահերի օգտին գրված այս ստեղծագործությունն ընդամենը երկու անգամ պիտի լույս տեսներ ռուսերեն: Իսկ երկրորդ արգելքը դրվեց 1917 թվականից անմիջապես հետո, եւ դա հասկանալի էր. այսպես կոչված հեղափոխությունը՝ պառվուս-լենինյան դավադրությունը, շատ էր նման վեպում նկարագրած գործողություններին: Բոլշեւիկները նման զուգահեռներ չէին սիրում: Դեռ լավ է, որ չարգելվեց Ժյուլ Վեռնի ամբողջ գրականությունը:

Վեպը ոչ միայն արգելվեց, այլեւ դուրս մնաց գրականագիտական շրջանառությունից: Ժյուլ Վեռնի գրականության խորհրդային մասնագետներից (Կ. Անդրեեւ, Ե. Բրանդիս, Լ. Բորիսով)

Տես էջ 9

Մասնակցություն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Ածուղի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հրավիրում է Երևան քաղաքի Գրիբոյեդովի 1-ին նրբ., 11 շենքի առաջին հարկից 50 ք.մ. մակերեսով տարածքի երեք տարի ժամկետով վարձակալության տրամադրման ածուղի, որը տեղի կունենա 2008թ. նոյեմբերի 11-ին, ժամը 14:00-ին, ք.Երևան, Դ.Անհաղթի 23(IV հարկ) հասցեում:

Տարածքի վարձակալության մեկ ամսվա վարձավճարի մեկնարկային գինը՝ 14280 դրամ:

Վարձակալության ժամկետը՝ վարձակալության պայմանագրի կնքման պահից երեք տարի ժամկետով:

Ածուղը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Ածուղին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք մինչեւ նոյեմբերի 11 -ը, ժամը 12:00 ածուղային հանձնաժողովին են (հասցեն՝ ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/, 7-րդ սենյակ) ներկայացրել՝

-ածուղի մասնակցության հայտ,

-ածուղի մասնակցության նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է՝ 720 դրամ, մուտագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը,

-ածուղի մասնակցության վճարի անդորրագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Ածուղի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գնի մեջ չի ներառվում եւ անկախ ածուղի արդյունքներից չի վերադարձվում,

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Ածուղի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Ածուղին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ ածուղի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ ածուղի սկսվելը:

Ածուղի մասնակիցները վարձակալությամբ տրամադրվող տարածքին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ ածուղի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00) զանգահարելով 52-06-28, 56-66-30 հեռախոսահամարներով:

Տարածքը ընդգրկված է ք.Երեւան, Աբովյան հասցեի Կոմիտաս պողոտա թիվ 54 հյուրանոցի նկատմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության սեփականության իրավունքով տրված վկայականում (05.05.05թ. N1485533) գրանցված ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 1-4 մասյանի 000029 համարի տակ:

Նախքան ածուղի սկսվելը ածուղային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Ածուղը վարում է ածուղավարը: Ածուղավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Տանկացած մասնակից իրավունք ունի, նախքան ածուղավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, ածուղավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է ածուղի հաղթող մասնակից:

Ածուղավարի կողմից ածուղի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է ածուղի մասնակցելու իրավունքից: Եթե ածուղում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է ածուղի հաղթող եւ ստորագրում է ածուղի արդյունքների մասին արձանագրությունը: Ածուղի մասին արձանագրությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ածուղի հաղթողը պարտավոր է վճարել վարձակալվող տարածքի համար իր կողմից առաջարկված վարձակալության մեկ ամսվա վարձավճար:

Ածուղում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս մեկ օրվա ընթացքում դիմելուց հետո:

Ածուղի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել (հասցեն՝ ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) հասցեով կամ զանգահարել ածուղային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 24-67-25, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխությունները ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է ածուղի մասին սույն հրապարակային ծանուցումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը վարձակալությամբ տրամադրում է տարածք էկոնոմիկայի նախարարության աշխատակիցների սննդի կազմակերպման նպատակով

Հասցե	ազատ տարածք	/ք.մ/
ք.Երեւան,Մ. Մկրտչյան 5ա	նկուղային հարկ	31.26

Անհրաժեշտության դեպքում զանգահարել 52-06-28 հեռախոսահամարով, կամ դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ Երեւան, Տիգրան Մեծի 4 հասցեով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ
մրցույթի անցկացման մասին
(ծածկագիր՝ 787-Ն-1)

Ի կատարումն ՀՀ կառավարության 2008թ.-ի հուլիսի 24-ի թիվ 787-Ն որոշման 1-ին կետի՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու **Գյումրի քաղաքի Ղարիբջանյան N 28** հասցեում գտնվող՝ 135.44 քառ. մ. ընդհանուր մակերեսով անշարժ գույքի (այսուհետ՝ գույք) օտարման մրցույթին (ծածկագիր՝ 787-Ն-1):

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Գույքի հասցեն	ՀՀ Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Ղարիբջանյան 28
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N 787-Ն, 24.07.2008թ.
1.3.	Գույքի գնահատման ամսաթիվը	29.02.2008թ.
1.4.	Անշարժ գույքի մակերեսը (քառ.մ.)	135,44
1.5.	Գույքի գնահատված արժեքը (հազ. դրամ)	2 097
1.6.	Գույքի զբաղեցրած, օգտագործման եւ սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքը (քառ. մետր)	142,42
1.7.	Հողամասի 1ք.մ.-ի կադաստրային արժեքը (դրամ)	1914
1.8.	Անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համարը, ամսաթիվը	N 2409271, 16.08.2007թ.

2. Տեղեկություններ օտարվող գույքի կազմի մասին

Հ/Հ	Գույքի անվանումը	Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)	Գնահատված արժեքը (հազ. դրամ)
2.1.	Անշարժ գույք /բացառությամբ հողատարածքի/, այդ թվում՝ շենք՝ 108.46 քառ.մետր նկուղ՝ 26.98 քառ. մետր	450	2 097

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը (տես 6.1 եւ 6.2 կետերը) եւ 6.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցույթի մասնակցության հայտ (ձեւը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունից, 438 սենյակ), որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝

- գրավոր առաջարկ մրցույթի պայմանների վերաբերյալ (տես՝ 4.12 կետը),
- նախավճարի մուծումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
- գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները (իրավաբանական անձանց համար), քաղաքացիների համար՝ անձնագրի պատճենը, սոցիալական քարտի պատճենը,
- հայտատուի կողմից տրված լիազորագիր (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը),
- գործարար ծրագիր,
- իրավաբանական անձանց համար նաեւ գրավոր հավաստում առ այն, որ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ դիմողի (հայտատուի) կանոնադրությամբ տվյալ գույքը տվյալ ձեւով գնելու համար պետական համապատասխան մարմինների կամ ներքին մարմինների (խորհուրդ, ընդհանուր ժողով) համաձայնությունը չի պահանջվում, կամ պահանջվող համաձայնությունները ստացված են՝ կցելով այդ համաձայնագրերը:

4. Մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման կարգը

4.1. Մրցույթի մասնակցության հայտերը ներկայացվում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը:

Մրցույթի մասնակցության հայտերը՝ 3.1. կետում նշված մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով, ներկայացվում են սոսնձված եւ ստորագրված ծրարով՝ անձամբ կամ փոստով: Փոստով ուղարկված հայտերի (ծրարների) ներկայացման ժամկետ է համարվում ծրարի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն մուտքի օրը եւ ժամը:

4.2. 4.1. կետին չհամապատասխանող հայտերն առանց ծրարը բացելու վերադարձվում են հայտ ներկայացնողին:

4.3. Մրցույթի հայտատուները՝ մինչեւ մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի լրանալը կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը: Մրցույթավարը (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը) կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է հայտերի ներկայացման կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտից հետո (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո) ներկայացված հայտի փոփոխության կամ հետ վերադարձման դիմումները ենթակա չեն քննարկման:

4.4. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով եւ փոքր չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքից (տես 4.12 կետը):

4.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով: Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

4.6. Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը եւ մրցույթի ծածկագիրը (ծածկագիր՝ 787-Ն-1):

4.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆաքսիմիլային կապով: Ստացված փաստաթղթերը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

Ներկայացված ծրարները ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից կնքվում եւ մուտագրվում են:

4.8. 6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվում:

4.9. Մրցույթի հայտը գրանցվում է հատուկ գրանցամատյանում՝ հայտատուին տալով ստացական մրցույթի մասնակցության հայտը ընդունելու վերաբերյալ:

4.10. Մրցույթի հայտատուները 6.2 կետում նշված հատուկ հաշվին մուծում են մրցույթի մասնակցության նախավճար 6.1 կետում նշված գումարի չափով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի նախավճարն ընդգրկվում է մասնակցի կողմից առաջարկված գույքի մասնավորեցման (օտարման) գնի մեջ: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից մրցույթի արդյունքների արձանագրությունը չստորագրելու, հետագա վճարումները չկատարելու եւ (կամ) պայմանագիր չկնքելու դեպքերում նախավճարը չի վերադարձվում եւ մասնավորեցումը (օտարումը) համարվում է չկայացած:

Մրցույթում հաղթող չճանաչված մասնակիցները, ինչպես նաեւ մասնակցի կարգավիճակ չստացած հայտատուները, մրցույթի մասնակցության նախավճարի վերադարձման նպատակով պետք է դիմեն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը:

Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետում մրցույթում հաղթող չճանաչված հայտատուի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից համապատասխան դիմում չներկայացնելու դեպքում մրցույթի մասնակցության նախավճարը հաշվանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան հաշվին:

4.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

4.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

օտարվող գույքի համար առաջարկվող գինը (նվազագույն գինը՝ 2 097 հազ. դրամ),

ներդրումների չափը՝ առաջիկա երեք տարվա կտրվածքով:

4.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4.14. Մրցույթում հաղթողին է (այսուհետ՝ գնորդ) օտարվում նաեւ գույքի զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 142,42 քառ. մետր հողատարածքը՝ կադաստրային արժեքով:

5. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

5.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

5.2. Մրցույթի հաղթողը գույքի վաճառքի գինը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստորագրելու օրվանից եռամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության արժույթով՝ գույքի վաճառքի գնի 70%-ն ուղղելով ՀՀ պետական բյուջե, 30%-ը՝ համապատասխան համայնքի ֆոնդային բյուջե՝ ըստ գույքի գտնվելու վայրի, իսկ հողամասի կադաստրային արժեքը՝ Գյումրու քաղաքային համայնքի «Հողի օտարումից եկամուտ» գանձապետական հաշվին:

5.3. Համաձայն ՀՀ կառավարության 2008թ.-ի հուլիսի 24-ի թիվ 787-Ն որոշման 1-ին կետի՝ մրցույթի հաղթողի կողմից առաջարկված գնի եւ հողամասի կադաստրային արժեքի վճարումից հետո մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը գնորդի հետ կկնքի առուվաճառքի պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 97613 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը՝ օրենքով սահմանված կարգով:

5.4. Մրցույթով օտարման արդյունքում գնորդը հանդիսանում է նաեւ գնահատման պահից հետո առաջացած իրավունքների եւ պարտավորությունների իրավահաջորդը:

5.5. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, եւ մրցույթը համարվում է չկայացած:

6. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

6.1	Մրցույթի նախավճարի չափը	105 հազ. դրամ
6.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հատուկ հաշիվը	Թիվ 1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
6.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	2008 թվականի հոկտեմբերի 17-ը, ժամը՝13:00
6.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն,438 սենյակ
6.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	2008 թվականի հոկտեմբերի 21-ը, ժամը՝15:00 ք.Երեւան, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
6.6	Ֆաքսիմիլային կապ	(37410) 581441
6.7	Ինտերնետ	URL: //www.privatization.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ 581441 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 786-Ն որոշման, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ենթակայության՝ «Երեւանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին ամրացված եւ պետական սեփականություն հանդիսացող օտարման ենթակա տրանսպորտային միջոցը

Հ/Հ	Գույքի անվանումը	Թողարկման/ձեռքբերման տարեթիվը	Գնահատված արժեքը 15.02.08թ. դրությամբ /դրամ/	06.10.08թ. աճուրդի		21.10.08թ. աճուրդի		05.11.08թ. աճուրդի		20.11.08թ. աճուրդի	
				մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «Մերսեդես Բենց 290CD», (մ/հ189 UL 67, շարժիչը՝ N60294210002360)	1995թ./2001թ.	1374500	1030500	51525	824400	41220	659520	32976	527616	26381

Հ/Հ	Գույքի անվանումը	05.12.08թ. աճուրդի		22.12.08թ. աճուրդի		07.01.09թ. աճուրդի		22.01.09թ. աճուրդի	
		մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «Մերսեդես Բենց 290CD», (մ/հ189 UL 67, շարժիչը՝ N60294210002360)	422093	21105	337675	16884	270140	13507	216112	10806

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 786-Ն որոշման՝

-Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարը աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո մեկամսյա ժամկետում աճուրդի հաղթողի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 18000 դրամ (ներառյալ ԱԱՀ), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վճարներն ու տուրքերը.

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 12:00-ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ Ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտքագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը.

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտերին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00): Ավտոմեքենան գտնվում է՝ Ք. Երեւան, Հաղթանակի 2-րդ փող. տուն 45:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավար:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Տանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ առնվազն նվազագույն հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Վաճառվող լոտերին ծանոթանալու համար զանգահարել 652771 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն հետո, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 31-ի թիվ 815-Ա որոշման, «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված օտարման ենթակա տրանսպորտային միջոցը

Հ/Հ	Գույքի անվանումը	Թողարկման տարեթիվը	Գնահատված արժեքը 28.03.08թ. դրությամբ /դրամ/	06.10.08թ. աճուրդի		21.10.08թ. աճուրդի		05.11.08թ. աճուրդի		20.11.08թ. աճուրդի	
				մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ՎԱԶ-21213» (մ/հ 201 LS 03), շարժիչը՝ 5944868, թափքը՝ N XTA 21213 OY 1499582	2000թ.	204000	204000	10200	163200	8160	130560	6528	104448	5223

Հ/Հ	Գույքի անվանումը	05.12.08թ. աճուրդի		22.12.08թ. աճուրդի		07.01.09թ. աճուրդի		22.01.09թ. աճուրդի	
		մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ՎԱԶ-21213» (մ/հ 201 LS 03), շարժիչը՝ 5944868, թափքը՝ N XTA 21213 OY 1499582	83559	4178	66848	3343	53479	2674	42784	2140

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 31-ի թիվ 815-Ա որոշման՝

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետը աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո աճուրդի հաղթողի հետ մեկամսյա ժամկետում կնքում է առուվաճառքի պայմանագիր, դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված՝ 18000 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վճարներն ու տուրքերը:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 14:30-ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ Ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտքագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ»-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը.

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00): Ավտոմեքենան գտնվում է՝ ՀՀ Սյունիքի մարզ, Կապան, Գարեգին Նժդեհի 1, մարզպետարան:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավար: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Տանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում վաճառված յուրաքանչյուր լոտի գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Վաճառվող լոտին ծանոթանալու համար զանգահարել՝ 28-78-30 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀԻՃՈՂՈՒԹՅՈՒՆ...

Նորայր Ադալյանի «Սեւ քառակուսի կարմիր անապատում» վեպը

ՆՈՐԱՅՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Նորայր Ադալյանի **«Սեւ քառակուսի կարմիր անապատում»** վեպում հեղինակը ոչ թե խոսում է անցյալի, այլ ներկայի հետ եւ բացում իր հոգու այն էջերը, որոնցում ասես «տեսագրված» է Եղեռնը: Արյան հիշողության առարկայականություն՝ այս տեսանկյունով է գրողը ինքնասուգում կատարում:

Ն. Ադալյանը կարող է հոր՝ երզնկացի Մարտիրոսի աչքերով տեսնել ու տեսածը պատմել, մասնակից լինել «կարմիր անապատի սեւ քառակուսու» անցուդարձին, քառավանի 178 մարդկանցից մեկը լինել:

Թումանյանն է մեր ժողովրդին համեմատել Ճամփա ընկած քառավանի հետ: Քառավանի ճամփան դրամատիկ իրադարձությունների հրապարակ է: Այստեղ ընկածների թիվը ճիշտ ու ճիշտ է: Ն. Ադալյանը Եղիշեի օրինակով տալիս է ընկածների անունները: Հարություն՝ անուն առ անուն. ահա նոպատակը:

Գրողը Երզնկայի պատումը վաղ էր արել («Կապույտ Երզնկա»), տուրք տվել կարոտի գրականությանը, սակայն նոր վեպում փոխում է պատումի նոպատակը: Նա մտովի չի գնում Երզնկա, ժամանակների հեռվից չի խոսում ինքն իր եւ ծննդավայրի հետ: Ադալյանը վերադրում է Եղեռնը, որովհետեւ Եղեռնը ապրում է իր մեջ: Գրողի հոգում սեւը, ծուխը, ճիչը, մահը այն օրերինն են:

Վիպասանը օգտագործում է Եղիշեի պատմության, «Սասնա ծռեր» էպոսի, Աբովյանի, Ռաֆֆու վեպերի պատումներին առնչակցող ձեւեր, ընթերցողի համար ճշտելով իր ստեղծագործության գաղափարական սահմանները, փորձելով հաստատել պատմական արժեքները: Նա ընթերցողին շրջագայության է տանում Արեւմտյան Հայաստանով մեկ: Նպատակը թե՛ պատմական աշխարհագրության «դասերն» են, եւ թե՛ կոտորածի, զուլումի պատկերումը:

«Սեւ քառակուսի կարմիր անապատում» վեպը դրվագային է: Դաժան ճակատագիրն է միահյուսում դրվագները:

Վեպում իր տեղն ունի նաեւ հերոսական-ասքայինը: Հեղինակն, այնուամենայնիվ, կենտրոնացած է եղեռնապատումի վրա, ցանկանալով ներկայացնել Եղեռնը՝ հակագրաբանական իր ողջ սարսափով: Կյանքը դադարում է նաեւ ապրող մարդու ներսում: Հիշենք տիկին Սիրունյանի խոսքերը՝ «Քար կուզեմ ըլլալ, չորացած ծառ մը կուզեմ ըլլալ, վախճան, վերջավորություն»:

Վեպի գաղափարը ծավալվում է հակագրաբանական մութ ուժի շուրջ:

Մուրադի տան վրա հարձակված թուրքերը բարձրաձայն հղանում են սպանելու՝ նախամարդուն բնորոշ ձեւեր: «Մի՞թե ունայնության համար ստեղծեցիր մարդուց բոլոր որդիները»: Հեղինակն է պատասխանում՝ այո: Տեղահանված, մահ տեսած հայը ունայնության համար է ստեղծվել, որպես էլ ճիգ ու ջանք թափի գոյությունը շարունակելու համար:

Դա չեն վկայում աչքերի ու ուրի վրա չոր աղ նետելու, ճզմված բուի վերսին թռիչքի եւ այլ պատկերները:

Աստծու մեջ մեռնում է ստեղծումը: Դախտի գետը փոխվում է դժոխքի գետի: Մինչեւ Արաքսի ափ անցնելը քառավանն անցնում է զոհասեղանի վրայով: Երզնկան չիջավ զոհասեղանից, նա հետ՝ ողջ Արեւմտահայաստանը: Երզնկայի պատկերը իր որդիներին ետ, դեպի իրեն էր կանչում:

Քաղաքի վերջին պատկերի դիմաց դեպի ծննդավայր շրջվեցին Փառանձեմ տուտուն, խահվեճի Արամը՝ իր ընտանիքով, Սիմոն Տեր-Մարտիրյանը, Արտավազդ Հովեյանը՝ թոռան հետ, Սիրարփին, Եռոքը, Աննա ու Սոֆի քույրերը եւ էլի ուրիշներ: Նրանք դուրս են գալիս Նոյ նահապետի տապանից եւ ընդունում ջրհեղեղը:

Հետո, երբ քառավանը առաջ էր գնացել, Հեթումն է խնդրում՝ «Ինձ տարեք իմ քաղաքը» (նախընտրելի է ծննդավայրում մեռնելը): Ցուքուրյան Կարապետ աղան ավելի ուշ է վերադառնում («Կուզեմ մերիններուն ոգիին քով ըլլալ»): Ես դարձի էպիկական թելը չի կտրվում: Ոսկե ձին է գնում, վերադառնում: Քարավանը տեղ հասցնելուն պես՝ Մգրոն: Վերադարձը նաեւ Ներսես Ալթունյանի մտքում էր:

Վերադարձողները քաշվում են բուն էպիկականության տարածք:

Վեպի կառուցվածքում էական տեղ ունեն խորհրդանշանները, հատկապես Բաբիոն ծաղիկը: Բաբիոնը տեսել է Արաբոն, պատմել Աղբյուր Սերոբին, նա՝ Գեւորգ Չաուշին, Չաուշը՝ Քեռիին, սա էլ՝ Անդրանիկին, Անդրանիկը՝ Մուրադին...

Մենք հանդիպում ենք էպոսի փոխանցական գծին:

«Սեւ քառակուսի» եւ «կարմիր անապատ» կապակցությունները սոսկական համադրություններ չեն: Պատմական հիշողությունը սեղմվում է սեւ քառակուսու մեջ: Այստեղ են մնում Երզնկան, Բիթլիսը, Ալաշկերտը, Սեբաստիան, Դիարբեքիրը..., մեր պատմական աշխարհագրությունը: Երկրաչափական պատկերը կնքում է ճանապարհ ու ճակատագիր: Ազգի տոհմածառը («Հազար մարդ ձեռքձեռքի տված չէր կարող գրկել նրա բունը»), ներկայացվում է «կայծակնահար», «մնացել էր ահռելի, կանգուն, անթաղ կմախքը»:

Գրողը մեր ժամանակի պատվիրակն է «կարմիր անապատում»: Նա է խոսում գաղափարական վեպի բոլոր հերոսների միջոցով: Գերիշխում են անհատականացված խոսքն ու մտորումը: Սակայն, ըստ հեղինակի, մեկ անձն էլ ժողովուրդ է, ուստի մեկի խոսքն էլ բազմաձայնական է:

Ն. Ադալյանին հաջողվում է հաղթահարել ժամանակի հեռավորությունը եւ «կարմիր անապատում» տեսնել Եղեռնը: Նա կանգնում է կոտորածի գրիչների շարքում: Կարծես նա տարեգրում է հընթացս (Եղիշեի պատմության պոետիկան դրա արդյունքն է):

Քառավանը հասնում է փրկության հանգրվան, բայց չի ցավազրկվում: Ցեղասպանության չափումները անփոփոխ են:

Վեպում հանդիպում ենք մի անեծքի. «Յոթ տարի, յոթ դար, յոթ հազարամյակ քոռ նստիս, գորշ գայլ, դու ու քո ծնողները, դու ու քո եղբայրները, դու ու քո այրունակիցները, դու ու քո ազգուտակերը, քոռ, քոռ նստիք, մինչ. աշխարհի վերջ...»: Անեծքով մենք դեմ՝ ենք առնում միֆամտածողության արքետիպային շերտին:

Մյուս կողմից՝ ասես Եղիշեն անուն առ անուն հաշվել է տալիս ընկածներին:

Վեպում անցկացվում են կանխատեսական չափումներ: Սուսանի դեռ չծնված որդու ինչ դառնալու վերաբերյալ խոսակցությունն արդեն կանխատեսական է: Սուսանը վճռում է.

- Աստծո կամքի ֆիդայի թող դառնա...

Մայրը դեմ է «չոջուխի» բանաստեղծ ըլլալուն, որովհետեւ «թուրքը բանաստեղծներուն մոլեռանդ ատելությամբ կվերաբերի, քարով կջախջախե անոնց պայծառ գլուխները»: Հասարակ զրույցը բնավորությունների ճնարական եւ էպիկական գծերի բացահայտման ամենալավ միջոցն է: Կերպարը ներկայանում է նույնիսկ մեկ առարկայի առկայությամբ: Մամփրեն քառավանի մեջ մանգաղը ձեռքին է: Գործիքը կերպարի էպիկական հենարանն է: Մանգաղը եւ էպոսի գութանը նույնական են, թեեւ մանգաղը նաեւ զենք է գործածվում:

Վեպում կերտված են կանանց փխրուն ու նաեւ ասքային հատկանիշներով աչքի ընկնող կերպարներ (Մուրադի կինը): Սեւ բուի ժամանակներում կինը իրենով աշխարհի չարը մեղմելու մղում ունի:

Սուսանը նամակներ է գրում ֆիդայի ամուսնուն եւ պահում ծոցում:

«Սեւ քառակուսում» ճնարականը սեւ ճնարական է:

Փրկվելուց հետո ինչ անել. ամեն մեկը տալիս է իր պատասխանը՝ ասես չհավատալով հնարավոր հարությանը: Անմարդկային տառապանքը ջնջել է աշխարհի հետ կապերը: Երզնկացու համար ծննդավայրից տեղահանությունը տեղահանություն է երկրի երեսից:

«Կապրե՞նք արդյոք». Ալթունյանն իրեն նման հարց տալու իրավունք չի վերապահում, քանի որ ժամանակը կիսված է Աստծո եւ բվի միջեւ: Երզնկան վերջինիս է հանձնված: Երզնկացիները նույնպես:

Բուն ժամանակի սլաքը միայնակ է առաջ տանում՝ «սուզված իր չարագուշակ կոնչյունի, գիշերային հոգու, մութ աչքերի, քար լռության դավադիր զգացման ճահիճը»: Բուն քառավանին ուղեկցող գիշերային ժամանակն է:

Վեպի ավարտական մասում կրկնվում է «Ավարայրի ցուցակը»՝ «Լեռնը մեռած էր, Կարոն մեռած էր, Հաբեթը վիրավոր շարունակում էր կռվել»:

Փրկության դռնից անցնելիս տրվում են մնացորդաց անունները: Մտից մայրանում գառավածների թվում է գաղթական ձին, որը, սակայն, բռնում է ելից ճանապարհը: Կորուսյալ երկրում հայտնվում է որպես ոսկե ձի: Ամեն ինչ մնում է բուի կեռ կտուցից կախված նժարին: Հայոց Եղեռնի հիշատակարանը փակվել չի կարող. շարունակվում է: Նորայր Ադալյանը իր արյան մեջ արթուն Եղեռնն է պատկերել եւ հայտնաբերել բուի նժարը:

Երկիր Նաիրի-Երզնկան «կարմիր անապատի սեւ շրջանակում» վերջացած աղոթք է: Այս վեպը հիշեցնում է բուի ժամանակից դուրս աղոթքը: ■

Երվանդ Օշականը՝...

Գ էջից

նշանակություն ունեն՝ նկատի ունենալով թուրքերի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման ՀՀ իշխանությունների համոզումը: Այդ փաստաթղթերից են Պողոս Նուբարի նամակները ֆրանսիական եւ անգլիական մի քանի ազդեցիկ թերթերի խմբագրություններին՝ ի պատասխան նրանց հրապարակումների, ինչպես եւ անվանի գրչի ընդարձակ ելույթը Փարիզում Ֆրանսիական Ասիայի կոմիտեի՝ 1913թ. հունիսի 14-ին կազմակերպած ժողովին, որը զբաղեցնում է ամբողջ 16 էջ (էջ 86-100): Իր ելույթում Պողոս Նուբարը նշում է, թե «Ասիոյ մեր հայրենակիցներուն բախտը կապուած է (Օսմանեան-Գ. 3.) կայսրութեան բախտին հետ» ու անմիջապես ավելացնում. «Հայերը գիտեն ասիկա եւ ոչիչ բան չեն խնդրեր, այլ՝ Օսմանցի մնալ, պայմանաւ որ իրենց կեանքը յարգուի, որ իրենց կիներն ու աղջիկները այլեւս չբռնաբարուին, որ իրենց ինչքը այլեւս թալանի չենթարկուի կամ չյափշտակուի, որ վերջապէս կարենան աշխատիլ խաղաղութեան մէջ: Այս է Բարենորոգումներու ամբողջ գոյութեան պատճառը» (էջ 90): Պողոս Նուբարը հավատում է թուրքական իշխանությունների բարեփոխված լինելուն, երբ նույն ելույթում հաստատում է. «Թուրք քաղաքական անձնատուութիւններ, վերջին դէպքերէն (նկատի ունի Պալկանեան առաջին պատերազմը - Գ. 3.) խրատուած, իրենց հայրենիքի փրկութիւնը միայն բարենորոգումներու գործադրութենէն սպասելով, յստակատեսութիւն ունեցան հասկնալու թէ զանոնք ազդեցիկ ընելու միակ կերպն է (եւրոպական պետութեանց - Գ. 3.) հակակշիռը: Եւ պատճառներ ունինք հաստատելու թէ իշխանութեան գլուխ գտնուող կուսակցութեան («Իթթիհատ վէ Թէրաքքի» - Գ. 3.) անդամներուն մէջ, բազմաթիւ եւ կարեւոր անդամներ կան, որոնք նոյնը կը մտածեն եւ միայն ձեւակերպութեանց մասին կը տարբերին մենք» (էջ 98): Իր ելույթի վերջում, Պողոս Նուբարը համոզում է հայտնում, թե եվրոպական պետությունները, «Թուրքիոյ հետ համաձայն, վերջապէս պիտի լուծեն Հայկական Հարցը» (էջ 100): Իսկ թե իթթիհատականներն ինչպե՞ս իրագործեցին հայկական «բարենորոգումները» եւ թուրքերի համար ինչպե՞ս լուծեցին Հայկական հարցը՝ բոլորիս է հայտնի եւ որի հետեւանքները կրում ենք մինչեւ այսօր (հնարավոր է, որ էլ ավելի ծանր հետեւանքներ կրենք, եթե դասեր չքաղենք մեր նորագույն պատմության թուրքական բաղադրիչից)...

Լոնդոնի «Թայմզ» թերթի խմբագրությանն ուղղած իր 1913 թ. մայիսի 15-ի բացատրական նամակում, հայ անվանի գործիչը ձեւակերպում է հայկական պահանջները. «...պատգամատրութիւնը (Ազգային Պատուիրակութիւնը - Գ. 3.) յանուն հայերու չպահանջէր ո՛չ բաժանում, ո՛չ անկախութիւն, ո՛չ քաղաքական ինքնավարութիւն- ինչ որ ամէնէս ալ հայաբնակ գաւառներու ցեղագրական եւ աշխարհագրական պայմաններուն մէջ ցնորատեսութիւն մը կը նկատենք.- մենք կը պահանջենք միայն Պերլինի Դաշնագրին 61դ յօդուածովը խոստացուած բարենորոգումները, որոնք Կ. Պոլսոյ Պետութեանց դեսպաններուն կողմէ ծրագրով մը բանաձեւուած են, 1895 Մայիս 11ի յիշատակագրին մէջ» (էջ 103):

Գրքում Երվանդ Օշականը թարգմանաբար ներկայացրել է նաեւ «Լ'Օմ լիբրը» թերթի խմբագիր Ժորժ Քլեմանսոյի «Հայաստանի ջարդերէն ետքը» յօդուածը, ուր ֆրանսիացի գործիչը վեղուծում է թուրքերի հակահայկական քաղաքականության սնտեսական բովանդակությունը. «Թուրք խուժանին մեծ ատելութիւնը հայերուն դէմ այն է, որ այս վերջինները իրմէ աւելի ձեռներէց եւ յանդուգն են գործի մէջ եւ աւելի ճարտիկ ու խելացի՝ առեւտրի մէջ: Այն մարդուն համար, որ զէնքին ուժովը ինքզինքէ գերագոյն հռչակած է, շատ դժնդակ բան մը է տեսնալ, որ նոսաճեալը յաջող գործունէութեամբ մը կը զարգանայ, կը հարստանայ, իր ընկերային կացութիւնը կը բարգաւաճէ, մինչդեռ ենթադրեալ տէրը, ցնցոտիներ հագած կը հետեւի իր նառկիլէի ծուխին» (էջ 115-116): Քլեմանսոն իր հոդվածն ավարտում է մի համոզում-եզրակացությամբ. «Հայերուն լաւագոյն բախտաւորութիւնը այն է, թէ Պաղտատի երկաթուղին իրենց երկրէն կ'անցնի եւ առանց վերջնական խաղաղացումի վաճառականութիւնը պիտի վսանգուի: Թո՛ղ որ հայերը ապահով ըլլան, ինչ ատենէն Եւրոպա շահ պիտի ունենայ որդէսգի իրենք այլեւս չջարդուին» (էջ 120): Հանուն Եվրոպայի շահերի հայերի «ապահովությունն» արժեց մեկուկես միլիոն կյանք եւ հայոց հայրենիքի մեծագույն մասի կորուստ...

Վերահրատարակության արժեքն զգալիորեն բարձրացնում են էջատակի ծանոթագրությունները, որոնց հեղինակի ինքնությունը հստակ չէ (ենթադրում ենք, որ Տիգրան Ս. Ա. Եկավյանն է): Այս բազմատասնյակ ծանոթագրությունները արդյունք են անխոնջ աշխատասիրության, քանի որ ընդգրկում են ոչ միայն հայազգի դեմքեր, այլեւ եվրոպացիներ, եվրոպական մամուլի օրգաններ եւ այլն:

Գրքում առանձին էջերով լույս տեսած՝ Նուբար եւ ազգակից տոհմերի անդամների, հայ ու եվրոպացի գործիչների բազմաթիվ լուսանկարներն էլ ավելի են մեծացնում մենագրության արժեքը:

Վերահրատարակության մեջ տեղ են գտել մուտագրման սխալներ: Օրինակ, 1846թ. Եգիպտոսի փոխարքա է նշվում Աբբասը (էջ 10), մինչդեռ հաջորդ տողում ճիշտ է նշվել նրա գահակալման սկզբի տարեթիվը՝ 1849, էջ 54-ի էջատակում կորել են երեք ծանոթագրություններ, հանդիպում ենք մայիսի 32-ի (էջ 55, հավանաբար պետք է լիներ 23): Ծանոթագրություններում եւ կան թվականների եւ տեղեկությունների որոշակի թերիներ: Այսպես, շարադրանքում 1912 թվականին հիշատակվող Ամենայն Հայոց կաթողիկոսի ծանոթագրությունը (էջ 13) վերաբերում է Մատթեոս Բ Իզմիրլյանին, մինչդեռ այդ թվականին Գեւորգ Ե Սուրենյանցն էր գահակալում Մայր Աթոռում, հայտնապես սխալ է նշվել Եգիպտոսի 20-րդ դարի սկզբի վարչապետներից Մուսաֆա փաշա Ֆեհմիի պաշտոնավարման ժամանակաշրջանը՝ 1805-1809թթ. (էջ 38), 1913թ. ապրիլին հիշատակվող՝ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար է. (Էդուարդ) Գրեյը էջատակի ծանոթագրության մեջ շփոթվել է 1764-1845թթ. ապրած Մեծ Բրիտանիայի վարչապետ սըր Ըրլ Գրեյի հետ (էջ 121): Փոխանակ «աներեր», գործածվել է համատարած սխալ դարձած «աներհայր» բառը (էջ 20):

Այս թերիները երբեմն չեն նսեմացնում Երվանդ Օշականի հեղինակած այս կենսագրության եւ նրան կցված ծանոթագրությունների պատմաբանասիրական մեծ արժեքը:

Գիրքն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ: ■

Սարոյանի «Ապարանքանը»

ՇԱՀԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Ձեր գործերը լույսի խուրձ են, որ տեսանելի են դարձնում գեղեցկությունն ու արժանիքն այն մարդկանց ու այն աշխարհի, ուր նրանք ապրում են: Ձեր նկարները հագեցնում են բոլոր նրանց հոգին ու միտքը, ովքեր ընդունակ են ընկալել դրանք: Ձեր կտավները հիացնում ու սեր են հարուցում կյանքի պարզ ու անկեղծ երեւույթների հանդեպ, հողի, առվակի, ծառերի, լույսի, բույսերի, ծառերի, ցորենի, մրգերի, ջրի, գինու, բուն ճշմարիտի նկատմամբ:

Ի՜նչ երջանիկ ենք, որ ունենք Ձեզ, Ձեր այրերը, Ձեր ձեռքերը, Ձեր բարեպաշտ հոգին, Ձեր արվեստը»:

Վ. Սարոյան

Ժակլին Ղազարյանը եւ Սարյանի կտավը:



Մ. Սարյան. «Վ. Սարոյանի դիմանկարը», 1960 թ.

Սարոյանը Սարյանի ցուցահանդեսում, Փարիզ, 1980 թ.
Լուսանկարը՝ Ծ. Խաչատրյանի

Մարիզում, ցուցահանդեսի բացումից մի քանի օր անց երջանիկ պատեհություն ունեցա հանդիպելու Վիլյամ Սարոյանի հետ: Նա ցուցասրահ մտավ Կարիկ Պասմաջյանի հետ եւ տեսնելով պատերի տակ նստած երիտասարդներին, հարցրեց. ինչու՞ եք այդպես նստած: Երիտասարդները պատասխանեցին.- այս նկարների տակ լույսը շատ հաճելի է... Սարոյանն ուրախացած ասաց. մենք ոտի վրա ավելի ուժեղ կտեսնենք այդ լույսը...

Եկավ Գառզուն: Սարոյանի հետ նրանք սկսեցին դիտել նկարները: Եկան եւ ուրիշներ՝ Կենտրոնի թանգարանային բաժնի տնօրեն պրն. Հյուլտենը, մի փոքր էլ ուշ՝ ռուս հայտնի բանաստեղծ Ռոժդեստվենսկին... Սարյանի եւ Կանդինսկու ցուցահանդեսները միասին դիտելուց հետո Գառզուն հրավիրեց բոլորին հանդիպելու երեկոյան...

Եղավ մի պահ, որ Սարոյանի հետ փողոցում առանձին էինք: Որեւէ գրությամբ հանդես գալու իմ առաջարկին, նա պատասխանեց: - Կարեւոր, եղած բան մը եթե հիշեմ, կըլլա...

Հաջորդ առավոտյան ցուցահանդեսի դահլիճում կանգնած էի, երբ հանկարծ լսեցի Սարոյանի բարձր ձայնը, - Շահա՜ն, Շահա՜ն, ինձի նեղ չեն ձգեր: Վազեցի դեպի դուռը: Տոմս չէր վերցրել եւ երրորդ հարկի մուտքից ներս չէին թողնում: Երբ մտանք ցուցասրահ, Սարոյանը գրպանից հանեց մի թերթ, երկու էջերն էլ շատ խիտ մեքենագրված, ապա ասաց. - Գիշերը հիշեցի, 1935-ին, երբ Բաթումեն նավ նստա Օդեսա երթալու համար, սկսա նայիլ ինձի նվիրված գիրք մը: Հայկական հեքիաթներ էին, շատ գեղեցիկ իլյուստրացիաներով: Ատոնք Սարյանի գծածներեն էին... Առտուն կանուխ ելա ու գրեցի: Քանի մը օր հետո կտպվի «Ինտերնեյշընըլ հերալդ թրիբյունի» մեջ: Ասիկա ալ քեզի կնվիրեմ,- եւ էջի մի փոքր բաց մնացած տեղում ասածը ձեռագրով նշեց...

Մեր հանդիպումները կրկնվեցին: Մի օր քայլեցինք դեպի փարիզյան իր բնակարանը: Փողոցում մի արհեստանոց մտանք: - «Աս մարդը կտեսնա՞ս, -հանկարծ պոռթկաց Սարոյանը, - դերձակ է, իմ ալ մոտիկ բարեկամս է: Միշտ կգործե: Գործող մարդը բարի սիրտ կունենա... Ասկե լավ բան ո՞ր կրնաս գտնալ...:

-Ամեն տարի, քանի մը ամիս ես հոս կանցնեմ: Փարիզի աս փողոցները կարծես խոշոր տունի մը բակ ըլլան: Դուրս կելլաս եւ բոլորին կտեսնաս, բոլորն ալ՝ իրարու մոտիկ են, իրար բարեկամ, բոլորի բերաններուն՝ «փարդոն», «մերսի» եւ երեսներուն ալ՝ միշտ ժպիտ: Ասիկա կուգա Փարիզի սիրտեն եւ կնշանակե զիրար հարգել, զիրար սիրել: Ով չուզեր աշխարհը ասանք տեսնալ...

Մի առիթով էլ հարց տվի, թե Սարյանը ձեզ երկու անգամ է նկարած, մեկը տխուր դեմքով, մյուսն ալ հպարտ: Տխուր դեմքովը իրեն է պահած, իսկ մյուսը՝ կարծեմ ձեզի է նվիրած: - Ո՛չ, ո՛չ, միանգամից ասաց, ինձի Արարատ մը նվիրած է, անանկ Արարատ մը, որուն վիզեն կարծես աղարանջան կախված է: Նկարը Սան-Ֆրանցիսկոի տունս կպահեմ, ասիկա իմ աղարանջանս է...

Կարճ ժամանակ անց Սարոյանը անսպասելի վախճանվեց: Երբ Լոս Անջելեսում էի, ուզեցի անպայման գնալ Սան-Ֆրանցիսկո: Մեծանուն գրողի զարմուհին՝ Ժակլին Ղազարյանը ընդառաջեց խնդրանքիս եւ թույլ տվեց լուսանկարելու Սարոյանին նվիրած Սարյանի «Աղարանջանը»...

Վ. ՍԱՐՈՅԱՆԸ Մ.ՍԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ընթերցողին ենք ներկայացնում հատվածներ 2000 թվականին մեր թերթում լույս տեսած Վիլյամ Սարոյանի «Մարտիրոս Սարյան» հոդվածից: Թարգմանությունը՝ Կարոլիս Սուրենյանի:

Մարտիրոս Սարյանի ստեղծագործության գրեթե հինգ տասնյակ նմուշների հոյակապ ցուցահանդես է բացված այժմ Պոմպիդու կենտրոնում՝ ներշնչյալ մարդկանց համար լուսաբանիչ կրթության այդ փառավոր դպրոցում, որ արեւմտյան աշխարհի մեր մշակութային սիրելի կենտրոնն է: Գնացեք ու ինքներդ տեսեք, թե ինչպես մի մարդ, հավատարիմ ու բերկրալի նվիրումով իր գործին, իր արհեստին, իր կոչումին, կարող է իմանալիորեն բացահայտել իր պայծառ հոգին, ձեր իսկ պայծառ հոգին ու պայծառ հոգին բոլոր վերապրողների, ինչպես նաեւ բոլոր նրանց, ովքեր գտնե բախտավոր են եղել այնքան, որ չեն կրել որեւէ կարգի բնաջնջման ենթարկվելու փորձությունը՝ լինի հավասարաչափորեն, լինի անհատապես:

Երբ 1935-ի մայիսին Երեւան գնացի, Մարտիրոս Սարյանը հիսունհինգ տարեկան էր, իսկ ես, նման ազգանունով՝ Սարոյան, խանութ տարով փոքր էի իրենից, բայց բնավ չգիտեի նրա մասին, ինչպես Հայաստանում ոչ ոքի մասին չգիտեի առհասարակ ու հենց դրա համար էլ, անշուշտ, գնացի այնտեղ առաջին իսկ դրամով, որ վաստակել էի որպես գրող:

Ուզում էի տեսնել երկիրը, իմ հոր ու իմ նախնիների բնաբխարհը եւ շնչել այն օդը, որ մենք բոլորս շնչել ենք դարերով:

Ճիշտ այնպես, ինչպես բոլոր ժողովուրդները մարդկային ցեղի, հայերը սերտ կապված են իրենց հողին, իրենց աշխարհագրությանը, իրենց չշնչած օդին եւ բոլոր այն բաներին, որ կազմում են patrie-ի, ինչպես ֆրանսիացիներն են ասում, այսինքն հայրենիքի յուրահատուկ ճշմարտությունը: Հրճվում էի քայլելով աշխարհի մի քաղաքում, ուր բոլորը հայ էին: Հանդիպած ամեն մի անձի դեմքը ինձ թվում էր մի առեղծվածի, մի հանելուկի, մի ճշմարտազանցության ցուցադրումն է կարծես. յուրաքանչյուր դեմք շատ էլ կարող էր որեւէ ոչ հայի պատկանել, եւ սակայն յուրաքանչյուր դեմքի մեջ կար մի բան, որ շատ էլ պարզ ասում էր. «Ահա տե՛ս, մի հայ է, որ դեռ ողջ է, դեռ այստեղ է՝ մարդկային աշխարհի մեր այս քարքարոտ անկյունում»:

Ու հետո հաջորդ բանը եղավ այն, որ ես նստած էի նրա արվեստանոցում Երեւանի ստի մոտ, եւ 1960 թվականն էր, ու նա ութսուն տարեկան էր, ես՝ հիսուներկու: Նա իմ դիմանկարն էր անում, եւ ես ջանում էի օգնել նրան, չընդունելով անշարժ դեմք, հանգիստ արտահայտություն, լուռ դիմակ, այլ իմ սովորական անզգոյշ ոգեւորությունը հայտնելով մեր վերապրելու մասին:

Գուրգեն Մահարին ինձ ասաց, որ անցյալ օրը քեզ տեսել է Մոսկվայում, եւ դու մի խոշոր բեղ ես ունեցել, -ասաց նա: - Սպասում էի, որ տեսնեմ այդ բեղը... ո՞ւր է:

Ստիպվեցի խոստովանել, որ կարճացրել եմ բեղս Մոսկվայից թռչելուց առաջ: Ունայնամտությունից էի արել այդ բանը՝ հուսալով, որ հիսուներկու տարեկան հասակի հետ կարճ բեղը, խոսք է, ավելի լավ կգնա: Շատ չշեշտելու համար այս կետն ասեմ, որ խոշոր բեղը կարճացրել էի այնքան, ինչքան ինձ թվում էր, ընդունելի կլինի Հայաստանի հայերի աչքին, ինչպես ուրիշ որեւէ մեկին էլ, որ ինձ կարող էր տեսնել հարեւանցիորեն:

Երեւանում արկածամահ լինելուց մի քանի տարի առաջ Մինաս Ավետիսյանը, իր տանն ու արվեստանոցում ողբերգական հրդեհի հետեւանքով, հանկարծ իրեն խաբված զգաց, իր ավելի քան քսան տարիների ստեղծագործության մեծ մասը կողոպտված: Ծերունի վարպետն իր ներկերը տվեց նրան ու ասաց.

-Մինաս, շարունակիր աշխատել, մի՛ վհատվիր:

Եվ կրտսեր նկարիչը շուտով կրկին ստեղծեց նույնքան նկարներ, որքան հրդեհն էր կորզել, եւ ավելին էլ արեց, ու թեպետ կորցրած նկարները կորան ընդմիշտ, դրանց տեղ ստեղծածները, ինչ խոսք, ավելի ուժեղ են նույնիսկ: Եթե չլիներ հրդեհը, եթե Մարտիրոս Սարյանը չտար իր պարզ հայրական խորհուրդը նրան, ու եթե Մինաս Ավետիսյանը չունենար իր մեջ մղումը, պահանջը, պարտադրանքը՝ գտնելու այդ աղետը հօգուտս հաղթահարելու ճշմարիտ ուժը, մենք՝ մնացյալ մարդիկս, չէինք ունենալու հոյակապ նկարները Մինաս Ավետիսյանի, որի ստեղծագործությունը տարիների ընթացքում պիտի ավելի մեծանա իր նշանակությամբ ու իմաստով:

Հայաստանը շատ փոքր, շատ քարքարոտ երկիր է, բայց ինձ ծանոթ ամեն մի հայ իր երկիրն աշխարհի ուրիշ որեւէ երկրի հավասար է համարում ֆիզիկական մեծությամբ, գուցե որովհետեւ Հայաստանը լի է հայերով, որոնք իրենց էլ, իրենց երկիրն էլ ու միասին աշխարհն էլ խաղաղ պահելով են զբաղված, գիտության ասպարեզում՝ ինչպես աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը, երաժշտության մեջ՝ վերջերս հանգուցյալ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը եւ պարող Առնո Բաբաջանյանը, եւ շատ ու շատ ուրիշներ՝ ճարտարապետներ, քանդակագործներ, գիտնականներ, անցյալի մեծ գանձերի պահապաններ, ընդ որում այն երիտասարդը, որ Երեւանում Մարտիրոս Սարյանի թանգարանի պահպան տնօրենն է՝ Շահեն Խաչատրյանը:

Դուք կգտնեք նրան ցուցահանդեսում եւ կվայելեք նրա խանդավառ նվիրվածությունը հայ նկարչության մեծ ալեւոր երիտասարդ Մարտիրոս Սարյանին: ■

«Եթե այսպես շարունակվի, ապա Հայկական հարցի կվերածվի նաեւ իրականը»

Հայտարարում է Աֆղոնիստանի զորամասի նախկին հրամանատար Էդդալ Սարզեյբեֆը

Հոկտեմբերի 5-ին Իրանին եւ Իրաքին սահմանակից Հաքիյարի վիլայեթի Շեմդինլի գավառի Աֆղոնուն գյուղի մոտակայքում տեղակայված Աթաթուրքի անվան զորամասի վրա PKK-ի կատարած հարձակումն ու առավել եւս 17 թուրք զինծառայողի սպանությունը, այն էլ գլխավոր շտաբի տվյալներով միայն, պատճառ դարձան, որ թուրքական իրականության մեջ վերսին ճնշարկման առարկա դառնա քրդական այս կազմակերպության դեմ պայքարում ԱՄՆ-ի համագործակցության նպատակահարմարությունը:

Թուրքական կենտրոնական թերթերը դրան արձագանքեցին հետեւյալ հարցադրմամբ. «Եթե զորամասի վրա հարձակումն իրականացնող PKK-ականները Թուրքիա են ներթափանցել Հյուսիսային Իրաքից, ապա ինչո՞ւ ամերիկյան հրամանատարությունը ժամանակին չի զգուշացրել թուրքական կողմին»: Ակնարկը, ինչպես Հյուսիսային Իրաքի, այնպես էլ «Քուրդիստան» շրջանի իշխանությունների վրա ամերիկյան հրամանատարության հաստատած վերահսկողության մասին է: Չպետք է սակայն մոռանալ, որ զորամասի վրա կատարված հարձակումից 10 օր առաջ, տեղեկանալով դրա նախապատրաստման մասին, այդ նույն թերթերի վկայությամբ, զինված ուժերի գլխավոր շտաբին զգուշացրել էին Ազգային հետախուզական կազմակերպությունը՝ MIT-ը եւ Անվտանգության գլխավոր վարչությունը:

Եթե թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբը չի կանխել Աֆղոնուն զորամասի վրա կատարված հարձակումը՝ անտեսելով նախազգուշացումները, կնշանակի ահաբեկչությունը երկրում արմատախիլ անելու կարգախոսով PKK-ի դեմ ծավալվող ռազմական գործողությունները ընդամենը ֆոն են քաղաքականության համար կամ էլ, ինչպես Վաշինգտոնում էին հայտարարել, Թուրքիայում ԱՄՆ-ի դաշնակիցը բանակն է՝ ի դեմս գլխավոր շտաբի:

Քննարկումները նոր հարթարակումներով շարունակվում են: Դրանցից թերեւս ամենաուշագրավը Աֆղոնուն զորամասի նախկին հրամանատար, պատշտոնաթող գնդապետ Էդդալ Սարզեյբեֆի հետ հարցազրույցն է, որը երեկ «Քրդական հարցը Հայկականի է վերածվելու» վերնագրով հրապարակվել է «Հաբեր ակտուել» կայքէջում: Նախքան հարցազրույցին անցնելը նշենք, որ Սարզեյբեֆը 1992-94 թթ. ծառայել է Շեմդինլիում, անմիջական մասնակցություն է ունեցել 1992-ի սեպտեմբերի 13-ին Աֆղունուն զորամասի պատշտոնությանը, որի ընթացքում PKK-ն 22 զինծառայող էր սպանել: 2005-ին իր դիմումի համաձայն թոշակի անցնելով, գնդապետ Սարզեյբեֆը գրի է առել «Դավաճանության ականատեսն եմ» գիրքը, որտեղ պատմում է Աֆղունուն վրա կատարված հարձակումների եւ PKK-ի հետ կռիվների մասին իր հուշերը:

Սարզեյբեֆը, պատասխանելով PKK-ի վերջին հարձակման վերաբերյալ հարցերին, նշում է. «Շեմդինլիում պետություն որպես այդպիսին գոյություն չունի: Կան միայն զինվորականներ եւ բնակիչներ: Երկուսն էլ լքված են: Եթե խնդրո առարկան ահաբեկչությունն է, ապա պետությունը դրա դեմ պետք է պայքարի պետական բոլոր կառույցներով, այլ ոչ թե զորքով միայն»: Այնուհետեւ նա անդրադառնում է PKK-ի արխիվին, ասում է, որ դա շատ լուրջ արխիվ է, որտեղ մեկ առ մեկ արձանագրված է, թե որ զինծառայողին ով է սպանել: Սարզեյբեֆը պահանջում է թուրքական իշխանություններից առգրավել այս արխիվը եւ բերել Սիրիայից, քանի որ հետախուզությանը հայտնի է դրա գտնվելու վայրն ու հասցեն:

Այնուհետեւ նա կարծիք է հայտնում, որ PKK-ի բյուջեն տարեկան 500 մլն եվրո է կազմում, գումարները փոխանցվում են Շվեյցարիա, «Քրդերի համերաշխության» հիմնադրամի հաշվեհամարին, ապա դիմում է իշխանություններին. «Եթե դուք միտումնավոր եք հանդուրժում այդ գանձարանի գոյությունը, կնշանակի զենք եք բարձրացնում մեր զինվորի վրա»:

Վերջում պատշտոնաթող գնդապետ Էդդալ Սարզեյբեֆն ավելացնում է. «Թուրքիան կանգնած է մեծ վտանգի առջեւ: Քրդական հարցը կվերածվի Հայկական հարցի: Հայկական հարցն ու, այսպես կոչված, Քրդական հարցը միմյանց համադրությունն են: Երբ դադարեցին ԱՍԱԼԱ-ի սպանությունները, հայասանյան պետությունը հարցը վերածեց հայերի ցեղասպանության եւ փոխադրեց միջազգային քաղաքականության ասպարեզ: Հիմա էլ քրդերն են սպանություններ կատարում: Սակայն թիկունքում պետականություն չունեն: Վաղը, մյուս օրը, երբ քրդական պետություն ստեղծվի, Քրդական հարցը կսպանա այն բնույթը, ինչ Հայկականը սպանավ: Հայտարարում եմ, որ ոչնչացվել է 32 հազար ահաբեկիչ: Ոչնչացվածների մեծամասնությունը քաղված չէ: Հյուսիսային Իրաքում Կանդիլ սարը ռմբակոծեցինք: Մեռածներն առ այսօր հողին չեն հանձնվել: Եթե քրդական պետությունը ստեղծվի, ապա Բարզանի կոչված այդ մարդը բոլորին կկանչի Հյուսիսային Իրաք եւ կասի. «Թուրքիան կոտորած է սարքել, ահա ձեզ ապացույցը: Խնդրեմ, սպանվածների մնացորդներն են»: Հետեւաբար, մենք այսօրվանից պատրաստ պետք է լինենք, որ կարողանանք ասել. «Հիրավի, 100 ահաբեկիչ սպանել ենք, բայց փոխարենը 33 զոհ ենք տվել»: Այլապես դժվար կլինի»:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԱՅԵՆ

«Հայերը՝ հօգուտ Օբամայի»

Լոս Անջելեսից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ «Հայերը՝ հօգուտ Օբամայի» շարժումը նպատակ ունի ամբողջ երկրում քարոզարշավ կազմակերպել հօգուտ նրա նախագահ ընտրվելու: Տարբեր նահանգներում գործող իր մասնաճյուղերով այդ շարժումը փորձում է Բարաք Օբամայի օգտին քվեարկող հայերի թիվը հասցնել ռեկորդայինի:



Հաղորդագրությունն անդրադառնալով նախագահական երկու թեկնածուների՝ դեմոկրատ Օբամայի եւ հանրապետական Մակքեյնի երկրորդ հեռուստաբանավեճին, նշում է, որ առաջինը ջախջախիչ հաղթանակ տարավ երկրորդի նկատմամբ եւ մի անգամ եւս իր հստակ կեցվածքը արտահայտեց ցեղասպանությունների կանխարգելման վերաբերյալ: Պատասխանելով բանավեճը վարող Թոմ Բրոկոուի հարցին, թե ի՞նչ է լինելու իրենց «դոկտրինան մարդասիրական այն ճգնաժամերի դեպքում, որոնք կապ չունեն Ամերիկայի ազգային անվտանգության հետ», ինչպիսին, օրինակ, Կոնգոյի, Ռուանդայի կամ Սոմալիի դեպքերն էին, Օբաման ասաց.

«Մենք բարոյական պարտականություններ ունենք, եւ երբ ցեղասպանություն կամ էթնիկական զտումներ են կատարվում, պետք է անմիջապես գործենք եւ կանգնեցնենք տեղի ունեցածը, այլապես կհեղինակազրկվենք»: Նա ավելացրեց, որ Մ. Նահանգների ջանքերը պետք է համակարգված լինեն տվյալ տարածաշրջանի երկրների ջանքերի հետ:

Սենատոր Մակքեյնը պետք է արտակարգ շրջահայացությամբ կարողանար բարձրացնել իր վարկանիշը, բայց նա չկարողացավ հասնել իր նպատակին, բանավեճից հետո անցկացված CNN-ի հարցման արդյունքներով 54:30 հարաբերակցությամբ հաղթող է ճանաչվել Բարաք Օբաման: Նա ավելի լավ է կարողացել պատասխանել հարցերին, քան Ջոն Մակքեյնը:

CBS-նյուզի անցկացրած մեկ ուրիշ հարցման արդյունքներով այդ հարաբերակցությունը եղել է 39:27՝ դարձյալ Օբամայի օգտին: «Օբաման տնտեսության հարցերում ճիշտ որոշումներ կարո՞ղ է տալ» հարցին բանավեճից առաջ 54 դրական պատասխանի փոխարեն 68 հոգի «այո» է ասել բանավեճի ավարտին:

«Ամերիկահայ քվեարկողները երկրով մեկ արտակարգ իրադրության ականատեսը դարձան այդ օրը», նշել է «Հայերը՝ հօգուտ Օբամայի» շարժման քաղաքական տնօրեն Ջեֆ Մարությանը: «Վերջին 3 օրերին սենատոր Մակքեյնի թիմակիցները ամենատոր միջոցների էին դիմել վարկաբեկելու իրենց հակառակորդին, բայց Օբաման պահելով իր հավասարակշռությունը, կարողացավ հստակ եւ ճշգրիտ ներկայացնել իր ծրագրերը տնտեսության առողջացման եւ առողջապահության բարելավման բնագավառներում», ավելացրել է նա:

Շարունակելով իր գործընկերոջ մտքերը, շարժման նախագահ Արեն Եփրեմոսյանը հավելել է. «Սենատոր Մակքեյնը անընդհատ փորձում է սեւացնել սենատոր Օբամային, փոխանակ պարզաբանելու իր ծրագրերը»:

Հ. Օ.

Թվայնացման շնորհիվ մեր աշխատանքը, կենցաղն ու զվարճանքը ավելի կհեշտանան

Մոնրովիայում (Կալիֆոռնիա) գործող «Ֆրոնտիյր թրեյլ» (սահմանային ուղի) հեռահաղորդակցության խորհրդատվական ընկերության նախագահ Բրենդա Ջ. Թրեյնորի ստորեւ թարգմանաբար ներկայացվող հոդվածը տպագրվել է «Բիզնես լայֆ» պարբերականի (գլխավոր խմբագիր՝ Ջոն Գրիգորյան, Գլենդեյլ) 19-րդ տարվա թ. 3-ում:

Վերջին ժամանակներում դուք չեք կարող ավելի քան 30 րոպե դիտել հեռուստացույց եւ չլսել հեռարձակման կայանների թվայնացման մասին, ինչը նախատեսվում է իրականացնել 2009-ի փետրվարին: Հնարավոր է նաեւ, որ շատ զարմանաք՝ իմանալով, որ այն կարող է որոշակի ազդեցություն ունենալ փոքր բիզնեսի վրա:

Զարմանալին այն է, որ գործարարության ակնարկները կարծես չունեն հեռուստատեսության հետ: Դրանք վերաբերում են թվայնացմանը. ամեն ինչ պետք է թվայնացնել:

Հեռարձակման ազդանշանների թվայնացմանն անցնելու անհրաժեշտությունը բխում է այն հանգամանքից, որ մեր տեղեկատվության գերակշռող մասը մշակվում է թվայնացման միջոցով: Եվ եթե մեր տեղեկատվության մշակումը ամբողջությամբ թվայնացվում է, ապա միեւնույն է, թե հեռագայում ինչ ձեւով կհեռարձակվի՝ ձայնային, տեսաերիզային, թե տվյալների տեսքով: Թվային տեղեկատվությունը «բիթերի» մեծ քանակություն է այդ ճանապարհին:

Այդ գաղափարի ջատագովները ձեզ կասեն, որ թվայնացումը հնարավորություն է տալու նոր տեխնոլոգիաների միջոցով ներկայումս հեռարձակման ազդանշաններով զբաղեցված օդային ռադիո եւ հեռուստատեսային ալիքներն օգտագործել անվճար արբանյակային հաղորդումներ ստանալու համար: Մենք կարունակենք ունենալ անվճար հեռուստատեսություն, բայց դա կլինի արդեն թվայնացված տեսքով, իսկ դրա հեռարձակումն անշուշտ կպահանջի նոր սարքավորումներ:

Իսկ ի՞նչ է դա նշանակում բիզնեսի համար:

Նշանակում է, որ տեղեկատվություն հաղորդող մեր բոլոր սարքավորումները ունենալու են միանման գործառույթներ՝ մենք բոլորս հեռախոսազանգերին պատասխանելու ենք հեռուստատեսության միջոցով, վերադիտելու ենք հեռուստաշոուները շարժական, փոքրաչափ համակարգիչների վրա եւ կարդալու ենք մեր էլեկտրոնային հաղորդագրությունները մեր բջջային հեռախոսների վրա:

Եվ մինչ մենք հարմարվելու ենք տեղեկություն ստանալու մեզ համար ամենաընդունելի այս ձեւերին, սովորական գնումներ եւ առեւտուր անելու եղանակները շարունակելու են զարգանալ: Մենք ցանկանալու ենք ապրանքի եւ նրա արժեքի վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերել այն ձեւով, որ հետո լինի ոչ միայն մեկ տեխնոլոգիական միջոցից տեղափոխել մեկ ուրիշին, այլեւ մի տեղից մյուսը՝ տնից գրասենյակ, մետրո, օդանավակայան, կամ լճափի հանգստյան տնակ: Թվայնացման շնորհիվ մեր աշխատանքը, կենցաղն ու զվարճանքը դառնալու են շարժական եւ ավելի հետաքրքիր:

Հեռուստատեսությունը շատ հզոր եւ միաժամանակ հարուստ միջոց է հաղորդակցության: Դրանում ընդգրկված են ե՛ւ խոսքը (բառերը), ե՛ւ նկարը (պատկերը), ե՛ւ ձայնը (երաժշտությունը): Այդ պատճառով էլ տեղեկատվությանը զուգահեռ շատ արդյունավետ ձեւով կարող է նաեւ զգացմունքներ առաջացնել: Իսկ մենք՝ սպառողներս, գիտենք, որ զգացմունքները մեծ դեր են խաղում մեր կյանքում, նրանք են որոշում ինչ ենք ցանկանում եւ ինչ ենք գնում:

Եվ երբ բիզնեսն ու սպառողները զգացմունքային մակարդակով են կապվում մեկը մյուսի հետ, ապա բիզնեսը սիրված է լինում ավելի լավ արտադրանք թողարկել, այնպիսի արտադրանք, որ համապատասխանի սպառողի պահանջներին:

Այնպես որ թվայնացմանն անցնելու ամբողջ այս գործընթացի նպատակն այն է, որ գործարարները հասկանան, թե ինչքան կարեւոր է ստեղծել ապրանքներ, որոնք զգացմունքային գրավչություն կունենան սպառողների շրջանում:

Սա էլ իր հերթին պահանջում է, որ մենք փնտրենք լավ տեսահաղորդագրություններ պատրաստելու ստեղծագործական նոր մեխանիզմներ: Ինձ համար հրաշալի արտադրանք թողարկող գերադասելի ընկերություններից մեկը «Փինեքլ սիստեմսն» է (կայքի հասցեն՝ www.pinnaclesys.com), որն արտադրում է մատչելի գներով պարզ ու հարմարավետ սարքավորումներ, որոնք էապես հեշտացնում են տեսագրումը եւ խթանում ստեղծագործական մոտեցումն ու դրա արդյունավետությունը:

Քանի որ «Փինեքլի» թիրախը սպառողական շուկան է, ես հայտնաբերել եմ, որ նրա արտադրանքի գերակշռող մասը էապես թեթեւացնում է իմ աշխատանքը: Եթե ես ցանկանում եմ համակարգչի ցանցից որեւէ տեսագրություն փոխադրել ինձ համար մեկ այլ սարքավորման վրա՝ հեռագայում ինքնաթիռում դիտելու համար, ես կարող եմ օգտվել «Փինեքլ վիդեո տրանսֆեր» ծառայությունից, որն ունի USB կայան, որտեղ կարող եմ իմ տեսանյութը հանձնել հիշողության սարքին եւ կարիք չունենալ DVD օգտագործելու: Սա չափազանց պարզ, մատչելի եւ հարմար օգտագործման ձեւ է:

«Փինեքլը» արտադրում է անհրաժեշտ սարքավորումների լայն տեսականի եւ ծրագրեր PC եւ Mac համակարգիչների համար, ինչն ավելի է հեշտացնում տեսանյութերի տեղափոխումը եւ խմբագրման աշխատանքները՝ օգտագործելով ամենասովորական փոքր, շարժական «լեփթոփերը»: Սա նշանակում է, որ ես հեշտությամբ կարող եմ ներառել տեսանյութերը իմ շնորհանդեսների ժամանակ կամ տեսանյութեր պատրաստել եւ ուղարկել այլ կայքերի:

Ես կարող եմ նկարահանել ցույցեր (օգտագործելով իմ բջջային հեռախոսի հնարավորությունները) եւ տեղում հեշտությամբ որոշակի նյութ կազմելով, գրասենյակ տանել ներկայացնելու ղեկավարության քննարկմանը: Եթե մեկ նկարը համազոր է հազար բառի, ապա պատկերացրեք, թե տեսաերիզի հեռարձակումն ինչ արժեք կունենա, հատկապես եթե ժամանակին է կատարված եւ բարձր որակով:

«Փինեքլը» արտադրում է նաեւ փոքր մի հարմարանք, որը կարելի է տեղադրել «լեփթոփի» վրա եւ դարձնել այն HDTV, այսինքն՝ պատկերների բարձրորակ հստակություն ունեցող հեռուստացույց: Այո, ես կարող եմ այդ փոքրիկ սարքը տեղադրել համակարգչիս մեջ եւ հեռուստացույց դիտել, օրինակ, օդանավակայանում, երբ թռիչքս հետաձգված է: Թվայնացված լինելու հետեւանքով պատկերն արտակարգ հստակ է լինելու:

Բայց այս բոլորը՝ 2009 թվականի փետրվարից: Փոփոխությունները դրական արդյունք են տալիս:

Հ. Օ.

Վարդան Մամիկոնյան. «Հայ դասական երաժշտությունը ժամանակակից է»

Վերջին տարիներին երեւանյան համերգասրահներն ամռան կեսից եւ աշնանը տարբեր փառատոների շնորհիվ հագեցած գրաֆիկով են աշխատում եւ հյուրընկալում դասական երաժշտության սիրահար ունկնդրին: Ներկայում ընթացքի մեջ է «Վերադարձի» դասական երաժշտության երկրորդ փառատոնը, որի հեղինակությունն եւ ճանաչումն ձեռք բերելուն չի կասկածում կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Էդուարդ Միրզոյանն ու փառատոնն ավանդական դարձնելու հիմքերն է տեսնում. «Այս հեռանկարն էլ պարտավորեցնում է մեզ. յուրաքանչյուր փառատոն պետք է ներկայանա նորովի եւ չափանիշների ու մակարդակի ընդհանուր հաստատում լինի»:

Այս տարի փառատոնը բացվել է Գերմանիայում բնակվող ջութակահար Սերգեյ Խաչատրյանի եւ «Վերադարձի» փառատոնի նվագախմբի համերգով՝ Վլադիմիր Խաչատրյանի (Գերմանիա) խմբավարությամբ: Այնուհետեւ հոկտեմբերին փառատոնի շրջանակներում հնչեցին եւս 3 համերգ՝ Ավստրիայից, Գերմանիայից ժամանած եւ հայաստանաբնակ 9 հայ երաժիշտների, «Նարեկացի» կամերային նվագախմբի մասնակցությամբ:

«Վերադարձի» փառատոնի նոյեմբերյան առաջին համերգը ֆրանսաբնակ դաշնակահար Վարդան Մամիկոնյանի մենահամերգն է, որ այսօր «Արամ Խաչատրյան» համերգասրահում է: Նախորդած ասուլիսում երաժիշտը մի դիտարկում ընդգծեց. «Խիստ ուրախալի է Հայաստանում դասական երաժշտության ունկնդիրների մեջ մեծ թվով երիտասարդներ տեսնելը, ինչը չեմ կարող ասել եվրոպական երկրների մասին»: Իր իսկ մատնանշած իրականության հիմքը Վարդան Մամիկոնյանը համարեց դասական երաժշտության հասանելիությունը. «Բավական երկար ժամանակ երաժշտական կրթությունը համարյա պարտադիր ուսուցման մակարդակում էր Հայաստանում»:

Անդրադառնալով բուն փառատոնին՝ դաշնակահարը ոչ միայն հայաստանյան ունկնդրին դասական երաժշտության բարձրակարգ կատարումներ ներկայացնելը կարեւորեց, այլեւ տարբեր երկրներում աշխատող հայ երիտասարդ երաժիշտներին հայրենիքում հանդես գալու հնարավորություն ընձեռելը: Ինքը՝ Վարդան Մամիկոնյանը Երեւանում եւ Մոսկվայում մասնագիտական կրթություն ստանալուց հետո՝ 1991-ին հաստատվել է Փարիզում եւ մասնագիտական հարուստ կենսագրություն ունի: Վերջինին հասնելուն, ըստ երաժշտի, ոչ միայն լավ կրթությունն ու օժտվածությունն են նպաստել, այլեւ Եվրոպայում գտնվելը. «Երբ մի վայրում ես, որ զարգացումներին մոտ ես կանգնած, կրճատվում են նաեւ զանազան դժվարություններ, չնայած չեմ կարծում թե Հայաստանում ապրելը հաջողություն ունենալու հնարավորություններից զրկում է՝ մրցանակներ շահել եմ Հայաստանում ապրելիս»:

Այսօր էլ Վարդան Մամիկոնյանը դժվարանում է թեկուզ իր համար պարզել, թե որտեղ է ապրում. «Մտքերով անվերջ Հայաստանում եմ ու Հայաստանի հետ: Եվ այնչափ հաճախ է այս կամ այն երկրում ապրելու անհրաժեշտությունը փոփոխվում, որ դժվարանում եմ հասկանալ, թե որ երկրում եմ ապրում: Բայց փորձում եմ հնարավորինս հաճախ լինել Հայաստանում»: Նվագացանկում հայ կոմպոզիտորների դասական ստեղծագործություններ ներառելով՝ երաժիշտը ոչ միայն դրանք կատարելու իր հակվածությունն է փաստում, այլեւ պարզել է, որ եվրոպացի ունկնդրին դրանք հիմնականում հայտնի չեն, բայց, վստահաբար հետաքրքրական են. «Հայկական դասական երաժշտությունը եվրոպացի ունկնդիրը նախընտրում է: Ուրախ եմ փաստել, որ հայկական դասական երաժշտությունը ժամանակակից է»: Ինչպես Երեւանում, այնպես էլ վաղը Գյումրիում կայանալիք համերգում Վարդան Մամիկոնյանը հանդես է գալու ընդգրկուն ծրագրով:

«Վերադարձի» դասական երաժշտության երկրորդ փառատոնի շրջանակներում մինչեւ հոկտեմբերի վերջ տեղի կունենան թավջութակահար Սուրեն Բագրատունու (ԱՄՆ), դաշնակահար Սթիվեն Պրուսմանի (ԱՄՆ) առանձին եւ Հայաստանի պետական կամերային նվագախմբի հետ համերգները:

ՆԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Բոլորս էլ Թումանյանի թոռներն ենք»

Հոկտեմբերի 10-ին Թեթեյան կենտրոնի դահլիճում տոնական ու հանդիսավոր միջոցառում էր: Այն կազմակերպել էր Թեթեյան մշակութային միությունը՝ ի նշան հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի թոռնուհու՝ գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Իրմա Սաֆրազբեկյան-Թումանյանի ծննդյան տարեդարձի:

Հոբելյանական հանդիսությունը սկսվեց ՀԹՄՄ կենտրոնական վարչության նախագահ Ռուբեն Միրզախանյանի ողջույնի խոսքով: Հիշատակելով անվանի գրականագետի եւ Թումանյանի ժառանգորդի ունեցած մեծ վաստակը թումանյանագիտության ասպարեզում, Ռ. Միրզախանյանը ուրախությամբ նշեց նաեւ պատմական այն փաստը, որը հաստատում է Թեթեյան եւ Թումանյան բանաստեղծների ջերմ մտերմության մասին:

Այժմ Գերմանիայում բնակվող Իրմա Սաֆրազբեկյան-Թումանյան գրականագետի կատարած մեծածավալ աշխատանքին եւ Թումանյան ընտանիքի կենսագրական մանրամասների գիտական ու վավերագրական ուսումնասիրություններին անդրադառնալով, իր խոսքում գրականագետ Ազատ Եղիազարյանը չափազանց կարեւոր համարեց հոբելյարի հետագա աշխատանքը՝ ուսումնասիրությունները ավարտին հասցնելու եւ թումանյանագիտությանը դրանով նպաստելու առումով:

Ելույթ ունեցավ նաեւ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանը եւ որպես ծնունդով լոռեցի, մի առանձնակի ջերմությամբ փաստեց հոբելյարի թումանյանագիտության հանդեպ ցուցաբերած նվիրվածության մասին: Ս. Երիցյանը «Լոռվա Ջոր» հայրենակցական միության անունից շնորհավորեց հոբելյարին եւ մաղթեց բեղմնավոր տարիների կյանք: Անվանի գրականագետին «Ֆ. Նանսեն» շքանշան հանձնեց «Ֆ. Նանսեն» հիմնադրամի գործադիր տնօրեն Ֆելիքս Բախչինյանը:

Այնուհետեւ Հյուսիսային համալսարանի ռեկտոր Բորիս Մակիչյանը հայտարարության կարգով տեղեկացրեց ներկաներին, որ շուտով Ալեք Մանուկյան 15 հասցեում բացվելու է «Վերնատուն» մշակութային կենտրոնը, իսկ 2009-ին մեծ բանաստեղծի ծննդավայրում՝ Դսեղում կկայանա մեծ տոնակատարություն՝ նրա ծննդյան 140-ամյակի կապակցությամբ:

Ջերմ խոսքերին եւ տոնական տրամադրությանը գումարվեցին ՀՀ ժող. դերասան Վլադիմիր Աբաջյանի եւ Սվետլանա Խանումյանի ելույթները: Թումանյանական խոսքի իմաստությունը նրանց ասմունքի շնորհիվ որպես լույս ու թրթիռ հասու եղավ բոլոր ներկաներին:

Այնուհետեւ դահլիճում հնչեց Սարոյի արիան՝ «Անուշ» օպերայից, որն իր ախորժաձայն կատարումով ներկաներին մատուցեց օպերային երգիչ Ռուբեն Սահակյանը:

Թումանյանի թոռնուհուն իր ջերմ ու ստահույզ խոսքն ասաց նաեւ բանաստեղծ, մանկագիր Սուրեն Մուրադյանը:

Այնուհետեւ շնորհակալության ու երախտագիտության խոսքով հանդես եկավ հոբելյարը:

«Դժվար է եւ պատասխանատու՝ լինել Թումանյանի ժառանգը, սակայն այն մեծ սերը, որ նրա շնորհիվ հասել է մեզ, բավական է եղել նվիրումով ու հավատարմորեն կատարելու այն մեծ աշխատանքը, որն առնչվել է Թումանյանի գրական ժառանգությանը», իր խոսքում նշեց գրականագետ Իրմա Սաֆրազբեկյան-Թումանյանը: Նա շնորհակալություն հայտնեց ներկաներին, հատկապես Թեթեյան մշակութային միությանը՝ իր հոբելյարը այսպես գեղեցիկ ձեւով նշելու համար: «Թումանյանը բոլորիս պատիկն է եղել, ուրեմն մենք էլ նրա թոռներն ենք», իր խոսքում այսպիսի համոզմունք հայտնեց Սվետլանա Խանումյանը:

Հոբելյանական հանդիսության վերջում ՀԹՄՄ կենտրոնական վարչության նախագահ Ռ. Միրզախանյանը հավաստեց, որ հավատարիմ մնալով Թեթեյան բանաստեղծի հոգեւոր պատգամներին՝ մշակույթի, գրականության եւ արվեստի մշակների հանդեպ մեծարանքը ոչ միայն պարտականություն է, այլեւ բարձր գիտակցություն:

ԳԱԲՐԻԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՊԹԱՍԵԱԿ ՍՈՅՐՈՒՄ

Պարի առնականությունը գերել է Ժյուրիին

Սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 3-ը Սոչիում կայացած Յուրի Գրիգորովիչի «Աշխարհի երիտասարդ բալետ» երկրորդ միջազգային փառատոնի ոսկին ու արծաթը Հայաստան է բերվել: Այդ գնահատականին են արժանացել Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենապարողները՝ չնայած 36 հազար դրամ աշխատավարձին, զորակոչային տարիքի խնդիրներին:

Մրցույթի երեք փուլերից յուրաքանչյուրում մասնակիցները հանդես են եկել երկուական կատարմամբ: Առաջին փուլում՝ դասական վարիացիա բալետային որեւէ ներկայացումից եւ մոդեռն, որի մասնագետներ Հայաստանում չկան, երկրորդ փուլում՝ կրկին ներկայացվել է դասական վարիացիա եւ ջազ, եզրափակիչում մասնակիցները նվագախմբի հետ համատեղ հանդես են եկել երկու դասական վարիացիաներով: Այս հարցում Հայաստանը ներկայացնող եւ մյուս արտիստներին Ռուդոլֆ Խաչատրյանն է աջակցել՝ հեղինակելով բոլոր ներկայացումները:

Ոսկե մեդալին արժանացել է Ռուբեն Մուրադյանը, Սեւակ Ավետիսյանը վաստակել է երկրորդ՝ արծաթե մեդալ: Չնայած Ժյուրիի խստապահանջությանը, հայ արտիստները նշված հաջողությանն են հասել Կրասնոդարի նվագախմբի հետ ընդամենը մեկ փորձից հետո:

«Երբ Ժյուրին, եւ հատկապես կենդանի լեգենդ Յուրի Գրիգորովիչը, Լավրովսկին մոտենում էին մեզ եւ շնորհակալություն հայտնում, չէինք հասկանում, թե ինչո՞ւ: Ու երբ Գրիգորովիչին հարցրեցինք, թե ինչո՞ւ, նա պատասխանեց. «Շնորհակալություն, քանի որ տղամարդու պարին կարոտ էինք մնացել, հոգնել ենք այն պարայնությունից, որը մեզ մատուցվում է», երեկ մշակույթի նախարարությունում հրավիրված ասուլիսում տեղեկացրեց մրցանակակիր Ռուբեն Մուրադյանը:

Ն. Պ.

Լեւոն Անանյան. «Նաթելլայի պոեզիան առանձնահատուկ է հնչում»

Երիտասարդ ստեղծագործող Նաթելլա Լալաբեկյանը ապրում եւ ստեղծագործում է Լոս Անջելես քաղաքում: Խոստովանում է, թե իր հոգու պարտքն է յուրաքանչյուր գրքի շնորհանդեսը տոնել հայրենիքում: Այդպես էր վեց տարի առաջ, երբ գրողների միությունում նշվեց նրա երկրորդ գրքի շնորհանդեսը:

Ավանդույթը կրկնվեց նաեւ երեկ, երբ գրողների միությունում մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի, մաեստրո Կոնստանտին Օրբելյանի, Վախթանգ Կիկաբիձեի մասնակցությամբ տեղի ունեցավ Նաթելլա Լալաբեկյանի երրորդ՝ «Բազմակետ» բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդեսը:

Երգիչ Վախթանգ Կիկաբիձեն Նաթելլային ճանաչում է մանուկ հասակից ու հաճույքով կարդում նրա բանաստեղծությունները: Կիեւում հյուրախաղերից հետո հատուկ եկել է Երեւան՝ մասնակցելու միջոցառմանը. «Չգալ չէի կարող: Հիացնում են բանաստեղծուհու զգացմունքայնությունն ու անկեղծությունը: Նրա ստեղծագործություններում կարծես միաձուլված են երիտասարդությունն ու հասունությունը, մտածելու, տառապելու, զգացողությունները»:

Նաթելլայի արվեստը բնութագրեց դրամատուրգ Կարինե Խոդիկյանը. «Միայն հեղինակին է հայտնի, թե ստեղծագործելու ընթացքում ինչպիսի պատրանքներ է հյուսվում հոգում եւ ինչպիսի հուզմունքով է այն հանձնում ընթերցողին՝ հույսով, որ ընթերցողն այն կընդունի որպես խոստովանություն: Հասցրել եմ կարդալ Նաթելլայի նոր գիրքը եւ հավատում եմ, որ այդ ծանր փորձությանը նա կարողացավ դիմանալ: Հոգու եւ մտքի, ինտելեկտի եւ զգացմունքների ներդաշնություն կա նրա պոեզիայում»:

ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանին էլ հուզել է Նաթելլայի «Երկու մայրցամաք» բանաստեղծությունը, որը դեգերումների մասին է. «Բանաստեղծուհու երկրորդ եւ երրորդ գրքերի միջեւ հսկայական պոետական հասունություն եմ տեսնում՝ հավատարիմ մնալով դասական պոեզիայի ավանդույթներին բերում է թարմություն: Նաթելլայի ձայնն առանձնահատուկ է հնչում»:

Շնորհանդեսի ավարտին օրվա հերոսուհուն շնորհվեց գրողների միության անդամատոմս:

ՀԱՄԱՐԵՔ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բռնությունն ու ահաբեկությունը Մարկ Ռավենհիլի ընկալմամբ

Սարա Քեյն, Մարկ Ռավենհիլ, Շարլոտ Կեմլի, Փոլ Գոդֆրին եւ այլք համարվում են նոր դրամայի հիմնադիրներ, որոնք ժամանակակից բրիտանական դրամատուրգիան բարձրացրել են համաշխարհային մակարդակի:

«Հայ ֆեստ» միջազգային թատերական փառատոնի շրջանակներում երեւանում է թատերագետ Մարկ Ռավենհիլը, ում Անգլիայում անվանում են «մեր ժամանակի Շեքսպիր»: Ռավենհիլը մի շարք հանրահայտ պիեսների հեղինակ է: Անդրադառնալով բռնությանը՝ ներկայացումներում նա հաճախ անցնում է թույլատրելիի սահմանը: Նրա պիեսները սկանդալային են: Ռավենհիլի նպատակն է ներկայացումներով անդրադառնալ հասարակության մեջ առկա արատավոր երեւույթներին: Թատերագետի վերջին ստեղծագործություններում գերակշռում է հատկապես վախի զգացողության թեման: Նրա հերոսները վախենում են ահաբեկություններից, պատերազմից, բռնություններից, մարդկանց հետ շփումից ու փակվում են չորս պատի մեջ:

«Հայ ֆեստ» փառատոնի ընթացքում նա հայ դերասանների հետ համատեղ մեկ շաբաթում բեմադրել է իր «Կորված դրախտ» պիեսը, որը հայ հանդիսատեսը կտեսնի հոկտեմբերի 11-ին: Ներկայացումը կտեւի 25 րոպե եւ կներկայացվի ռուսերեն լեզվով:

Մինչ պրեմիերան, երեկ տիկնիկային թատրոնում դրամատուրգը հանդիպեց լրագրողներին: «Իհարկե ժամանակը փիչ էր, սակայն հայ դերասանների պրոֆեսիոնալիզմի ու նվիրվածության շնորհիվ կարողացանք հասցնել: «Կորված դրախտ»-ը «Կրակի՛ր, վերցրու գանձն ու կրկնիր» ժողովածուի մի մասն է: Պիեսն անդրադառնում է ահաբեկությանը, որը ես անվանում եմ ժամանակակից պատերազմ: Ստեղծագործության գաղափարն այն է, թե սովորական մարդը հոգեբանորեն պատրաստ է պայքարելու ահաբեկության դեմ», ասաց Ռավենհիլը:

Պիեսի գլխավոր հերոսուհին հանգիստ բնավորությամբ ժամանակակից կին է, որն անընդհատ հարցնում է, թե ինչ պետք է անի, որպեսզի պաշտպանվի ահաբեկություններից:

ԱԶԳ

Մարզական

Այսօր Երեւանի ժամանակով 23.45-ին Բրյուսելի «Ռուա Բոդուեն» մարզադաշտում աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի 3-րդ տուրում Հայաստանի ազգային հավաքականը կսկսի մրցավեճը Բելգիայի ընտրանու հետ: Հանդիպումը կսպասարկի Դանիայի մրցավարական անձնակազմը Պետեր Ռասմուսենի գլխավորությամբ:

ՀՖ հավաքականը Բրյուսել է մեկնել 20 ֆուտբոլիստով, հոկտեմբերի 9-ին: Հավաքի հրավիրած ֆուտբոլիստներից հավաքականի կազմում չեն Համլետ Մխիթարյանն ու Արտավազդ Քարամյանը: Փոխարենը Յան Պոուլսենը թիմի կազմում ընդգրկել է երիտասարդ ֆուտբոլիստներ Հրայր Մկոյանին («Արարատ») ու փյունիկցիներ Հենրիխ Մխիթարյանին, Գեւորգ Ղազարյանին, Արթուր Եդիգարյանին, Կառլեն Մկրտչյանին:

Այսօրվա մրցակիցները տարբեր կերպ են մեկնարկել ընտրական 5-րդ խմբում: Եթե Հայաստանի հավաքականը երկու պարտություն կրելով թուրքերից (0-2) եւ իսպանացիներից (0-4), զբաղեցնում է 5-րդ տեղը, ապա բելգիացիները բավական հաջող են մեկնարկել ու 4 միավորով 3-րդ տեղում են: Մեկնարկային խաղում «Կարմիր սատանաները» (այսպես են բելգիացիներին անվանում կարմիր գույնի հանդերձանքի համար) սեփական հարկի տակ դժվարին հաղթանակ տոնեցին էստոնացիների նկատմամբ (3-2): Երկրորդ տուրում նրանք թուրքերի հետ արտագնա խաղն ավարտեցին ոչ-ոքի (1-1): 31-րդ րոպեին Սոնկը, որ էստոնացիների հետ խաղում 2 գոլ էր խփել, բացեց հաշիվը: Եվ միայն 74-րդ րոպեին 11 մ հարվածի շնորհիվ էմրե Բելեզոլուն փրկեց թուրքերին պարտությունից:

Այսօրվա հանդիպումը Հայաստանի եւ Բելգիայի հավաքականների 5-րդ մրցավեճն է: Ինչ որ չափով «Կարմիր սատանաներին» կարելի է մեր հավաքականի «կնքահայրը» համարել, քանի որ հենց նրանք են եղել մեր ֆուտբոլիստների մրցակիցները պաշտոնական առաջին խաղում: Դա 1994-ի սեպտեմբերի 7-ին էր, Բրյուսելում: Այդ օրը Հայաստանի հավաքականն իր նորամուտը նշեց Եվրոպայի առաջնությունների ընտրական մրցաշարերում՝ անցկացնելով պաշտոնական անդրանիկ հանդիպումը: Նորամուտն անհաջող անցավ: Առդեն 4-րդ րոպեին փորձելով կանխել դաշտի տերերի գրոհը, ՀՖ հավաքականի պաշտպան Երվանդ Կրբաշյանը գնդակը ընդունեց սեփական դարպասը: Խաղավարից 17 րոպե առաջ էլ Դեգրիզը կրկնապատկեց հաշիվը:

Նույնպիսի ավարտ ունեցավ նաեւ մեկ տարի անց՝ հոկտեմբերի 7-ին «Հրազդանում» կայացած մրցախաղը: Այս անգամ բելգիացիներն արդեն առաջին խաղակեսում Լյուկ Նիլիսի դիպուկ հարվածների շնորհիվ 2 անգամ գրավեցին Հարություն Աբրահամյանի պաշտպանած դարպասը եւ 2-0 հաշվով հաղթանակ տոնեցին:

Մրցակիցների հաջորդ հանդիպումը կայացավ գրեթե 11 տարի անց, կրկին Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում: 2006-ի սեպտեմբերի 6-ին «Հանրապետական» մարզադաշտում կայացած խաղը ոչ միայն ընտրական մրցաշարի, այլեւ ՀՖ հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում Իան Պորտերֆիլդի անդրանիկ հանդիպումն էր: Այս անգամ էլ մեր ֆուտբոլիստները չգտան մրցակցի դարպասի բանալին: Իսկ հյուրերը 41-րդ րոպեին Դանիել վան Բոյատենի խփած միակ գոլի շնորհիվ կրկին հաղթեցին: Էլ ավելի անհաջող դասավորվեց խաղը Բելգիայում, 2007-ի հոկտեմբերի 17-ին: Իան Պորտերֆիլդի մահից հետո այդ խաղում մեր ֆուտբոլիստների գործողությունները ղեկավարում էին Թոմ Զոնսն ու Վարդան Մինասյանը: Առաջին խաղակեսում մեր ֆուտբոլիստներին հաջողվեց դարպասն անառիկ պահել, իսկ ահա 2-րդ խաղակեսում բելգիացիներն ընդամենը 13 րոպեում 3 գոլ խփեցին ու խոշոր հաշվով հաղթանակ տարան: Այսպիսով, Բելգիայի հավաքականի հետ մինչեւ օրս անցկացրած չորս խաղում էլ մեր ընտրանին պարտվել է 0-8 ընդհանուր հաշվով: «Կարմիր սատանաները» ՀՖ հավաքականի ամենաանհարմար մրցակիցներն են: Ավելի անհաջող մեր հավաքականը

«Կարմիր սատանաները» ՀՖ հավաքականի ամենաանհարմար մրցակիցներից են

Բուքմեյքերներն էլ չեն հավատում ՀՖ հավաքականի հաղթանակին

նը երկու պարտություն կրելով թուրքերից (0-2) եւ իսպանացիներից (0-4), զբաղեցնում է 5-րդ տեղը, ապա բելգիացիները բավական հաջող են մեկնարկել ու 4 միավորով 3-րդ տեղում են: Մեկնարկային խաղում «Կարմիր սատանաները» (այսպես են բելգիացիներին անվանում կարմիր գույնի հանդերձանքի համար) սեփական հարկի տակ դժվարին հաղթանակ տոնեցին էստոնացիների նկատմամբ (3-2): Երկրորդ տուրում նրանք թուրքերի հետ արտագնա խաղն ավարտեցին ոչ-ոքի (1-1): 31-րդ րոպեին Սոնկը, որ էստոնացիների հետ խաղում 2 գոլ էր խփել, բացեց հաշիվը: Եվ միայն 74-րդ րոպեին 11 մ հարվածի շնորհիվ էմրե Բելեզոլուն փրկեց թուրքերին պարտությունից:

Այսօրվա հանդիպումը Հայաստանի եւ Բելգիայի հավաքականների 5-րդ մրցավեճն է: Ինչ որ չափով «Կարմիր սատանաներին» կարելի է մեր հավաքականի «կնքահայրը» համարել, քանի որ հենց նրանք են եղել մեր ֆուտբոլիստների մրցակիցները պաշտոնական առաջին խաղում: Դա 1994-ի սեպտեմբերի 7-ին էր, Բրյուսելում: Այդ օրը Հայաստանի հավաքականն իր նորամուտը նշեց Եվրոպայի առաջնությունների ընտրական մրցաշարերում՝ անցկացնելով պաշտոնական անդրանիկ հանդիպումը: Նորամուտն անհաջող անցավ: Առդեն 4-րդ րոպեին փորձելով կանխել դաշտի տերերի գրոհը, ՀՖ հավաքականի պաշտպան Երվանդ Կրբաշյանը գնդակը սեփական դարպասը: Խաղավարից 17 րոպե առաջ էլ Դեգրիզը կրկնապատկեց հաշիվը:

Նույնպիսի ավարտ ունեցավ նաեւ մեկ տարի անց՝ հոկտեմբերի 7-ին «Հրազդանում» կայացած մրցախաղը: Այս անգամ բելգիացիներն արդեն առաջին խաղակեսում Լյուկ Նիլիսի դիպուկ հարվածների շնորհիվ 2 անգամ գրավեցին Հարություն Աբրահամյանի պաշտպանած դարպասը եւ 2-0 հաշվով հաղթանակ տոնեցին:

Մրցակիցների հաջորդ հանդիպումը կայացավ գրեթե 11 տարի անց, կրկին Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում: 2006-ի սեպտեմբերի 6-ին «Հանրապետական» մարզադաշտում կայացած խաղը ոչ միայն ընտրական մրցաշարի, այլեւ ՀՖ հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում Իան Պորտերֆիլդի անդրանիկ հանդիպումն էր: Այս անգամ էլ մեր ֆուտբոլիստները չգտան մրցակցի դարպասի բանալին: Իսկ հյուրերը 41-րդ րոպեին Դանիել վան Բոյատենի խփած միակ գոլի շնորհիվ կրկին հաղթեցին: Էլ ավելի անհաջող դասավորվեց խաղը Բելգիայում, 2007-ի հոկտեմբերի 17-ին: Իան Պորտերֆիլդի մահից հետո այդ խաղում մեր ֆուտբոլիստների գործողությունները ղեկավարում էին Թոմ Զոնսն ու Վարդան Մինասյանը: Առաջին խաղակեսում մեր ֆուտբոլիստներին հաջողվեց դարպասն անառիկ պահել, իսկ ահա 2-րդ խաղակեսում բելգիացիներն ընդամենը 13 րոպեում 3 գոլ խփեցին ու խոշոր հաշվով հաղթանակ տարան: Այսպիսով, Բելգիայի հավաքականի հետ մինչեւ օրս անցկացրած չորս խաղում էլ մեր ընտրանին պարտվել է 0-8 ընդհանուր հաշվով: «Կարմիր սատանաները» ՀՖ հավաքականի ամենաանհարմար մրցակիցներն են: Ավելի անհաջող մեր հավաքականը հանդես է եկել Իսպանիայի ընտրանու դեմ՝ 5 խաղերն էլ տանուլ տալով ընդհանուր 0-14 հաշվով:

Ինչ խոսք, այսօրվա խաղում մեր ֆուտբոլիստներին լուրջ փորձություն է սպասում՝ հաշվի առնելով մրցակցի ուժն ու նախորդ հանդիպումներում ՀՖ հավաքականի ցուցադրած տխուր ու անորակ խաղը: Նշենք, որ բուքմեյքերներն էլ չեն հավատում մեր հավաքականի հաղթանակին՝ գնահատելով չափազանց բարձր գործակցով (12): Իսկ ահա բելգիացիների հաղթանակի գործակիցն ընդամենը 1,18 է: Ոչ-ոքին գնահատվել է 5 գործակցով:

Բելգիայի հավաքականի կենսագրությունը սկսվում է 1904-ի մայիսի 1-ից: Այդ օրը բելգիացիները ոչ-ոքի (3-3) ավարտեցին ընկերական մրցախաղը ֆրանսիացիների հետ: Հավաքականի առաջին մասնակցությունն Անտվերպենում 1920-ին կայացած ամառային օլիմպիադային պսակվեց հաջողությամբ: Հաղթելով Իսպանիայի (3-1) եւ Հոլանդիայի (3-0) հավաքականներին, բելգիացիները եզրափակիչում մրցեցին Չեխոսլովակիայի ֆուտբոլիստների հետ: Խաղի ընթացքում Բելգիայի հավաքականն առջեւում էր 2-0 հաշվով: Հյուրերը, դժգոհ մրցավարությունից, մինչեւ խաղի ավարտը լքեցին խաղադաշտը: Օլիմպիական չեմպիոնի տիտղոսը բելգիացիների ամենամեծ եւ միակ նվաճումն է: 1980-ին «Կարմիր սատանաները» մտել են Եվրոպայի առաջնության եզրափակիչ, որտեղ պարտվել են ԳՖՀ-ի ընտրանուն (1-2), իսկ 1986-ի աշխարհի առաջնությունում զբաղեցրել են պատվավոր 4-րդ տեղը: Կարծում ենք, տարեց ֆուտբոլասերներից շատերն այսօր էլ հիշում են 1982-ի աշխարհի առաջնությունում Խորեն Հովհաննիսյանի խփած հրաշալի գոլը Բելգիայի հավաքականի դարպասը, որը 1-0 հաշվով հաղթանակ պարգեւեց ԽՍՀՄ հավաքականին:

Վերջին շրջանում բելգիական ֆուտբոլում առաջընթաց չէր նկատվում: 2002-ից սկսած հավաքականին չէր հաջողվում աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների եզրափակիչ փոքի ոտեգիր նվաճել: Եվ ահա Պեկինի օլիմպիադայում Բելգիայի օլիմպիական հավաքականը հաջող խաղ ցուցադրեց՝ հասնելով մինչեւ կիսաեզրափակիչ: Իրենց լավ դրսեւորեցին երիտասարդ ֆուտբոլիստներ Վենսան Կոմպանին, Սթիվեն Դեֆուրը, Կեւին Միրալասը, Թոմաս Վերմալենը, Յան Վերտոնգենը, Մուսա Դեմբելեն, որոնք արդեն հայտնվել են ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Ռենե Վանդերեյկենի տեսադաշտում: Եվրո-2008-ի ընտրական մրցաշարի ժամանակ 55-ամյա մարզիչը նոր ֆուտբոլիստներ ընդգրկեց Բելգիայի հավաքականում՝ հիմք դնելով նոր թիմի ստեղծմանը: Ի դեպ, 1998-ից սկսած Բելգիայի հավաքականին առաջին անգամ հաջողվեց ընտրական մրցախաղերին սկսել հաղթանակով: Էստոնացիների հետ խաղաշարը սկսել հաղթանակով: Էստոնացիների հետ խաղաշարը սկսել հաղթանակով: Հայտարարել էր, որ իր թիմին ոչ հետո Վանդերեյկենը հայտարարել էր, որ իր թիմին ոչ հետո Վանդերեյկենը հայտարարել էր, որ իր թիմին ոչ հրաշալի առաջադրանք է սպասում: Իսկ թե ինչպիսին կլինի հրաշալի առաջադրանք է սպասում: Իսկ թե ինչպիսին կլինի հրաշալի առաջադրանք է սպասում: Իսկ թե ինչպիսին կլինի, ցանկալի կլինի, որ ՀՖ հավաքականի եւ նրա գլխավոր մարզիչ Յան Պոուլսենի ճակատագիրը, հայտնի կդառնա այսօրվա եւ հոկտեմբերի 15-ին Բոսնիայի ընտրանու հետ կայանալիք մրցախաղերից հետո: Իհարկե, ցանկալի կլինի, որ Պոուլսենն էլ իր սաներով հպարտանալու առիթ ունենա:

«Ժալգիրիսը» հայտնվել է սնանկացման եզրին

Բասկետբոլի «Ժալգիրիս» ակումբը մոտ ժամանակներս հնարավոր է անվճարունակ ճանաչվի: Ամռանը ակումբի ղեկավարության եւ հնարավոր հովանավորի միջեւ բանակցություններն անհաջողության էին մատնվել, քանի որ «Ժալգիրիսը» պարտքեր ունի: Լրատվամիջոցների տեղեկացմամբ, արդեն մի քանի ամիս թիմի անդամներն աշխատավարձ չեն ստացել: Թեեւ Գոմելսկու անվան գավաթի խաղարկությունում կաուսասցի բասկետբոլիստները գերազանցեցին Եվրոպայի ուժեղագույն ակումբներ ԲԿՄԱ-ին ու «Պանաթինաիկոսին», սակայն բալթիական լիգայում արդեն երկու անընդմեջ պարտություն են կրել: Աշխատավարձի չվճարման պատճառով «Ժալգիրիսի» բասկետբոլիստները հրաժարվում էին «Վալմիերի» հետ խաղում խաղահրապարակ դուրս գալ: Եթե այս վիճակը շարունակվի, ապա թիմի առաջատար խաղացողները կհեռանան: Օրինակ՝ կենտրոնական Ռասկո Վարդեյով արդեն հետաքրքրվում է ռուսական «Ենիսեյը»:

ԲՈՆՅՔՍՄՈՐՏ

Վիտալի Կլիչկոն վերադառնում է ռինգ

Այսօր Բեռլինում տեղի կունենա Վիտալի Կլիչկոյի երկար սպասված վերադարձը պրոֆեսիոնալ ռինգ: WBC-ի վարկածով գերծանրաքաշային կարգի աշխարհի պատվավոր չեմպիոն Վիտալի Կլիչկոն կմենամարտի նույն վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Սեմյուել Պիտերի հետ: Այդ հանդիպումը հսկայական հետաքրքրություն է ներկայացնում: Բեռլինի մարզասրահի բոլոր տոմսերը վաղուց սպառվել են: Բուքմեյքերները նախապատվությունը տալիս են Վիտալի Կլիչկոյին՝ հաղթանակը գնահատելով 1,45 գործակցով: Պիտերի հաղթանակի գործակիցը 2,80 է, իսկ ոչ-ոքին գնահատվել է 21 գործակցով:

Վերջին անգամ Վիտալի Կլիչկոն ռինգ էր դուրս եկել գրեթե չորս տարի առաջ: 2004-ի դեկտեմբերի 11-ին Վիտալին 8-րդ ռաունդում տեխնիկական նոկաուտով հաղթել էր Դենի Ուիլյամսին եւ պահպանել WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը: Սակայն հետագայում ծանր վնասվածքի պատճառով նա 2005-ի ավարտին վճռեց հրաժեշտ տալ պրոֆեսիոնալ ռինգին: Անհաջող փորձեր կատարելով ընտրվելու Կիեւի քաղաքապետի պաշտոնում, ապաքինվելով վնասվածքից, Վիտալի Կլիչկոն որոշեց վերադառնալ մեծ սպորտ: Թեեւ մեծ դժվարությամբ, սակայն հաջողվեց Սեմյուել Պիտերի հետ համաձայնության գալ մենամարտի անցկացման հարցում: Կլիչկոն մարզումներն անցկացնում էր ավստրիական Տիրոլ քաղաքում:

Օրերս տեղի ունեցավ երկու բոնցֆամարտիկների համատեղ մամուլի ասուլիսը մենամարտից առաջ: Նախատեսված էր, որ երկու բոնցֆամարտիկները համատեղ չեմպիոնական գոտին պետք է հանձնեն WBC-ի նախագահ Խոսե Սուլեյմանին: Սակայն նիգերիացին, որ ավելի ուշ էր ներկայացել ասուլիսին, Վիտալիի ձեռքից փախցրեց չեմպիոնական գոտին ու դուրս եկավ դահլիճից: Այս առնչությամբ Վիտալին հետեւյալն է ասել. «Միանշանակ է, որ Պիտերի նյարդերը կարգին չեն: Չդիմացավ հասարակ փորձությանը: Այդ դեպքում ինչ է լինելու նրա հետ ռինգում: Խորհուրդ կտամ «նիգերիացի մղձավանջին» դիմել համապատասխան մասնագետի: Պիտերի հետ մենամարտին հիանալի եմ պատրաստվել, առողջ եմ, ինչպես ցուլը: Կարծում եմ, որ առաջիկա մենամարտում հաղթող կճանաչվեմ: Ես երկու անգամ արդեն մենամարտել եմ աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար: Առաջիկա մենամարտը 3-րդը կլինի: Իսկ ինչպես հայտնի է, Աստված երրորդությունն է սիրում»:

Պիտերի մենեջեր Իվայլո Գոսցեւը գտնում է, որ Սեմյուելը ոչ միայն մինչեւ 9-րդ ռաունդը նոկաուտի կենթարկի Կլիչկոյին, այլեւ հնարավորություն ունի դառնալու աշխարհի բացարձակ չեմպիոն: Իսկ ահա աշխարհի նախկին չեմպիոն Օլեգ Մասկաեւը, որին այս տարվա մարտի 8-ին Պիտերը հաղթել էր տեխնիկական նոկաուտով, համոզված է, որ հաղթելու է Վիտալի Կլիչկոն: Վերջինիս կրտսեր եղբայր Վլադիմիրն էլ հույս ունի, որ իրենց ընտանիքում չեմպիոնական երկու գոտի կլինի, իսկ Վիտալին կհաղթի նոկաուտով: Այլ կարծիքի են աշխարհի նախկին չեմպիոններ Կրիս Բերդն ու Տոնի Զեյմսը: Ըստ Բերդի, երկարատեւ ընդմիջումը մարզական կարիերայում թույլ չի տա Կլիչկոյին «գահընկեց» անել Պիտերին: Իսկ Զեյմսը գտնում է, որ նիգերիացին կհաղթի նոկաուտով:

Նալբանդյանը քառորդ եզրափակիչում է

Արգենտինահայ թենիսիստ Դավիթ Նալբանդյանը Ստոկհոլմի մրցաշարում իր երկրորդ հաղթանակը տոնեց: Նրա մրցակիցը շվեդ Յոահիմ Յոհանսոնն էր: Հաղթանակի համար Նալբանդյանին բավարարեց երկու խաղափուլը (6-3, 6-2): Քառորդ եզրափակիչում նրա մրցակիցը կլինի իսպանացի Ալբերտ Մոնտանյեսը: Վերջինս երկրորդ փուլում պայքարից դուրս էր մղել շվեյցարացի Ջորջ Բասլին (1-6, 6-3, 6-2): Պայքարը կշարունակեն նաեւ Նիեմինենը, Էռնանդեսը, Սոդերլինգը, Շուլերը, Անչիչն ու Նիշիկորին:

Կա՛մ հաղթանակ, կա՛մ պարտություն

Սանկտ Պետերբուրգում ընթացող շախմատի Չիգորինի հուշամրցաշարի 7-րդ տուրն անհաջող էր Վլադիմիր Պոդոսյանի համար: Նա սեւերով պարտվեց Անատոլի Դոնսկոյին: Հետաքրքրական է, որ հայ շախմատիստը դեռեւս ոչ-ոքի արդյունք չի գրանցել իր օգտին: Կայացած 7 պարտիաներից 3-ում նա հաղթել է, 4-ում՝ պարտվել: 3 միավորով Պոդոսյանը 87-րդ տեղում է:

Առյուսակը 6 միավորով գլխավորում է Վլադիմիր Բելովը, որը հաղթեց Բորիս Սավչենկոյին: 5,5-ական միավոր ունեն Ֆարուկ Ամոնատովը, Անդրեյ Զոնտախը, Սանան Սյուգիրովը, Վալերի Պոպովն ու Սպարտակ Վիսոչինը:

Մեդալների հարուստ ավարտ

Կարատեի Հայաստանի հավաքականը հաջող ելույթ ունեցավ ԱՄՆ-ի Գլենդեյլ քաղաքում կայացած միջազգային խոշոր մրցաշարում: Մեր մարզիկներն ընդհանուր առմամբ նվաճեցին 18 մեդալ, որից 11-ը՝ ոսկե, 6-ն՝ արծաթե, 2-ը՝ բրոնզե: Մեր մարզական պատվիրակության ղեկավարն էր կարատե դո ազգային ֆեդերացիայի նախագահ Գրիգոր Միքայելյանը: Նախատեսվում է մեր կարատեիստների մասնակցությունը նոյեմբերին Տոկիոյում կայանալիք միջազգային մրցաշարին:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Ծանուցում

Համաշխարհային հայկական կոնգրեսը եւ Ռուսաստանի հայերի միությունը հայտարարում են 2008 թ. ստեղծագործական եւ գիտական լավագույն աշխատանքի

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային հայկական կոնգրեսը (ՀՀԿ) եւ Ռուսաստանի հայերի միությունը (ՌՀՄ) մեծ ուշադրություն են դարձնում Հայաստանի գիտական եւ ստեղծագործական մտավորականության գործունեության ակտիվացմանը, օժանդակում հիմնախնդիրների լուծմանը: Այդ աշխատանքները իրագործվում են ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի եւ ստեղծագործական միությունների հետ համագործակցությամբ, տարբեր ծրագրերով ու համատեղ միջոցառումներով:

ՀՀԿ եւ ՌՀՄ կողմից ստեղծագործական միությունների հետ 2007թ.-ին հայտարարված մրցույթը մի նոր խթան հանդիսացավ գրողների, ժուռնալիստների համար: «Հայը 21-րդ դարասկզբին» թեմայով մրցանակների արժանացան երեք գրող, «Հայրենիք-սփյուռք, սփյուռք-սփյուռք» թեմայով մրցանակներ ստացան յոթ ժուռնալիստ:

Այս տարի Համաշխարհային հայկական կոնգրեսը եւ Ռուսաստանի հայերի միությունը ընդլայնել են իրենց գործունեության ոլորտը՝ մրցանակներ սահմանելով նաեւ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, նկարիչների, կոմպոզիտորների միությունների համար: Մրցանակային ընդհանուր ֆոնդը 80.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ է:

Մրցանակաբաշխության պայմանները.

1. Հայաստանի գրողների միություն.

Թեման՝ «Հայը 21-րդ դարասկզբին» 2008 թ. անտիպագիր գործերի (վեպ, արձակ) համար, մրցանակային ֆոնդը՝ 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ.

առաջին մրցանակ	$7000
երկրորդ մրցանակ	$4500
երրորդ մրցանակ	$2500

2. Հայաստանի ժուռնալիստների միություն.

Թեման՝ «Հայաստանը համայն հայության հայրենիքն է» 2008թ. լրագրողական լավագույն հրապարակման համար, մրցանակային ֆոնդը՝ 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ հետեւյալ անվանակարգերով.

1. Հայաստանի Հանրապետությունը աշխարհի բոլոր հայերի հայրենիքն է, հպարտությունը
2. Ազգային միասնությունը՝ հայրենիքի հզորացման գրավական
3. Աղրել Հայաստանով եւ Հայաստանի համար
4. Ժողովուրդն է երկրի տերը, զինվորն ու մշակը
5. Հոգեւոր հայրենիքի սահմանները

Մրցանակային ֆոնդը հավասարապես կբաշխվի նշված անվանակարգերում հաղթողների միջեւ:

3. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա.

«Լավագույն գիտական աշխատանք» հայագիտության, հասարակական, բնական, ճշգրիտ, տեխնիկական գիտությունների եւ ինֆորմատիկայի բնագավառներում, 2007թ. հրատարակված կամ արտերկրում պատենտավորված աշխատանքների համար, մրցանակային ֆոնդը՝ 30.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Մրցանակային ֆոնդը հավասարապես կբաշխվի նշված բնագավառներում հաղթողների միջեւ:

4. Հայաստանի նկարիչների միություն.

Թեման՝ «Հայաստանը եւ հայաստանցիները նկարչի աչքերով», մրցանակային ֆոնդը՝ 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ.

գեղանկար	$4000
քանդակ	$3000
գրաֆիկա	$1500
դեկորատիվ արվեստ	$1500

5.Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միություն.

«Հայ ժամանակակից կոմպոզիտորական արվեստի ստեղծագործական ձեռքբերում» կոմպոզիտորական աշխատանքների համար, մրցանակային ֆոնդը՝ 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ.

կամերային նվագախմբի համար	$3000
մենակատարների անսամբլի համար	$3000
երգչախմբային ստեղծագործություն	$2500

«Հայ երաժշտագիտության զարգացման նոր հեռանկարներ» խորագրով

երաժշտագիտական ստեղծագործություն	$2500

Հայաստանի ստեղծագործական միությունների կողմից հայտարարված մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել միայն տվյալ կազմակերպությունների անդամները: **Նյութերի ներկայացման վերջին ժամկետը մինչեւ 2009թ. հունվարի 31-ը:**

Ծանոթություն. մրցույթներն անցկացնող կազմակերպությունները կարող են մրցույթի կազմակերպչական ծախսերի համար օգտագործել մրցանակային ֆոնդի մինչեւ 10%-ը, իսկ կոմպոզիտորների միությունը, ելնելով ոլորտի առանձնահատկություններից, մինչեւ 25 տոկոսը:

Համաշխարհային հայկական կոնգրես
Ռուսաստանի հայերի միություն

Մրցանակաբաշխության հետ կապված բոլոր հարցերով կարող եք դիմել՝

*Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության հայաստանյան մասնաճյուղի գրասենյակ՝ **51 04 42***
*Հայաստանի գրողների միություն՝ **56 38 11***
*Հայաստանի կոմպոզիտորների միություն՝ **52 47 02***
*Հայաստանի ժուռնալիստների միություն՝ **56 12 76, 56 14 47***
*Հայաստանի նկարիչների միություն՝ **56 48 53, 56 47 24***
*ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա՝ **52 75 30, 52 70 31***

32-ԱՄՅԱ ՀԱՇՄԱՆԴԱՄԸ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ



32 տարեկան Հարություն Թովմասյանը ղարաբաղյան պատերազմի մասնակից է, եղել է Զանգելանի, Հորադիզի ազատամարտերի անմիջական մասնակիցը: Հոդացավերի ոչ լիարժեք բուժման պատճառով երկու անչափահաս երեխաների հայրն առաջին կարգի հաշմանդամ է դարձել՝ գամվելով շարժասայլակին: Հարություն Թովմասյանը շտապ վիրահատության կարիք ունի, որի համար պահանջվում է 6 հազար ԱՄՆ դոլար գումար: Պատերազմի մասնակիցը բարեգութ մարդկանց աջակցությունն է հայցում:

Հեռ. +37493030014, +37410489224

Արժութային հաշիվը (Հայաստանից)

Տարադրամի տեսակը. AMD
Բանկային տվյալներ. ՎՏԲ բանկ 35 բաժանմունք Շենգավիթ, Երեւան
h. 160690003316, Թովմասյան Հարություն

Արժութային հաշիվը (Ռուսաստանից)

Տարադրամի տեսակը՝ USD
:56 INTERMEDIARY: THE SAVINGS BANK of the RUSSIAN FEDERATION, MOSCOW
SWIFT CODE SABRRUMM
:57 BENEFICIARY's BANK: 30111840600000000065
'VTB BANK (ARMENIA)' CJSC, YEREVAN,ARMENIA,
SWIFT: ARMJAM22
BRANCH: SHENGAVIT BRANCH
:59 BENEFICIARY: TOVMASYAN HARUTYUN
Account N 160690007465

Արժութային հաշիվը (բոլոր երկրներից բացի Ռուսաստանից)

Տարադրամի տեսակը՝ USD
: 56 INTERMEDIARY: AMERICAN EXPRESS BANK LTD, NEW YORK
SWIFT CODE: AEIBUS33
New York Agency, P. O. Box 740, New York, NY 10008
: 57 BENEFICIARY's BANK: 740357
'VTB BANK (ARMENIA)' CJSC, YEREVAN,ARMENIA,
SWIFT:ARMJAM22
BRANCH 35
:59 BENEFICIARY: TOVMASYAN HARUTYUN
Account N 160690007465

Սարերի գարունը մեկ գավաթի մեջ

ՍԱՐԻ ԹԵՅ

ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՑԻ ԸՆՏԻՐ ԹԵՅ

MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA

25 փաթեթ մեկ տուփի մեջ
և ընդամենը 1-2 ոռոճից կարող եք վայելել ընտիր որակի ուրցի թեյ

առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը

Մեծաքանակ գնումների համար զանգահարել 47-27-20, 47-03-63

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-08/55» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **ՀՀ տարածքային կառավարման նախարարության կարիքների համար գույքի ձեռքբերման նպատակով:** Գնանշման հարցման հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինվեստբանկ», Հ/Հ 247230066158 «Բեջ-Գալ» ՍՊԸ -ի հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, հանձնաժողովի քարտուղար է. Բոտնուչյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 12:00:

«Էկոնոմիկա եւ Իրավունք» կենտրոն
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԱՐՏԱՀԵՐԹ ՍԵՄԻՆԱՐ - ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

կազմակերպությունների ղեկավար կազմի համար

- փոփոխությունների ներկայացում,
- բարդ իրավիճակների քննարկում եւ պարզաբանում,
- հարցերի պատասխաններ

«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԿԵՆՏՐՈՆ
Ս. Բաղրամյան 24դ.
54-24-81, 54-74-81

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 10.10.2008 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	307.37
EUR	1	ԵՎՐՈ	418.21
RUR	1	Ռուս. ռուբլի	11.76
GEL	1	Վրաց. լարի	217.68

ՁՈՒԱՅԴԻՐ ՀԱՄԱՐ ՅԱՏԿԱՑՆԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 10.10.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տարանում՝ Արշակունեաց 2